Դյադյուշևա Լ. Պ. –ն իր հոդվածում նշում է, որ ինտեգրված դասը հանդիսանում է միջոց՝ հաղորդակցական հմտությունների զարգացման համար՝ օտար լեզուների դասավանդման շրջանակներում: Դպրոցի արդիականացման ընթացքում կրթության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են աշակերտի ազատ դաստիարակությանը, ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինքնահաստատմանը, ինքնուրույնության զարգացմանը, մրցակցայնությանը: Օտար լեզուների դասավանդման նպատակը հանդիսանում է հաղորդակցական կարողությունների ձևավորումը, ինչը զուգակցվում է սոցիալ-մշակութային գիտելիքների ձեռք բերմամբ, քանի որ անհնար է պատկերացնել հաղորդակցում առանց հաշվի առնելու սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ օտար լեզվի ուսուցման մեջ առանձնահատուկ տեղ է գրավում տվյալ ազգի մշակույթի ուսումնասիրությունը: Օտար լեզվի դասավանդումն ինքնին բարդ գործընթաց է և պահանջում է ժամանակ, քանի որ աշակերտը պետք է զարգացնի ունկնդրական, խոսակցական, ընթերցական և գրավոր մի շարք հմտություններ: (Дядюшева 2020:1) Մերոդիստներ Ի.Լ. Բիմը և Մ.Ջ. Բիբուլետովան գտնում էին, որ օտար լեզվի ուսուցումը ինտեգրված համակարգում ուղղված է աշակերտների բազմակողմանի զարգացմանը, նրանց ընդհանուր կրթությանը և դաստիարակությանը (սրան հնարավոր է հասնել տարբեր առարկաների ինտեգրման միջոցով): Այս պարագայում ինտեգրված դասերը օգնում են աշակերտի մոտ ձևավորել աշխարհի մեկ ամբողջական պատկեր, որտեղ օտար լեզուն համարվում է հաղորդակցման, աշխարհը ճանաչելու միջոց:

Այդ նպատակի իրականացման համար ուսուցիչը ստեղծում է իրական կամ երևակայական իրավիճակներ, որտեղ խոսքի միջոցով աշակերտները հնարավորություն են ունենում զարգացնելու իրենց խոսքային հմտությունները: Օտար լեզուների դասն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով առանձնացվում և կիրառում են աշխատանքային տարբեր հնարներ, քանի որ դժվար է տիրապետել լեզվին՝ չգտնվելով այդ լեզվով խոսող երկրում:

Ինտեգրված դասերը լավ է նկարագրել Երեմինա Ե. Ա.՝ գրելով, որ ինտեգրված դասերի շնորհիվ միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը (Еремина 2012:3):

Ուսումնառության ընթացքում աշակերտների աշխատանքի արդյունավետությունը փաստում են մի շարք այլ հանգամանքներ: Աշակերտը կիսում է պատասխանատվություն ուսուցչի հետ, քանի որ ինֆորմացիայի միակ աղբյուրը այլևս ուսուցիչը չէ:

Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Դասը չի դիտվում աշակերտների կողմից սոսկ որպես երևույթ, որը պետք է անգիր սովորել: Ավանդական դասի կառուցված շարունակական կիրառումը կարող է առաջացնել հոգնածություն և ծանծրույթ: Ինտեգրված դասի դեպքում դրանք վերանում են, դասը խթանում է հետաքրքրություն և աշխուժություն:

Ինտեգրված դասերը հաճախ համագործակցային, հետազոտական, ստեղծագործական են և ուղեկցվում են բացահայտումներով: Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ այն աշխարհի մասին, որտեղ նա ապրում է: Ինտեգրումը ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը (Коноваленко 2014:2):

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:
2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:
3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:
4. Ուսումնական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից (Դավթյան 2007:58-59):

Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները: Ինտեգրման ձևը կախված

է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից (Кочеткова 2020:3):

Որպեսզի հասկանանք ինտեգրված դասերը ինչպես են զարգացնում աշխարհայացքը կարևոր է հասկանալ՝ այն ինչ է:

Աշխարհայացքը մարդ-աշխարհ հարաբերությունների շրջանակներում աշխարհի մասին և այդ աշխարհում մարդու տեղի և դերի մասին առավել ընդհանուր հայացքների համակարգ է: Այն մարդու ընդհանրացված գիտելիքների, հայացքների, համոզմունքների իդեալների, արժեքային կողմնորոշումների, ճանաչողության և գործունեության սկզբունքների միասնությունն է, որում արտահայտվում են բնության, հասարակության, մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, աշխարհի համընդհանուր ընկալումը, մարդու կենսական դիրքորոշումները, դրսևորումներն ու գործողությունները (Ասատրյան 2017:290):

Ինչպես գրում է Յու.Ամիրջանյանը մարդու (աշակերտի) աշխարհայացքի ձևավորումը կախում ունի նրա անհատականությունից: Աշխարհայացքի ձևավորման մեջ մեծ դեր են կատարում աշակերտի ներքին բնությունը, տրամադրվածությունը, պատրաստակամությունը, առաջադրված նպատակին հասնելու վճռականությունը, որին նպաստում են կամքի ուժն ու համառությունը: Կամքը համոզմունքների ու զգացմունքների ամբողջականության մեջ աշակերտին մղում է հիմնավորված գործողությունների, արարքների (Ամիրջանյան 2005: 328): Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ սովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի գործնական բաղադրիչը:

Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Ինտեգրված դասը առանձնանում է նրանով, որ կապված է ոչ միայն դպրոցական առարկաների, այլ նաև հասարակության, հասարակական կյանքի, մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների հետ: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն (Kelly 2001:553):

Ինտեգրված ծրագրի առանձնահատկություններ են.

- զարգացնել երեխաների վերաբերմունքը, հմտությունները և գիտելիքները
- կապեր հաստատել ուսումնական ծրագրի բոլոր առարկաների միջև, գործունեություններ, որոնք ապահովում են մի շարք ունակություններ

- կազմակերպել այնպիսի դասեր, որոնք նախաձեռնված և ուղղորդված են թե՛ ուսուցիչների և թե՛ երեխաների կողմից
- ստեղծել աշակերտների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման համար համապատասխան միջավայր
- համադրել առարկաները
- օգտագործել նախագծեր ուսումնառության ընթացքում
- խրախուսել բացի դասագրքից այլ աղբյուրների օգտագործումը
- կապեր հաստատել տարբեր հասկացությունների միջև
- ստեղծել ուսանողական «ճկուն» խմբեր
- տալ ինքնագնահատման և փոխադարձ գնահատման հնարավորություն (Kelly 2001:553-554):
- Ըստ Կ. Մերիլինի՝ ուսումնական ծրագրի ինտեգրումն իրականացվում է՝
 - թեմաների օգտագործմամբ,
 - նախագծերի օգտագործմամբ,
 - անհատական և փոքր խմբային ուսումնասիրությունների կիրառմամբ:
 - Ինտեգրված դասերի բովանդակությունը կարող է ներառել (Stables 2010:2)՝
 - ընդհանուր գաղափար,
 - ընդհանուր հայեցակարգ,
 - ընդհանուր տարաբնույթ կարգապահական խնդիր:

Կարելի է ենթադրել, որ ինտեգրված դասերը միտված են աշակերտի բազմակողմանի զարգացմանը: Քանի որ նմանատիպ դասերի ընթացքում աշակերտները պարբերապար սկսում են կապ հաստատել տարբեր առարկաների, երևույթների, հասկացությունների միջև, նրանք սկսում են աշխարհը դիտարկել որպես մեկ ամբողջություն: Սրա շնորհիվ աշակերտները ստանում են աշխարհի հոլիստիկ՝ ամբողջական պատկերը: Ինքնին հոլիզմ հասկացությունը ենթադրում է, որ համակարգի բոլոր տարրերը՝ ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական կամ քաղաքական, միմյանց հետ փոխկապակցված են, ուստի պետք է գնահատվեն որպես ամբողջություն: Հետևաբար մենք չենք կարող հասկանալ համակարգը՝ այն դիտարկելով սոսկ որպես տարբեր տարրերի միություն:

Նույնիսկ Արիստոտելի մոտ է հնարավոր տեսնել նմանատիպ մեկնաբանություն. նա նշում էր. «... ամբողջը ավելին է, քան առանձին հատվածների միություն» (Raltson 2011:1): Ամբողջականության փիլիսոփայությունը դիտարկում է աշխարհի ամբողջական պատկերը, և առանձնացրած բաղադրիչները իմաստ ունեն միայն ամբողջի մեջ:

Հովիզմում դիտարկվում են ամբողջականության և շարունակականության սկզբունքները:

Ներկայումս աշխարհում ավելի ու ավելի է տարածվում հովիստիկ աշխարհընկալման ձևավորման անհրաժեշտությունը: Հովիստիկ աշխարհընկալման որոնումը շարունակում է մնալ քննարկումների առարկա, հատկապես շրջակա միջավայրի և մարդու հարաբերությունների և կապի համատեքստում (Stables 2010:3):

Մանկավարժական գրականությունը մանրամասն անդրադարձ է կատարում ինտեգրված դասերի առանձնահատկություններին և արդյունավետությանը: Ինտեգրված դասերի արդյունավետությունը ուսումնառության ընթացքում պարզելու նպատակով իրականացվել էր հետազոտություն: 2020թ. ՀՀ մի շարք դպրոցներում մեր կողմից իրականացվել է շուրջ 99 դասալսում, որոնցից ինտեգրված դաս առանձնացվել է 11- ում, դասավորող ուսուցիչները 40-ն էին:

Կատարված հարցումը ուսուցիչների շրջանում տվեց հետևյալ պատասխանները՝

- Ուսուցիչների միայն 25%-ն է իրականացնում ինտեգրված ուսուցում:
- Ամենաշատ ինտեգրվող առարկաներն են՝ հայոց լեզուն կամ մայրենին, պատմությունը, գրականությունը, աշխարհագրությունը, անզլերենը և ֆիզիկան:
- Ուսուցիչների 56%-ը բախվում է խոչընդոտների՝ նախապատրաստական փուլում, 26%-ը՝ իրականացման, 9%-ը՝ ամփոփման, 9%-ը ոչ մի փուլում խոչընդոտներ չի ունենում:
- Ուսուցիչների 76%-ը ինտեգրված դասեր պլանավորելիս համագործակցում է այլ առարկաների ուսուցիչների հետ, 24%-ը՝ ոչ:
- Հարցման արդյունքում ուսուցիչները նկատեցին, որ ինտեգրված դասերի առավելությունները գերակշռում են խոչընդոտներին: Դասերը հետաքրքիր են, ավելի արդյունավետ են դարձնում նյութի ընկալումը: Մեծ մասը նաև նշեց, որ այս դասերը ավելի աշակերտակենտրոն են, ինչը խթան է հանդիսանում և մոտիվացնում է աշակերտներին՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում: Այս կերպ աշակերտները կապ են հաստատում այլ առարկաների միջև՝ տեսնելով աշխարհի ընդհանուր պատկերը:

Մեր հետազոտությունները կատարվել են 3-10-րդ դասարաններում: Հարցումներին մասնակցել է ավելի քան 40 աշակերտ:

Աշակերտների շրջանում կատարված ուսումնասիրությունները տվեցին հետևյալ արդյունքները՝

- Աշակերտների շուրջ 76 %-ը հավանում է ինտեգրված դասերը, 18%-ը՝ մասամբ, 6 %-ը՝ ոչ:

- Նրանցից 53 %-ը պատասխանեց, որ դասից իրենց ավելի դուր եկավ դասի անցկացման ձևը, 29%-ին դուր եկավ դասի ընթացքը, 18%-ին՝ դասի նյութը:
- Աշակերտները նկատել են, որ ինտեգրված դասում առկա են համեմատություններ տարբեր նյութերի միջև: Աշակերտները նշում են, որ դասի ժամանակ ավելի տպավորվել են նոր բառերը, արտահայտությունները, հոմանիշները, նոր տեղեկատվությունը, ավելի հեշտ է եղել մտապահել նյութը:
- 73%-ը կցանկանար, որ նմանատիպ դասերը կրկնվող բնույթ կրեն, 21%-ի մոտ մասամբ կա նման ցանկություն, իսկ 6%-ը չի ցանկանում նման դասեր նորից ունենալ:

Աշակերտների մեծ մասը իրականացված ինտեգրված դասերը տարբերել են մյուս դասերից մի շարք առանձնահատկություններով: Նրանց մեծ մասը նշել է, որ դասերը հետաքրքիր էին: Նրանք նշել են, որ նյութն ավելի մատչելի էր, դասը՝ լի նորանոր գիտելիքներով, և որ դասաժամն արագ անցավ, ինչը ևս մեկ անգամ փաստում է այն մասին, որ դասերը հետաքրքիր էին ու արդյունավետ և սիրվեցին աշակերտների կողմից:

Հաշվի առնելով այն պահանջները, որ ժամանակակից կրթությունը դնում է իր առջև, ուսումնառության կազմակերպման նորարարական և արդյունավետ ձևերի որոնումը շատ արդիական է: Ինտեգրված դասերի արդիականությամբ է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ ԿԳՄՍ-ն պլանավորում է ինտեգրված դասերի ներառում դպրոցներում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ինտեգրված դասերը մեծ դեր ունեն նաև ամբողջական աշխարհայացքի ձևավորման գործընթացում: Անհատի ամբողջական աշխարհայացքը դիտարկում է աշխարհը, որպես մեկ ամբողջություն, ինչը հենց ինտեգրված դասերի գաղափարախոսությունն է: Անհատը սկսում է ուսումնասիրել և հասկանալ աշխարհը դպրոցական առարկաների միջոցով և գիտակցում, որ ամեն ինչ կապի մեջ է:

Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և կատարելով գործնական ուսումնասիրություններ՝ մենք վեր հանեցինք ինտեգրված դասերի մի շարք առավելություններ: Լինելով ուսուցման նորարարական ձև՝ այս տիպի դասերը հնարավորություն են տալիս մեկ դասի շրջանակներում միավորել տարբեր թեմաներ, տարբեր առարկաներից և դրանք ներկայացնել աշակերտներին՝ որպես մեկ ամբողջություն: Ինտեգրված դասերում գերակշռում է այն գաղափարը, որ աշխարհում ամեն ինչ կապի մեջ է և միասնական: Նմանատիպ դասերը հիմք են ընդունում աշակերտների կարիքները, փորձը, հետաքրքրությունները,

իրենց բնույթով աշակերտակենտրոն են և նպաստում են նաև ստեղծագործական և քննական մտածողության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. ՀՀ կրթության բարելավման ծրագրի օտար լեզուների ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն), Երևան 2020:
HH krt'owt'yan barelavman c'ragri o'tar lezowneri owsowmnakan bnagavar'i hanrakrt'owt'yan ar'arkayakan chap'oroshchayin verjnardyownqneri' & o'rinakeli c'ragrery (angleren, germaneren, r'owseren, franseren, Er&an 2020
2. Արշակյան Ա.Ժ., Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին, Երևան 2014:
Arshakyan S.Jh., Mijar'arkayakan kapery' texnologiyai dasajhamin, Er&an 2014
3. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ). Երևան 2005:
Amirjanyan Y.A., Sahakyan A., S., Mankavarjhowt'yown (owsowmnakan d'er'nark). Er&an 2005
4. Ասատրյան Մ. Վ., Փիլիսոփայության (ուսումնական ձեռնարկ) ներածություն Երևան 2004:
Asatryan M. V., P'ilisop'ayowt'yan(owsowmnakan d'er'nark) nerac'owt'yown Er&an 2004
5. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Վարդումյան Ս., Օհանովա Ի., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Ինտեգրված թեմատիկ միավորներ (տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման ձեռնարկ), Երևան 2005:
Astvac'atryan M., Arnaowdyan A., Vardowmyan S., O'hanova I., Petrosyan R' ., Eremyan L., Integrvac' t'ematik miavorner (tarrakan dproci owsowcichneri patrastman & verapatrastman d'er'nark), Er&an 2005
6. Դավթյան Մ., Գրիգորյան Բ., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան 2007:

- Dav'tyan M., Grigoryan Q., Arnaowdyan A., Zohrabyan., Hovhannisyan G., O'hanova I., Krt'akargi mshakman & integrman motecowmner (D'er'nark owsowcrichneri hamar), Er&an 2007
7. Lake, K. (1994). Integrated Curriculum. Washington D.C: U.S Department of Education.
 8. Marilyn, Ed. Kelly. (2001). The Primary Program: Growing and Learning in the Heartland. Second Edition. Nebraska: Nebraska State Department of Education.
 9. Raltson, S.J. (2011). Holism. Pennsylvania: Pennsylvania State University Hazleton
 10. Дядюшева Л. П.: Интегрированный урок как средство мотивации обучающихся на уроках иностранного языка // https://xn--j1ahfl.xn--p1ai/library/integrirovannij_urok_kak_sredstvo_motivatcii_obucha_092515.html , 21.10.2021 18:07
Dyadyusheva L.P: Integrirovannyj urok kak sredstvo motivacii obuchajushihhsja na urokah inostrannogo jazyka // https://xn--j1ahfl.xn--p1ai/library/integrirovannij_urok_kak_sredstvo_motivatcii_obucha_092515.html , 10.21.2021 18:07
 11. Еремина Е.А: Интегрированный урок - одно из новшеств современной методики // <https://nsportal.ru/shkola/inostrannye-yazyki/library/2012/03/31/vystuplenie-integrirovanny-urok-odno-iz-novshestv> 03.11.2021 23:39
Eremina E.A: Integrirovannyj urok - jedno iz novshestv sovremennoj metodiki//<https://nsportal.ru/shkola/inostrannye-yazyki/library/2012/03/31/vystuplenie-integrirovanny-urok-odno-iz-novshestv> , 03.11.2021 23:39
 12. Коноваленко Т.А: Что такое интегрированный урок // <https://infourok.ru/material.html?mid=108751> 18.02.2020 4:02
Konovalenko T.A: Chto takoe integrirovannyj urok // <https://infourok.ru/material.html?mid=108751> 18.02.2020 4:02
 13. Кочеткова О. Н., Быльнова Л. Ю: Интегрированный урок: теория и практика // https://www.n-asveta.by/dadatki/int_urok.pdf 09.04.2020; 02:38.
Kochetkova O. N., Byl'nova L. Ju: Integrirovannyj urok: teorija i praktika // https://www.n-asveta.by/dadatki/int_urok.pdf, 09.04.2020 02:38
 14. Stables, A.: Scott W.: The Quest for Holism in Education for Sustainable Development <http://www.bath.ac.uk/cree/resources/ecerstables.pdf>, 08.11.2021 15:55

ЛУИЗА МИЛИТОСЯН, АННА ГАБРИЕЛЯН - РОЛЬ ИНТЕГРИРОВАННЫХ УРОКОВ В ФОРМИРОВАНИИ ЦЕЛОСТНОГО МИРОВОЗЗРЕНИЯ

Ключевые слова: интегрированные уроки, междисциплинарные связи, мировоззрение, холизм, критическое мышление, стандарт, обучение

В статье представлена роль интегрированных уроков в формировании мировоззрения ученика. Идея интегрированных уроков возникла в XIX веке и обсуждалась многими учеными. О необходимости учета взаимосвязи между дисциплинами говорится и в трудах Я.А.Коменского. Интегрированные уроки создают междисциплинарные связи, позволяя учащимся анализировать, проводить параллели и с разных точек зрения видеть мир в целостности, а не фрагментарно. У учащихся развивается целостное мировоззрение. Наше исследование показывает, что, хотя интегрированные уроки еще не получили широкого распространения, они эффективны в обучении и, как правило, хорошо воспринимаются учащимися.

LUIZA MILITOSYAN, ANNA GABRIELIAN - THE ROLE OF THE INTEGRATED LESSONS IN THE DEVELOPMENT OF THE HOLISTIC WORLDVIEW

Keywords: *integrated disciplines, interdisciplinary connections, peace of mind, holism, critical thinking, standard, teaching*

The article reflects on the integrated lessons, their peculiarities and connection to students' holistic worldview. The idea of the integrated lessons came forward in the 19th century, and it was studied by a number of researchers. Even Comenius spoke about the importance of utilizing the interdisciplinary connections. These lessons create interdisciplinary connections allowing the students to analyze, find parallels and see the surrounding world from different perspectives united rather than separated. The students develop a holistic worldview. Our research points out that though integrated lessons are not widespread yet, they are effective in the learning process and are mainly well received by the students.

Ներկայացվել է՝ 21.10.2021
Գրախոսվել է՝ 08.11.2021

**ԱՆՁՆԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՌՈՒԶԱՆՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

Հիմնաբառեր՝ անձնակողմնորոշիչ կրթություն, դպրոցական, անվտանգության մշակույթ, արտակարգ իրավիճակ, ուսուցման տեխնոլոգիա

Հոդվածում ներկայացված է անձնակողմնորոշիչ կրթության հայեցակարգի շրջանակներում արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացի էական բնութագրերը՝ ընդհանուր մանկավարժատական տեսանկյունից, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի հիմնադրույթները: Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության հայեցակարգի շրջանակներում հետազոտությունների ուղղություններից ելնելով հիմնավորված է անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիաների դերը դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում, հաշվի առնելով այն, որ անձնակողմնորոշիչ, այսինքն անհատականության վրա հիմնված ժամանակակից մոտեցման ակունքները գտնվում են հումանիստական հոգեբանություն մեջ: Կարևորվել է անձնակողմնորոշիչ կրթության հայեցակարգի լույսի ներքո ուսուցչի մասնագիտական պատրաստվածության դերը և ներկայացվել են դրա անփոխարինելի հատկանիշները ըստ հեղինակի կարծիքի:

Հասարակական առկա ճգնաժամերն հիմնականում կապվում են կրթության համակարգի, դրա ժամանակակից նպատակների սահմանման, նոր արժեհամակարգի նախագծման և դրանց իրականացման համարժեք միջոցների որոնման հետ: Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաները վերափոխապատկերում են այդ ամենը և հարուցում նոր մակարդակի մանկավարժական գաղափարներ:

Անձնակողմնորոշիչ կրթության նկատմամբ մոտեցումը, ըստ էության, կապված է մանկավարժության հումանիստական ավանդույթների հետ, ինչն իր արմատներով խորանում է դեպի մարդկային մշակույթի ակունքները: Այդ մասին, մասնավորապես, նշված են Սոկրատի, Պլատոնի, Արիստոտելի, Պյութագորասի և, ավելի ուշ, հռոմեական մտածողներ՝ Պլուտարքոսի, Սենեկայի և այլոց աշխատանքներում: Հումանիզմի ծաղկումը կապում են միջնադարում կրոնականոնական և տոտալիտար համակարգերի հաղթահարման հետ, երբ տեղի ունեցավ մարդկային ոգու արտառոց վերելք և նշանավորվեց որպես Վերածնունդ: Այս առումով, սովորաբար շեշտադրվում են Թ. Մորի, Թ. Կամպանելլի, Հ. Չեսթերոնի, Ֆ. Ռաբլեի, Յան Կոմենսկու և այլո անունները, ավելի ուշ՝ այս համաստեղությունը լրացրեցին նոր ժամանակի ներկայացուցիչներ՝ Մ. Մոնտեն, Ժ. Ռուսոն, Լ. Տոլստոյը, Կ. Ուշինսկին, Ս. Շացկին, Վ. Սուխոմլինսկին և այլք:

Անձնակողմնորոշիչ, այսինքն անհատականության վրա հիմնված ժամանակակից մոտեցման ակունքը հումանիտար հոգեբանությունն է: Ելնելով սեփական հետազոտություններից, Ա. Մասլուն եզրակացրել է, որ անձնակողմնորոշիչ, անհատականության վրա հիմնված էություն և ինքնիրացման հատկանիշներ ունեցող անձինք կարող են համարվել հաջողակ և որպես հոյակապ հոգեկան առողջության օրինակներ (Маслоу 2008: 352):

1990-ականների վերջին բացահայտվեց, որ սովորելը չի կարող հիմնվել միայն այն սկզբունքների վրա, որոնք ուղենշում միայն մարդու հոգևոր և մտավոր զարգացումը: Եվ, կրթությունը շրջվեց դեպի դպրոցականի անձը և հումանիստական գաղափարները, որոնք առաջացրեցին մանկավարժների հետաքրքրությունը անձնակողմնորոշիչ կրթության սկզբունքների հանդեպ, որոնց նախատիպ են XXI դարի մանկավարժական տեսությունները և համակարգերը:

Այսօր չափազանց արդիական են աշակերտակենտրոն, անձնակողմնորոշիչ դաստիարակության հայեցակարգերը: Անձնակողմնորոշիչ մոտեցումը, որպես դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման մանկավարժական գործընթացի կազմակերպման մեթոդաբանական հիմք ուսումնասիրել են մի շարք ռուսական գիտնականներ՝ Վ. Սերիկովը, Ե. Բոնդարևսկայան, Ի. Յակիմանսկայան: Ժամանակակից հայ մանկավարժներից այս հիմնախնդիրը կարևորել են Լ. Ասատրյանը, Ա.Թովուզյանը, Ի.Կարապետյանը, Զ.Գյուլամիրյանը և այլք (Ասատրյան 2010: 191, Թովուզյան 2009: 296):

Կրթության անձնակողմնորոշիչ մոտեցումը ճանաչվել է որպես ժամանակի անհրաժեշտություն, սակայն մեծ մասամբ այն քննարկվում է գիտական աշխատանքներում և դեռևս չի դարձել մանկավարժական մեթոդաբանական արտացոլման օբյեկտ ու մանկավարժական հանրության մեջ չի հասել զանգվածային գիտակցության պատկերացումների մակարդակի:

Հիմնվելով մեր կողմից իրականացված տեսական վերլուծության վրա, կարող ենք փաստել, որ այս պահին, կրթության տեսության մեջ կան կրթության անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի 3 հիմնական մոտեցումներ.

1. Վ. Սերիկովը նշում է, որ անձնակողմնորոշիչ ուղղվածության ուսուցման ընթացակարգային հիմնական բնութագիրն է ուսուցման այնպիսի իրավիճակը, որն արդիականացնում է և դպրոցականների անձնական գործառույթները դարձնում պահանջված: Այս հայեցակարգը հիմնված է իրավիճակային սկզբունքի վրա: Հայեցակարգի հիմնական հասկացություններն են՝ դպրոցականը՝ որպես ուսումնական գործընթացի սուբյեկտ, անձի փորձը, անձնակողմնորոշիչ մանկավարժական իրավիճակը: «Առաջադրանք-երկխոսություն-խաղ» եռամիասնությունը բացահայտում է անձնակողմնորոշիչ ուսուցման «տեխնոլոգիական համալիրի» յուրահատուկ հիմքերը (Сериков 1996:216):
2. Ե. Բոնդարևսկայայի անձնակողմնորոշիչ ուսուցման հայեցակարգի անձամշակութաբանական մոտեցումը հիմնված է մշակութային համապատասխանության սկզբունքի վրա: Ըստ նրա, անձնակողմնորոշիչ ուսուցումն դպրոցականների մտավոր զարգացման մակարդակի և անձնական հնարավորությունների հաշվառմամբ ուսուցչի յուրահատուկ անհատական (հեղինակային) գործունեությունն է որոշակի առարկայական ոլորտում ուսումնական գործունեության նախագծման և դրա գործնական կազմակերպման ուղղությամբ: Հայեցակարգի կենտրոնական հասկացություններն են՝ մշակութային անձ, մշակութաբանական անհատական-անձնային մոտեցում (Бондаревская 2016: 172):
3. Ի. Յակիմանսկայայի սուբյեկտիվ-անձնային մոտեցումը հիմնված է երեխայի անհատականության բացահայտման սկզբունքի վրա՝ նրա համար ինքնուրույն և կարևորություն ունեցող գործունեության միջոցով: Ըստ նրա՝ անձնակողմնորոշիչ ուսուցումն այնպիսի ուսումնառություն է, որի հասկացության և ձևավորման միավորը ուսումնական իրավիճակն է, որը թույլ է տալիս լուծել ուսումնական գործընթացի խնդիրները,


որոնցում դպրոցականն ընդգրկվում է որպես գործունեության օբյեկտ (Якиманская 2013: 222):

Այս տիպի տեխնոլոգիաները նախատեսում են ուսուցչի գերիշխանության և դպրոցականի պասիվ դիրքի վերափոխումը՝ հիմնված նրա անհատականության վրա: Նման վերափոխումը կապված է այն բանի հետ, որ ուսուցիչը ոչ միայն դասավանդում և դաստիարակում է, այլև խթանում է դպրոցականի հոգեբանական և սոցիալական ու բարոյական զարգացումը, պայմաններ ստեղծում նրա ինքնազարգացման համար:

Հայեցակարգի հիմնական հասկացություններն են՝ սուբյեկտիվ փորձը, ուսումնական աշխատանքի եղանակը:

Ըստ Ի. Յակիմանսկայայի ուսուցման անձնակողմնորոշիչ հայեցակարգի՝ այդ տեխնոլոգիայի էությունը արտահայտվում է դպրոցականի նկատմամբ ուսուցչի հետևողական վերաբերմունքում, որպես սեփական անձի ինքնուրույն զարգացման համար պատասխանատու, և միևնույն ժամանակ, որպես ուսումնադաստիարակչական ազդեցության սուբյեկտ: Հեղինակը զարգացնելով անձնակողմնորոշիչ աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիայի հայեցակարգը, շեշտում է դպրոցականի անձի գաղափարը որպես նպատակ, ինչը նրա ուսուցման ընթացքում կրթական փորձի կարևոր գործոնն է (Якиманская 2013: 222):

Այսպիսով, ուսուցման անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի և ավանդական տեխնոլոգիաների միջև հիմնական տարբերությունն առաջին հերթին այն է, որ սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունները փոխարինվում են սուբյեկտ-սուբյեկտային աշակերտակենտրոն հարաբերությամբ: Այս եզրակացությունը կարելի է պատկերել հետևյալ նկարում:



Նկ. 1. Սուբյեկտ-սուբյեկտային աշակերտակենտրոն հարաբերությունը անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայում

Մեր կարծիքով, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում ավելի արդյունավետ կլինի Ի. Յակիմանսկայայի անձնակողմնորոշիչ կրթության հայեցակարգի սուբյեկտիվ-անձնային մոտեցումը:

Մեր կարծիքով, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության հայեցակարգի շրջանակներում առկա են հետազոտությունների տարբեր ուղղություններ: Դրանք են՝ անձնակողմնորոշիչ կրթության տեսությունն ու պրակտիկան, անձնակողմնորոշիչ ուսուցման հայեցակարգի պատմական նախադրյալները, անձնակողմնորոշիչ ուսուցման համակարգերի և տեխնոլոգիաների ստեղծման միջազգային փորձը, դրանց մանկավարժական համեմատական վերլուծությունը, ուսուցման անձնակողմնորոշիչ համակարգերի պայմաններում մանկավարժական նպատակադրման աղբյուրներն ու ընթացակարգերը, կրթական բովանդակության ընտրությունը և համադրությունը անձնակողմնորոշիչ մոտեցման տեսանկյունից, անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիաները, մանկավարժական կազմի և ուսումնական հաստատությունների ղեկավարների վերապատրաստումը:

Ուսուցման անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի նպատակը երեխայի անհատական ճանաչողական ընդունակությունների

առավելագույն զարգացումն է՝ կենսագործունեության իր ունեցած փորձի օգտագործմամբ:

Աձնակողմնորոշիչ ուսուցման հիմնական խնդիրներն են՝

- դպրոցականի սուբյեկտիվ փորձի օգտագործում ուսուցման նպատակներով: Սուբյեկտիվ փորձը նրա սեփական կենսագործունեության, դրա ճանաչողության, սոցիալականացման, ինքնազարգացման և ինքնիրացման փորձն է,
- յուրաքանչյուր դպրոցականի անհատական ճանաչողական կարողությունների զարգացում,
- դպրոցականի անհատական (սուբյեկտիվ) փորձի առավելագույն բացահայտում, օգտագործում,
- օգնություն անհատին ինքնագիտակցման, ինքնորոշման և ինքնիրացման, այլ ոչ թե կանխորոշված հատկությունների ձևավորման նպատակով,
- անհատի մոտ անվտանգ կենսագործունեության մշակույթի ձևավորում, որը թույլ է տալիս ճիշտ կառուցել կյանքը, որոշել կենսակերպը և վարքագիծը:

Ինչպես ցանկացած մանկավարժական տեխնոլոգիայի, այնպես էլ անձնակողմնորոշիչ կրթությունը կառուցված է հետևյալ բաղադրիչներից՝ հայեցակարգային հիմունքներ, ուսուցման բովանդակային մաս, դաստիարակության նպատակային ուղղություն, նախագծված զարգացման դրական մակարդակ, գործառույթային մաս, ծրագրային-մեթոդական ապահովում (մեթոդիկա):

Անձնակողմնորոշիչ կրթության ուսուցման հիմքը դպրոցականի անձի հանդեպ մարդասիրական մոտեցումն է: Եվ դա, իր հերթին, ենթադրում է. դպրոցականի ճանաչումը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական սուբյեկտ, նրա անձնային հատկությունների, նրա ունակությունների, հակումների և հետաքրքրությունների ամբողջ շարքի առավել ամբողջական բացահայտումը և ձևավորումը՝ հաշվի առնելով նրա իրական հնարավորությունները, դրական բարոյական և էթիկական որակները, կարևորելով դպրոցականի հանդեպ մարդկային և ժողովրդավարական վերաբերմունքը, նրա անձի նկատմամբ հարգանքը, նրա մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, պահանջմունքերը և վարքի դրդապատճառների ընկալումը, վստահելի հարաբերությունների և բարենպաստ հոգեբանական միջավայրի, մթնոլորտում ստեղծման ու դպրոցականի անձի կայացման գործում օժանդակության անհրաժեշտությունը: Եվ այս ամենը՝ դպրոցականի հետ համագործակցության պայմաններում, բացառելով հարկադրանքը և հաշվի առնելով նրա ցանկություններն ու հետաքրքրությունները: Ընդ

որում, կարևոր է այն միջոցների որոշումը, որոնք ապահովում են սահմանված նպատակի իրականացումը դպրոցականի սուբյեկտիվ փորձի բացահայտման, ուսումնական գործընթացում նրա անձի նպատակային զարգացման միջոցով:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի հայեցակարգի հիմնադրույթներն են՝

- ուսումնական գործընթացը բոլոր մակարդակներում (տարրական, հիմնական, ավագ դասարաններ) կառուցված է ընդհանուր սկզբունքների, նպատակների և արժեքների հիմքի վրա,
- դպրոցն առավելագույն բարենպաստ պայմաններ է ստեղծում դպրոցականի անհատականության զարգացման համար,
- դպրոցն այն սոցիալական հաստատությունն է, որտեղ յուրաքանչյուր դպրոցական պետք է իրեն դրսևորի որպես ինքնատիպ, անկրկնելի անհատականություն, ինչը կարող է ապահովել դպրոցականի անձնակողմնորոշիչ կրթությունը,
- ուսուցման նպատակն է ստեղծել հոգեբանական և մանկավարժական պայմանների համակարգ, որը հնարավորություն է տալիս դասարանում աշխատել ոչ թե դեպի «միջին» դպրոցականը կողմնորոշմամբ, այլ յուրաքանչյուրի հետ առանձին՝ հաշվի առնելով անհատական ճանաչողական հնարավորությունները, կրթական պահանջմունքներն ու հետաքրքրությունները,
- ուսումնական գործընթացի հիմնական գործառույթն անհատական զարգացման կազմակերպումն է:

Անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի մեթոդական հիմքը կրթական գործընթացի անհատականացումն ու տարբերակումն է: Ըստ անձնակողմնորոշիչ կրթության սկզբունքների՝ անհրաժեշտ է ապահովել դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը՝ շեշտադրելով ուսումնադաստիարակչական գործընթացում նրանց անձնային որակների ձևավորումը և դպրոցականներին ընդունելով որպես ինքնագնահատման, ինքնիրացման և ինքնակատարելագործման ակտիվ սուբյեկտներ:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բնութագրիչ է մարդակենտրոն մոտեցումը՝ ուսումնադաստիարակչական գործընթացի կենտրոնում աշակերտի անձն է: Ուսումնադաստիարակչական գործընթացը հարմարեցված է երեխայի

կրթական պահանջումներին և հնարավորություններին: Մարդասիրական մոտեցումը, խթանում է երեխայի հոգեմտավոր զարգացումը: Այս պարագայում յուրահատուկ հոգեթերապևտիկ մոտեցումն ապահովված է դաստիարակության գործընթացի հուսալի հայտորոշմամբ, ստեղծված է համագործակցային մթնոլորտ և ստեղծագործական միջավայր: Դպրոցականն ազատ է, ակտիվ, հարգում է իրեն և իր շրջապատը, համագործակցող է, նախաձեռնող, ստեղծագործ: Ըստ անձնակողմնորոշված դաստիարակության հայեցակարգի՝ ուսուցչի կարևոր որակներն են՝ հասկանալ երեխային, ճանաչել երեխայի առանձնահատկությունները և ընդունել նրա եզակիությունը, երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա:

Անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիան միտված է դպրոցականի անձնային որակների ձևավորմանը, նրա ընդհանուր զարգացմանը ոչ թե պատվերով, այլ բնահարմարության սկզբունքով՝ ներթափանցելով երեխաների ներաշխարհ, ճանաչելով և ընդունելով նրանց ինքնատիպությունը, իմանալով և հաշվի առնելով նրանց առանձնահատկությունները, հետաքրքրությունները, ապահովելով բազմակողմանի, ազատ և ստեղծագործական անհատի ձևավորումը: Անձնակողմնորոշիչ ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացումն ուսուցչից պահանջում է դպրոցականների նկատմամբ ցուցաբերել մանկավարժական օժանդակություն և աջակցություն:

Անձակողմնորոշիչ տեխնոլոգիայի վրա հիմնված արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման ուսուցման տեխնոլոգիաներին ներկայացվում են որոշակի պահանջներ.

- ուսումնական նյութը պետք է ապահովի դպրոցականի սուբյեկտիվ փորձի բովանդակության բացահայտումը, ներառյալ նրա նախորդ ուսուցման փորձը:
- Դասագրքում գիտելիքների ներկայացումը պետք է ուղղված լինի ոչ միայն դրանց շրջանակի, ծավալների ընդլայնմանը, ուրվագծմանը, մասերի ամբողջացմանը կամ ինտեգրմանը, առարկայական բովանդակության ընդհանրացմանը, այլև յուրաքանչյուր դպրոցականի առկա փորձի մշտական վերափոխմանը:
- Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է անընդհատ համահարթեցնել դպրոցականի փորձը՝ տրվելիք գիտելիքների գիտական բովանդակության հետ:
- Պետք է ապահովել ոչ միայն արդյունքի, այլև գլխավորապես ուսումնական գործընթացի հսկողություն և գնահատում, այսինքն՝ այն որ իրականացնում է դպրոցականն ուսումնական նյութը յուրացնելիս,

ուսուցման գործընթացում պետք է լինի դպրոցականների սուբյեկտիվ փորձի մշտական համակարգում՝ ձեռք բերված գիտելիքների գիտական բովանդակության հետ:

- Դպրոցականի կրթական գործունեության ուղղորդիչ խթանումը պետք է գիտելիքներ յուրացնելու ընթացքում նրան ապահովի ինքնակրթության, ինքնազարգացման, ինքնադրսևորման հնարավորություններ:
- Ուսումնական նյութի հաղորդումը պետք է կազմակերպվի այնպես, որ դպրոցականն առաջադրանքները կատարելիս, խնդիրները լուծելիս ընտրելու հնարավորություն ունենա: Անհրաժեշտ է խթանել դպրոցականների ուսումնական նյութն ինքնուրույն ընտրելու, օգտագործելու, մշակելու նրանց համար ամենակարևոր եղանակները, գնահատել ուսումնական աշխատանքի մեթոդները, որոնք դպրոցականը օգտագործում է ինքնուրույն, արդյունավետ:
- Ուսումնական գործողությունների կատարման եղանակների վերաբերյալ գիտելիքներ ներմուծելիս անհրաժեշտ է առանձնացնել ուսումնական աշխատանքի ընդհանուր տրամաբանական և հատուկ առարկայական մեթոդները՝ հաշվի առնելով դրանց գործառույթները դպրոցականի անձնային զարգացման մեջ:
- Ուսումնական գործընթացը պետք է ապահովի ուսուցման՝ որպես սուբյեկտիվ գործունեության կազմակերպումը, իրականացումը, գնահատումը: Դրա համար անհրաժեշտ է առանձնացնել ուսումնական միավորները, դրանց նկարագրությունը, ուսուցչի կողմից դրանք դասի ժամանակ, անհատական աշխատանքում օգտագործելը (շտկման, կրկնուսուցման տարբեր ձևեր):

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության գործառույթներն են՝

- մարդասիրական, որի էությունը մարդու ինքնության ներքին արժեքի ճանաչումն ու նրա ֆիզիկական և բարոյական առողջության ապահովումն է, կյանքի իմաստի և նրանում ակտիվ դիրքորոշման, անձնական ազատության, սեփական անձի առավելագույն իրացման հնարավորության գիտակցումը,
- մշակույթաստեղծման, որն ուղղված է կրթության միջոցով մշակույթի պահպանմանը, փոխանցմանը, վերարտադրմանը և զարգացմանը,
- սոցիալականացման, որն ապահովում է հասարակություն մուտք գործելու համար անհրաժեշտ անհատի սոցիալական փորձի ձեռք բերումը, յուրացումը և վերարտադրությունը:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթությունը ձևավորում է աշակերտների հետևյալ հմտությունները՝ ինքնուրույն ձեռք բերել և ստեղծագործորեն օգտագործել գիտելիքները, ինքնուրույն և պատասխանատու որոշումներ կայացնել, պլանավորել գործողությունները ցանկացած իրավիճակում, կանխատեսել և գնահատել դրանց արդյունքները, ստանձնել պատասխանատվություն իր և շրջապատի համար:

Մեր կարծիքով, անձնակողմնորոշիչ կրթության հայեցակարգի լույսի ներքո ուսուցչի մասնագիտական պատրաստվածության անփոխարինելի հատկանիշներն են՝

- իր գործողությունների հիմնավորումը, ինքնազարգացումը, ներքին մասնագիտական դրդապատճառների վրա հիմնված ինքնիրացումը,
- առկա ուսուցման և դաստիարակչական պրակտիկայի արդյունավետ այլընտրանքների շարունակական որոնումը,
- ուսուցման և դաստիարակության հեղինակային մոդելի հիմքի վրա նպատակադրումը և նպատակների իրագործումը,
- դպրոցականների հետ համատեղ ուսումնական գործունեության բովանդակության տարրերի համատեղ ըմբռնումը,
- ուսուցման և դաստիարակության բովանդակության մեջ հեղինակային տարրերի ներդրումը,
- իր անձնական և մասնագիտական վարքի ռեֆլեքսիան,
- ընդունված որոշումների համար պատասխանատվությունը,
- հաղորդակցման սեփական մանկավարժական մոտեցումների տեսանկյունից գործունեության և հաղորդակցման ձևերի ընդունումը կամ մերժումը,
- մանկավարժական հաղորդակցման գործընթացում երկխոսությունն ու ինքնադրսևորումը:

Այսպիսով, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիայի կենտրոնում է աշակերտի անձի եզակիությունը, որը ձգտում է առավելագույնի հասցնել իր անձի, հնարավորությունների իրացումը (ինքնիրացումը)՝ իր բնածին ունակությունների սահմաններում, և որը ունակ կլինի կյանքի տարբեր տեսակի իրավիճակներում կատարել գիտակցված և պատասխանատու ընտրություն: Անձի կողմից այդպիսի որակների ձեռքբերումն է այդ կրթության հիմնական նպատակը, ի տարբերություն գիտելիքների ու

սոցիալական նորմերը դպրոցականին փոխանցելու ավանդական ֆորմալ տեխնոլոգիայի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Ասատրյան Զ.Ա., Անձնակողմնորոշիչ ուսուցման հայեցակարգային դրսևորումները մանկավարժության պատմության մեջ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, 3/9, 2010.- 191 էջ:
Asatryan Z.A., And'nakoghmnoroshich owsowcman hayecakargayin drs&orowmner'y' mankavarjhowt'yan patmowt'yan mej, Mankavarjhowt'yan & hoguebanowt'yan himnaxndirner, 3/9, 2010.- 191 e'j:
2. Թոփուզյան Ա.Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Եր.: Լինգվա, 2009.-296 էջ:
T'op'owzyan A.O', Howmanistakan dastiarakowt'yan himnaxndiry' mankavarjhowt'yan mej, Er.: Lingva, 2009.-296 e'j:
3. Бондаревская Е.В., Учителю о личностно-ориентированном образовании. – Ростов-на-Дону: «Ростиздат», 2016.- 172 с.
Bondarevskaja E.V., Uchitelju o lichnostno-orientirovannom obrazovanii. – Rostov-na-Donu: «Rostizdat», 2016.- 172 s.
4. Маслоу А. Мотивация и личность. 3-е изд. -Санкт-Петербург: Питер, 2008. - 352 с.
Maslou A. Motivacija i lichnost'. 3-e izd. -Sankt-Peterburg: Piter, 2008. - 352 s.
5. Сериков В.В., Личностно ориентированное образование: концепции и технологии. олгоград, 1996. - 216 с.
Serikov V.V., Lichnostno orientirovannoe obrazovanie: koncepcii i tehnologii. olgograd, 1996.-216 s.
6. Якиманская И.С., Основы личностно ориентированного образования [Электронный ресурс]: [Монография] /И.С. Якиманская. 2-е изд. (эл.)- М.: БИНОМ. Лаборатория знаний, 2013. - 222 с.
Jakimanskaja I.S., Osnovy lichnostno orientirovannogo obrazovanija [Jelektronnyj resurs]: [Monografija] /I.S. Jakimanskaja. 2-e izd. (jel.)-M.: BINOM. Laboratorija znaniy, 2013. - 222 s.

**РУЗАННА ГАРИБЯН - ЛИЧНОСТНО-ОРИЕНТИРОВАННЫЕ
ТЕХНОЛОГИИ В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ**

КУЛЬТУРЫ БЕЗОПАСНОСТИ ШКОЛЬНИКА В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Ключевые слова: *личностно-ориентировочное образование, школьник, культура безопасности, чрезвычайная ситуация, технология обучения*

В статье представлены сущностные характеристики процесса формирования и развития культуры безопасности школьника в чрезвычайных ситуациях, в рамках концепции личностно-ориентированного обучения с общепедагогической точки зрения. Обоснована роль технологий личностно-ориентированного обучения в процессе формирования и развития культуры безопасности школьника, с учётом того, что современный личностно-ориентированный подход основан на идеях гуманистической психологии. Подчеркнута также роль профессиональной подготовки учителя в свете концепции личностно-ориентировочного обучения и представлены ее важнейшие характеристики.

RUZANNA GHARIBYAN - PERSON-ORIENTED TECHNOLOGIES IN THE PROCESS OF THE FORMATION AND DEVELOPMENT OF SCHOOLCHILDREN'S SAFETY CULTURE IN EMERGENCY SITUATIONS

Keywords: *person-oriented education, schoolchild, safety culture, emergency, teaching technologies*

The article presents the essential characteristics of the process of the formation and development of schoolchildren's safety culture in emergency situations, within the framework of the concept of person-oriented learning from a general pedagogical point of view. The role of person-oriented learning technologies in the process of the formation and development of schoolchildren's safety culture in emergency situations has been substantiated. It has taken into account that the origin of the modern person-oriented approach is based on humanistic psychology. The role of the teacher's professional training is emphasized and its irreplaceable features (according to the author) are presented.

Ներկայացվել է՝ 09.03.2021

Գրախոսվել է՝ 05.03.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Մանկավարժության և լեզուների
դասական դաս մեթոդիկայի ամբիոնի կողմից՝ 23.04.2021

**ԲՈՒՀԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆԵՐԻ ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ**

ՍԱՄՎԵԼ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ ուսանողներ, անկեղային հարցում, ռացիոնալ սնունդ, մտավոր և ֆիզիկական ակտիվություն

Հոդվածում ներկայացվել են բուհի ուսանողների ռացիոնալ սննդի ներգործության առանձնահատկությունները նրանց մտավոր և ֆիզիկական գործունեության վրա: Պարզաբանվում են ռացիոնալ սննդի կազմակերպման ձևերը և մոտեցումները, վերլուծվում են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսանողների շրջանում անցկացված անկեղային հարցման արդյունքները, որի պատկերը բավականին մտահոգիչ է: Ուսանողների գերակշիռ մեծամասնությունը մտավոր ու ֆիզիկական աշխատանքը իրականացնում է նկատելի թերսնման պայմաններում, վտանգելով առողջությունը և իրականացվող մտավոր ու ֆիզիկական աշխատանքի արդյունավետությունը: Աշխատանքային օրվա ընթացքում ուսանողների ամենօրյա սննդի կազմակերպումը կատարվում է կամայական, նրա բաշխումը աշխատանքային օրվա ընթացքում պայմանավորված չէ իրակացվող աշխատանքի ծավալով և աշխատանքային օրվա ժամանակահատվածով: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել ուսանողներին կողմնորոշվելու և վերանայելու իրենց ռացիոնալ սննդի կազմակերպման գործընթացը՝ այն համապատասխանեցնել առաջարկվող պահանջներին:

Ուսումնական գործընթացի օպտիմալացման վերաբերյալ ուսումնասիրությունները մշտապես գտնվել են տարբեր ոլորտների մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս համատեքստում առավել կարևորվում է ուսումնական գործընթացի բեռնաթափման հարցը, ինչը ենթադրում է նաև բուհերի ուսանողների մտավոր և ֆիզիկական աշխատանքների ծավալների վերանայում, ինչպես նաև այդ ընթացքում սպառվող կալորիանների վերահաշվարկ:

Ուսանողների ճիշտ սնվելու խնդիրը հատկապես դժվարանում է քննական շրջաններում, երբ նրանք ստիպված են լինում շատ պարապել և ժամանակի սղության պատճառով հաճախ օգտվում են արագ

պատրաստվող սննդից: Այս ամենին գումարվում է նաև գիշերային անքնությունը, որը նույնպես բնորոշ է քնության պատրաստվող ուսանողներին:

Իրականացված աշխատանքի ծավալներով բուհերի ուսանողները հասարակության այլ շերտերից առանձնանում են կատարած մտավոր և ֆիզիկական աշխատանքի բնույթով և ծավալով: Այս խնդիրն առանձնահատուկ է հատկապես ուսանողուհիների դեպքում, ովքեր, ըստ օրինաչափության, ուսման նպատակով ավելի շատ ժամանակ և էներգիա են սպառում քննաշրջանների ընթացքում:

Բացի այդ, հասարակության զարգացման արդի պահանջները նոր մոտեցում են ենթադրում նաև բուհերում ուսումնական գործընթացի ծավալային աճի, ժամանակի արդյունավետ կառավարման հարցերում, ինչը ուսանողից կպահանջի իր հանգստի և վերականգման, կենսական հնարավորությունների մեծացման հարցերի արդյունավետ լուծում:

Այս հարցերի լուծման գործընթացում կարևոր է ուշադրություն դարձնել ուսանողների ռացիոնալ սննդակարգի պահպանման ու սննդակարգի էներգետիկ արժեքի ճշգրտման ու ուսումնական օրվա ընթացքում ընդունած սննդի ռացիոնալ բաշխման առանձնահատկություններին:

Հաշվի առնելով վերը շարադրվածը սույն հետազոտության նպատակն է բացահայտել ուսանողների շրջանում ռացիոնալ սննդակարգի առանձնահատկությունները:

Հետազոտության իրականացման ընթացքում օգտագործվել են հետևյալ հիմնական մեթոդները՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, վերլուծություն և համադրում, անկետային հարցում, մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ:

Ստացված արդյունքները հնարավորություն կտան բացահայտել ուսանողների մտավոր և ֆիզիկական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները:

Մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ինչպես ֆիզիկական այնպես էլ մտավոր աշխատանքը էներգատար է և արտահայտվում է էներգակիրների ու թթվածնի մեծ քանակի սպառումով: Գլխուղեղը կազմելով մարդու մարմնի զանգվածի 2-3%-ը, կլանում է օրգանիզմ մուտք գործած թթվածնի 20 և ավել տոկոսը: Գլխուղեղին թթվածնի մատակարարման 20 վրկ. դադարի դեպքում կարող է առաջանալ գիտակցության կորուստ:

Ինչ վերաբերում է սննդին, ապա դրա օգտակարության աստիճանը պայմանավորված է համապատասխան չափով և բաղադրությամբ:

Աղյուսակ 1-ում ներկայացված է սննդանյութերի՝ սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի բավարար քանակը մարմնի զանգվածի 1կգ-ի համար, որը կապահովի օրգանիզմի արդյունավետ գործունեությունը (Скурихын, Шатерникова 1984:252):

Աղյուսակ 1. Հիմնական էներգակիրների արդյունավետությունը մարմնի 1 կգ զանգվածի հաշվարկով (ըստ Սկուռիխինի և Շատենիկովայի)

	Սննդանյութեր	Ֆիզիկական վարժություններով չզբաղվող մարդու համար	Ֆիզիկական վարժություններով զբաղվող մարդու համար
1	սպիտակուցներ	1.0 գր – 1.3 գր	1.5 գր
2	ճարպեր	1.0 գր – 1.2 գր	1.5գր
3	ածխաջրեր	4.0 գր – 5.0 գր	8 գր – 10 գր

Ինչպես պարզվում է առաջին աղյուսակից, օրգանիզմի կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեն սպիտակուցները, ճարպերը և ածխաջրերը:

Սպիտակուցները օրգանիզմի կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեցող սննդանյութերից են և կազմում են մկանային զանգվածի հիմքը: Սպիտակուցների կենսաբանական նշանակությունը պայմանավորված է դրանցում առկա ամինաթթուների հարաբերակցությամբ: Մասնավորապես անփոխարինելի ամինաթթուներն օրգանիզմում չեն սինթեզվում, այլ բացառապես ներմուծվում են սննդի միջոցով: Անփոխարինելի ամինաթթուները կարևոր դեր ունեն ֆիզիկական և մտավոր աշխատանք կատարող հատկապես բուրի ուսանողների համար քանզի նրանց մեծ մասն արդեն հայտնի պատճառներով պատշաճ կերպով չեն հետևում իրենց սննդակարգին: Անփոխարինելի ամինաթթուների պակասը կարող է բերել արյան շրջանառության վատացման, արյան մեջ հեմոգլոբինի պակասի և ոսկրերի հանքայնացման, ինչը հատկապես ֆիզիկական վարժություններ կատարելիս կարող է առաջացնել լուրջ վնասվածքներ:

Ամինաթթուներ պարունակում են բոլոր բուսական և կենդանական ծագման մթերքները, բացառությամբ ռաֆինացվածների՝ շաքար, օսլա, տարատեսակ յուղեր և այլն: Սպիտակուցներով և

ամինաթթուներով հարուստ կենդանական և բուսական մթերքներից են տավարի միսը, կաթ, ձուկ, ձու, ոլոռ, կարմիր լոբի, սպիտակ հաց և այլն:

Ինչ վերաբերում է ճարպերին, ապա դրանք կենդանական և բուսական հյուսվածքների բաղադրիչներ են, որոնք կազմված են հիմնականում գլիցերինների և տարբեր ճարպաթթուների միացություններից: Ճարպերի կենսաբանական նշանակությունը առաջնահերթ պայմանավորված է նրանով, որ դրանք սննդի առավել կալորիական մասն են կազմում և հանդիսանում են էներգիային գլխավոր աղբյուր (Столмаков, Мартынюк 1989:22-29)

Ճարպերի հետ մեկտեղ սննդի միջոցով օրգանիզմ են թափանցում նաև ճարպալույծ վիտամինները՝ А, D, E, К և կենդանական շատ կարևոր ֆոսֆոլիպիդներ: Ճարպերի նվազագույն օրական պահանջը կազմում է մարդու մարմնի զանգվածի 1կգ-ի հաշվարկով 1-1.5 գր (Столмаков, Мартынюк 1989:22-29, Скурихын 1984, Шатерникова):

Ճարպերի էներգետիկ նշանակությունը պայմանավորված է քայքայումից առաջացած էներգիայի քանակով, օրինակ՝ 1գր ճարպի քայքայումից անջատվում է 9 կկալ էներգիա: Առողջ չափահաս մարդու օրգանիզմում ճարպերի քանակը կազմում է մարմնի զանգվածի 16-23%:

Սննդի էներգետիկ արժեքը կամ կալորիականությունը պայմանավորված է նրա բաղադրությունում սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի չափաբաժնից: Ընդունված չափանիշներով մտավոր աշխատանքով զբաղվող ուսանողուհիների սննդի օրական չափաբաժինը պետք է պարունակի 2600կկալ, ուսանողուհիների դեպքում 3000կկալ էներգետիկ արժեք: Ակտիվ ֆիզիկական վարժություններով կամ սպորտով զբաղվելու դեպքում համապատասխանաբար 3300կկալ և 4000կկալ էներգետիկ արժեք:

2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում կազմվել է հարցաթերթիկ /ըստ Սկուրիխինի և Շատենիկովայի/ որտեղ ներկայացված էր սննդամթերքի անվանումը /քաշը կամ քանակը/ և սննդամթերքի էներգետիկ արժեքը /կկալ/: Անցկացվել է անկետային հարցումն Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանի 1-ին կուրսի 313 ուսանողուհիների շրջանում: Հարցման ընթացքում յուրաքանչյուր ուսանող պատասխանել է սննդատեսակի ընդունման չափաբաժինների վերաբերյալ 36 հարցի:

Ստացված տվյալների վերլուծությունը կատարվել է՝ օգտվելով սննդի բաղադրության և էներգետիկ արժեքի վերաբերյալ հաշվարկի ընդունված սկզբունքներով (Скурихын, Шатерникова 1984:252):

**Աղյուսակ 2. Անկետային հարցման համար նախատեսված
հարցաթերթիկ (ըստ Սկոռոխինի և Շատենիկովայի)**


	Սննդամթերքի անվանումը	Քաշը	Սննդամթերքի էներգետիկ արժեքը, կկալ
1	Հաց	100գր	200
2	Շաքար	100գր	379
3	Կարագ	100գր	748
4	Կաթնաշոռ	100գր	156-232
5	Թթվասեր	100գր	206
6	Կաթ	100գր	58
7	Պանիր	100գր	360
8	Ձու	1 հատ	63
9	Երշիկ	100գր	301
10	Նրբերշիկ	100գր	200
11	Միս /տավարի/	100գր	110
12	Միս /կոտլետ/	100գր	161
13	Միս /խոզի/	100գր	305
14	Միս /ոչխարի/	100գր	257
15	Միս /հավի/	100գր	159
16	Ձուկ	100գր	87
17	Բորշ /առանց միս/	100գր	230
18	Ապուր /առանց միս/	100գր	202
19	Կրտեֆիլի պյուրե /առանց յուղ/	100գր	61
20	Բրինձ փլավ /առանց յուղ/	100գր	48
21	Հնդկաձավար փլավ /առանց յուղ/	100գր	138
22	Մակարոն փլավ /առանց յուղ/	100գր	98
23	Վերմիշել փլավ /առանց յուղ/	100գր	100
24	Աղցան /տարբեր/	100գր	50-70
25	Ձվածեղ	2 ձու	200
26	Կակաո	100գր	74
27	Թխվածք /կրեմով/	100գր	356
28	Սուրճ	50գր	91
29	Թեյ /շաքարով/	100գր	99
30	Հյութ /բնական մրգերի/	100գր	54
31	Մուրաբա	100գր	281

32	Կաթ խտացրած	100գր	337
33	Մեղր	100գր	315
34	Շոկոլադ	100գր	427
35	Միրգ	100գր	38-55
36	Բուսական յուղ	100գր	900

Հարկ է նշել, որ արտերկրի հետազոտողների համանման հարցումների արդյունքում պարզվել է, որ ուսանողուհիների օրվա ընթացքում միջինում սպառվում է 1966 կկալ, այնինչ տվյալ տարիքի աղջիկների ֆիզիոլոգիական պահանջների չափանիշներով անհրաժեշտ է 2000 կկալ էներգիա 1 օրվա հաշվարկով (Бакланова 2017):

Մշակելով և վերլուծելով նախաճաշին, ճաշին և ընթրիքին բուսի ուսանողուհիների ընդունած սննդի մասին ստացված թվային տվյալները արձանագրվել է հետևյալ պատկերը: Մասնավորապես ստացված տվյալներով 313 ուսանողի սննդի միջին էներգետիկ արժեքը կազմում է 2092 կկալ: Ընդգծենք, որ ուսանողուհիների օրական ընդունած սննդի էներգետիկ միջին արժեքը՝ մոտ 400-500 կկալ-ով պակաս է անհրաժեշտ չափաբաժնից՝ 2600կկալ:


Ինչպես երևում է գծապատկեր 1-ից ուսանողուհիների սննդի էներգետիկ միջին արժեքն ունի հետևյալ պատկերը՝ հարցվածների 22.6%-ի մոտ արձանագրվել է 2400 կկալ և ավելի, 34.2%-ի մոտ՝ 2000-2399 կկալ: Հարցվածների 32%-ի մոտ սննդի էներգետիկ միջին արժեքը կազմում է 1500-1999 կկալ, իսկ 11.2%- ի դեպքում՝ 1500 կկալ-ից պակաս:



Գծապատկեր 1. Ուսանողուհիների ողջ օրվա սննդի էներգետիկ միջին արժեքի վերլուծություն

Բացի այդ կարևոր է նաև, թե ուսանողը օրվա ժամանակահատվածով պայմանավորված սննդի էներգետիկ ինչ

չափաբաժին է յուրացնում: Ստացված արդյունքներն առավել պատկերավոր ներկայացվե՞ծ են գծապատկեր 2-ում նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար առանձին հաշվարկով:



Գծապատկեր 2. Ուսանողուհիների նախաճաշի, ճաշի և ընթրիքի էներգետիկ միջին արժեքի վերլուծություն

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից՝ բուհի ուսանողուհիների նախաճաշի էներգետիկ արժեքը միջինում կազմում է 694 կկալ, որը ընդհանուր էներգետիկ ցուցանիշի 33.2%-ն է: Մասնավորապես հարցված ուսանողուհիների 11.9%-ի մոտ այն կազմում է 900-1200 կկալ, 42.2%-ի դեպքում՝ 700-899 կկալ, 42.9%՝ 400-699 կկալ, 3.6%՝ 399 կկալ-ից պակաս:

Ինչ վերաբերվում է ճաշի էներգետիկ արժեքին, ապա միջինում այն կազմում է 541 կկալ՝ համապատասխանաբար՝ կազմում է 22.1%: Մասնավորապես հարցվածների 8.9%-ի մոտ 900-1200 կկալ, 14.6%՝ 700-899 կկալ, 50%՝ 400-699 կկալ, 26.5%՝ 399 կկալ-ից պակաս:

Հավելենք նաև, որ հարցված ուսանողուհիներից 38-ը ըստ հարցումների արդյունքների ընդհանրապես չի ճաշում:

Ստացված տվյալներով ընթրիքի էներգետիկ արժեքը միջինում կազմում է 857 կկալ՝ համապատասխանաբար՝ 42.8%:

Մասնավորապես 50.1%՝ 900-1200 կկալ, 26.2%՝ 700-899 կկալ, 22.1%՝ 400-699 կկալ, 3.6%՝ 399 կկալ-ից պակաս:

Այսպիսով ստացված տվյալների համաձայն հարցվողների 26.6% իր սննդակարգում ապահովում է անհրաժեշտ էներգետիկ արժեքի 2400-2600 կկալ, որը ենթադրաբար բավարար նախապայման է արդյունավետ մտավոր և ֆիզիկական աշխատանքներ կատարելու համար: Բացի այդ կարևոր է նաև սննդակարգի ռացիոնալ բաշխումն աշխատանքային օրվա ընթացքում, ինչը հատկապես ուսանողական առօրյայում բարդ է, սաայն չափազանց կարևոր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Խաչատրյան Ս. Ուսանողի մտավոր աշխատունակությունը պայմանավորված սննդի էներգետիկ քանակությամբ և ռեժիմով, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերական, 2(35), 2016, էջ 302:
Xachatryan S. Owsanoghi mtavor ashxatownakowt'yowny' paymanavorvac' snndi e'nergetik qanakowt'yamb & r'ejhimov, «Er&ani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakagitakan hamalsaran» himnadrami «Banber» gitakan parberakan, 2(35), 2016, e'j 302:
2. Бакланова В.Г. Анализ калорийности питания и двигательной активности девушек-студенток второго курса северного (арктического) федерального университета им. М.В. Ломоносова. Дата обращения 02.02.21
<https://files.scienceforum.ru/pdf/2017/37312.pdf>.
Baklanova V.G. Analiz kaloriynosti pitaniya i dvigatel'noj aktivnosti devushek-studentok vtorogo kursa severnogo (arkticheskogo) federal'nogo universiteta im. M.V. Lomonosova. Data obrashheniya 02.02.21
<https://files.scienceforum.ru/pdf/2017/37312.pdf>.
3. Столмаков А.И., Мартынюк И.О. Популярно о питании, Киев, “Здоровье”, 1989.- 22-29 с.
Stolmakov A.I., Martynjuk I.O. Populjarno o pitanii, Kiev, “Zdorov'e”, 1989.- 22-29 s
4. Скурихин Г., Шатерникова Н. Химический состав пищевых продуктов / Справочное пособие.-Москва.-1984.
Skurihin G., Shaternikova N. Himicheskij sostav pishhevyh produktov / Spravochnoe posobie.-Moskva.-1984.

ՍԱՄՎԵԼ ԽԱՇԱՏՐՅԱՆ - ՄՈՆԻՏՐԻՆԳ ՖԱԿՏՐՈՎ ՎԼԻՅՈՒՑԻՑԻՑ ԻՆ ԱՄՍՏՎԵՆՆՈՒ ՄԻ ՓԻԶԻԿԵՍԿԱ ՃԵՂԵԼՆԵՑՏՎՈՒՄ ԵՄ ՎՅԱԿՆԵՐՈՒՄ

Կլյուչեւե սլուա: *ստւտենտկի, անկետնիյ օփրոս, րազիոննօ քիտանիե, սմստւեննա և ֆիզիկեսկա ակտիւնոստ*

Յ ատւթե քրեմստւեննա օսօբեննօստի վլիյաննա րազիոննօ քիտաննա ստւտենտօք վոսա նա իք սմստւեննօստ և ֆիզիկեսկօստ ճեղտելնօստ. Քազննաթնաթոսա վիճոստ և քօճօստօստ օրգաննազիոննօ քիտաննա և

анализируются данные анкетного опроса среди студенток Государственного университета им В. Я. Брюсова, результаты которых обеспокаивающие. Подавляющее большинство студентов умственную и физическую деятельность реализуют в условиях недостаточного употребления пищи. В течение рабочего дня прием пищи студентов осуществляется произвольно, а ее распределение обусловлено объемом проделанной работы и промежутком времени рабочего дня. Полученные данные могут быть полезны студентам для ориентировки и перестройки процесса организации рационального питания, адаптации их к предлагаемым условиям и полученным результатам.

SAMVEL KHACHATRYAN - MONITORING OF FACTORS INFLUENCING THE MENTAL AND PHYSICAL ACTIVITY OF UNIVERSITY STUDENTS

Keywords: *students, questionnaire, balanced diet, mental and physical activity*

The article presents the peculiarities of the influence of students' rational nutrition on their mental and physical activity. The types and approaches of the organization of rationed nutrition are explained and the data of the questionnaire survey among the students of the Brusov State University are analyzed. The results are discouraging. The vast majority of students perform mental and physical work in conditions of noticeable malnutrition, endangering their health and the efficiency of mental and physical work. During the working day, the food intake of the students is carried out arbitrarily, and its distribution during the working day is unconditional by the volume of the work done and the schedule of the working day. The obtained data can be useful for the students for orientation and restructuring of the process of organizing rationed nutrition, adapting them to the proposed conditions and the received results.

Ներկայացվել է՝ 10.03.2021
Գրախոսվել է՝ 09.03.2021

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՖՐԻԴԱ ՀԱԿՈՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ մանկավարժական կրթություն, մանկավարժական կրթության գործառույթներ, մանկավարժական կրթության համակարգ, մանկավարժական գործունեություն, մանկավարժի մասնագիտական դերեր, մանկավարժական կոմպետենտություն

Ներկայումս ՀՀ-ում կրթության ոլորտի զարգացումն ուղեկցվում է հիմնարար բարեփոխումներով, որոնց համատեքստում վերջին երկու տասնամյակների ընթացքում հետազոտողների, մանկավարժների և կրթության կառավարիչների ուսումնասիրությունների առանցքում են մանկավարժների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, մանկավարժական մոտիվացիայի ու մանկավարժական կոմպետենտության բարձրացման, մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետության և սովորողների առաջադիմության փոխկապակցվածության, ինչպես նաև մանկավարժների մասնագիտական գործունեությանն առնչվող մի շարք այլ հիմնախնդիրները: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ կրթությունը հարափոփոխ ոլորտ է և բնութագրվում է նոր գիտելիքների, կարողությունների, հմտությունների շարունակական ձևավորմամբ ու փոխանցմամբ, որը ենթադրաբար պահանջում է մանկավարժների մասնագիտական փորձի և դասավանդման հմտությունների պարբերական կատարելագործում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկավարժական կրթությունը մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հիմքն է, և նաև մանկավարժական կրթության որակով է պայմանավորված մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետությունն ու պետության կրթության որակը՝ սույն հոդվածն անդրադառնում է ՀՀ-ում մանկավարժական կրթության համակարգում առկա հիմնախնդիրներին ու դրանց լուծման ուղիներին: Հոդվածի շրջանակում ուսումնասիրվել է թեմային առնչվող մասնագիտական հայալեզու և օտարալեզու արդի գրականություն, իրականացվել են կրթության ոլորտի փորձագետների հետ խորքային հարցազրույցներ,

ինչպես նաև ՀՀ 11 մարզերի 432 ուսուցիչների շրջանում անցկացվել է էլեկտրոնային հարցում՝ բացահայտելու մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացներում առկա հիմնախնդիրները:

Մանկավարժական կրթությունը կրթության համակարգը ձևավորող ենթահամակարգերից է և առանցքային նշանակություն ունի կրթության համակարգի արդիականացման գործընթացում, քանի որ իրականացնում է մանկավարժների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, հասարակության սոցիալ-մշակութային արժեքների ձևավորման ու փոխանցման, ոլորտային գիտական հետազոտությունների կատարման, ուսումնական հաստատությունների զարգացման ու դասավանդման նորարարական տեխնոլոգիաների բացահայտման ու կիրառման գործառույթներ (Асадуллин, Фролов 2017: 53, 57): Այսպիսով, մանկավարժական կրթությունը համակարգաստեղծ ոլորտ է և պատրաստում ու վերապատրաստում է պետության պահանջարկին և պատվերին համապատասխան մանկավարժներ, նպաստում է հասարակության սոցիալական կայունությանն ու զարգացմանը, ինչպես նաև՝ հիմնարար և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքների իրականացման միջոցով մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտների զարգացմանը:

Մանկավարժական կրթության զարգացման համատեքստում արդի են դառնում մանկավարժական կրթության համակարգի, մանկավարժական կրթության բովանդակության, նպատակների և վերջնարդյունքների, դասավանդման ու ուսման մեթոդների և միջոցների արդիականացման հիմնահարցերը: Սա հիմնավորվում է ապագա այնպիսի մանկավարժների պատրաստման անհրաժեշտությամբ, որոնք իրենց մասնագիտական գործունեությամբ կիրականացնեն կրթության զարգացման ռազմավարական հեռանկարներից բխող կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները, կնպաստեն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, կրթության ոլորտի բարեփոխումների իրականացմանն ու կրթության որակի բարելավմանը: Կրթական բարեփոխումների իրականացման համատեքստում կարևորվում է շարունակաբար զարգացող կրթական համակարգի համար այնպիսի մանկավարժների մասնագիտական պատրաստումը, որոնք ունակ են ինքնուրույն և ստեղծագործաբար լուծելու մասնագիտական խնդիրները, գիտակցելու մանկավարժական գործունեության անհատական, հասարակական ու պետական նշանակությունը, պատասխանատվություն կրելու իրենց

մասնագիտական գործունեության արդյունքների համար: Մանկավարժների մասնագիտական գործունեությունն ուղղված է սերնդեսերունդ մարդկային փորձն ու սոցիալ-մշակութային արժեքները փոխանցելուն, յուրաքանչյուր անձի անհատական ձևավորմանն ու զարգացմանը, հասարակության մեջ սոցիալական տարբեր դերեր իրականացնելու պատրաստմանը: Մանկավարժական գործունեության արդյունքում ձևավորվում և զարգանում է ոչ միայն անհատը, այլև հասարակության մշակութային, մտավոր, մասնագիտական ներուժը՝ երաշխավորելով տվյալ պետության հեռանկարային զարգացումը:

Մանկավարժի մասնագիտությունը գիտելիքատար մասնագիտություններից է, որը ենթադրում է՝ նրա մասնագիտական գործունեության մեջ կատարվող ամենամեծ ներդրումը գիտելիքն է, և այդ գործունեության հիմնական խնդիրներից են դառնում ստեղծագործաբար այդ գիտելիքների ստեղծումը, փոխանցումն ու կիրառումը: Այս տեսակ մասնագիտություն ունեցող անձինք զբաղվում են մտավոր գործունեությամբ, որը պահանջում է մասնագիտական գիտելիքների և փորձի մեծ պաշար ու դրանք գործնականում կիրառելու և փոխանցելու պատրաստականություն՝ ուղղված արտադրանքի և/կամ ծառայության ստեղծմանը (Ingersoll, Collins 2018: 202): Մանկավարժական գործունեությունը նպատակաուղղված է սովորողների կրթության ու դաստիարակության խնդիրների լուծմանը, նրանց ընդունակությունների և անձնային որակների բացահայտմանն ու զարգացմանը: Եվ քանի որ 21-րդ դարում կրթության հիմնական նպատակը սովորողների անհատական զարգացման ու շարունակական կրթության հնարավորությունների և պայմանների ապահովումն է, ապա մանկավարժները նույնպես պետք է շարունակական կրթության միջոցով համալրեն իրենց մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները (կարողունակությունները):

Դասավանդման և ուսումնառության միջազգային հարցում-հետազոտությունը (Teaching and Learning International Survey) (TALIS 2019: 26) մանկավարժի մասնագիտությունը սահմանում է հետևյալ հինգ բաղադրիչների ամբողջությամբ.

- մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջություն, որը ձևավորվում է մասնագիտական կրթության ընթացքում և համալրվում մասնագիտական գործունեության ընթացքում շարունակական մասնագիտական զարգացման միջոցով,
- հասարակության շրջանում մանկավարժի մասնագիտության հեղինակություն և մանկավարժի կողմից մասնագիտական գործառույթների արդյունավետ իրականացում, ինչպես նաև

մասնագիտական զարգացմանն ու առաջընթացին նպատակաուղղված պետական և ինստիտուցիոնալ քաղաքականություններ,

- գործընկերների մասնագիտական աջակցություն և կոլեգիալ հարաբերությունների հաստատում՝ նպատակաուղղված մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ու կոլեկտիվի ինքնակառավարման մեխանիզմների ամրապնդմանը,
- պատասխանատվություն ու ինքնավարություն, որը մանկավարժները ստանձնում են ամենօրյա աշխատանքում՝ միտված դասարանի արդյունավետ կառավարմանը և սովորողների ակադեմիական առաջադիմության բարձրացմանը,
- սոցիալական արժեքներ:

Կրթական հարացույցի փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է դառնում հրաժարվել ավանդական այն մոտեցումից, որ կրթությունը պատրաստի գիտելիք է տրամադրում, իսկ ուսուցիչներն այդ գիտելիքները կրողներն են: Ուսուցիչների խնդիրն ավելի է բարդանում հանրակրթական ուսումնական հաստատությունների փոփոխվող դերի և գործառույթի պատճառով. դրանք գործում են գիտելիք տրամադրող ֆորմալ և ոչ ֆորմալ այլ հաստատությունների գործառույթյան, ինչպես նաև ուսուցման տարաբնույթ միջոցների թվաքանակի ավելացման պայմաններում (Biesta 2012): Այս համատեքստում ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչները պետք է կարողունակ լինեն հանդես գալու նորարարական նախաձեռնություններով և բավարարելու սովորողների փոփոխվող պահանջները: Նրանք պետք է աշակերտների համար անհրաժեշտ պայմաններ ապահովեն, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ներդնելու ձեռքբերած գիտելիքներն ու փորձը կոնկրետ խնդիրների լուծման գործընթացներում և զարգացնելու իրենց հմտություններն ու կարողությունները: Ուսուցչի և աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցությունը ենթադրում է ոչ միայն տեղեկության հաղորդում աշակերտներին, այլև նրանց ճանաչողական ակտիվության խթանում, ուսուցման գործընթացի կազմակերպում, ուղղորդում, աջակցում և մոտիվացում: Կարելի է փաստել, որ ուսուցիչը հանդես է գալիս որպես մասնագիտական գիտելիքների կրող, դասարանում իր աշխատանքը համակարգող, ինչպես նաև աշակերտներին դասավանդող, ուղղորդող, վերահսկող, աջակցող, իսկ նման մոտեցումն արդեն փոխում է ուսուցման նպատակները, մեթոդներն ու եղանակները, ինչպես նաև մանկավարժի մասնագիտական դերերը: Հետևապես մանկավարժական

կրթությունը պետք է ապագա մանկավարժներին պատրաստի մասնագիտական այդ դերերի և համապատասխանաբար նաև մասնագիտական գործառույթների արդյունավետ իրականացմանը: Ուսումնասիրելով ժամանակակից մանկավարժի մասնագիտական դերային շրջանակը՝ *Գծապատկեր 1-ում* ներկայացվել են մանկավարժական գործընթացում մանկավարժին հատուկ մասնագիտական դերերը:

Գծապատկեր 1. Մանկավարժական գործընթացում մանկավարժի մասնագիտական դերերը

Մանկավարժի մասնագիտական դերերը	Բնութագրում
Դասավանդող (ուսուցանող)	Ստեղծում է շարունակական զարգացման պայմաններ սովորողների համար, իր և սովորողների միջև ապահովում է ակտիվ փոխազդեցություն ու համագործակցություն՝ միտված կրթադաստիարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը:
Սովորողին համաձևավորող	Օգտագործում է ազատ շփման (հաղորդակցման) և կարծիքների փոխանակման հատուկ տեխնոլոգիաներ՝ առաջնորդվելով ուսուցման անձնակենտրոն մոտեցմամբ:
Ֆասիլիտատոր (ուսուցման գործընթացը հեշտացնող)	Սովորողների զարգացման համար ստեղծում է հոգեբանամանկավարժական բարենպաստ պայմաններ, փորձում է կրթադաստիարակչական գործընթացը սովորողի համար առավել հեշտ և մատչելի դարձնել:
Հետազոտող	Իրականացնում է փորձարարական և հետազոտական աշխատանքներ ու հասարակության առջև պատասխանատու է ստացված արդյունքների համար, ձգտում է շարունակաբար համալրել իր մասնագիտական կոմպետենցիաները:
Մեթոդաբան	Ուսումնասիրում և կիրառում է դասավանդման ժամանակակից մեթոդները, ակտիվ համագործակցում է գործընկերների հետ, զբաղվում է իր մասնագիտական որակավորման բարձրացման հարցերով և շարունակական

	մասնագիտական կրթությամբ:
Կառավարիչ	Իրականացնում է կառավարչական գործառույթներ, մոդելավորում է կրթադաստիարակչական գործունեությունը, սահմանում է ուսումնառության առաջնահերթ նպատակներն ու խնդիրները, սովորողների վարքագծի կանոնները, կատարում է ուսուցման անհրաժեշտ միջոցների և մեթոդների ընտրություն, որոնք հնարավորություն կտան կոնկրետ ժամանակահատվածում իրականացնել սահմանված նպատակները:
Նորարար	Մշակում է նորարարական գաղափարներ և դասավանդման մեթոդներ, որոնք ուղղված են սովորողների կոմպետենցիաների համալրմանը:
Մենթոր	Ռեֆլեքսիայի, ինչպես նաև սովորողների ֆիզիոլոգիական ու հոգեկան զարգացման առանձնահատկությունների, մտավոր և բարոյական դաստիարակության մակարդակների ուսումնասիրության միջոցով աջակցում է սովորողների անհատական աճի ապահովմանը:
Վերահսկող	Իրականացնում է վերահսկողություն և գնահատում, բացահայտում է աշակերտների կողմից ձեռքբերված արդյունքների և սահմանված նպատակների միջև համապատասխանությունն ու տարբերությունները, դրանց հիման վրա նախանշում և պլանավորում է սխալների ուղղման գործողությունների պլանը:
Օգնող (աջակցող)	Խթանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը, հուսադրում է, ներշնչում է նրանց որոշակի գործողությունների և սահմանված նպատակների իրականացման գործընթացներում:

Նշված մասնագիտական դերերը փաստում են, որ 21-րդ դարում մանկավարժը գիտելիքների փոխանցման գործառույթից զատ, ստեղծում է բարենպաստ պայմաններ, որպեսզի սովորողը հնարավորություն ունենա ձևավորելու իր անհատական փորձը, զարգացնելու իր հաղորդակցական և կազմակերպչական կոմպետենցիաները, կայացնելու ինքնուրույն որոշումներ ու պատասխանատու լինելու դրանց համար: Ներկայումս մանկավարժն ունի բազմագործառույթ դերակատարում. նա

պետք է ոգեշնչի սովորողներին, ուղղորդի դեպի նոր, յուրահատուկ որոշումների կայացմանը, որն անհրաժեշտ է հասարակությանը զարգացման տվյալ փուլում, մանկավարժն իր օրինակով պետք է առաջնորդի սովորողներին, իսկ առաջնորդման համար նա պետք է հմուտ լինի, որը պահանջում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական համալրում: Հենց այս հանգամանքն այն շարժիչ ուժն է, որը դրդում է անձնակենտրոն մոտեցմամբ իրականացնելու մասնագիտական, այդ թվում նաև մանկավարժական կրթության կազմակերպումը: Մանկավարժական կրթության կազմակերպման գործընթացում անձնակենտրոն մոտեցումը դիտարկվում է որպես կողմնորոշիչ դեպի ապագա մանկավարժի գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ինչպես նաև ստեղծագործ անհատականության զարգացմանը: Անձնակենտրոն մոտեցմամբ մանկավարժական կրթության իրականացման հիմքում արժեքների և շարժառիթների, մանկավարժական գործընթացի սուբյեկտների փոխազդեցության մեթոդների ու միջոցների համախումբ է, որը նպատակաուղղված է ապագա մանկավարժի ընդունակությունների առավելագույն զարգացմանը: Այս պարագայում սովորողն իր պահանջմունքներով և հետաքրքրություններով, ձեռքբերած փորձով դառնում է կրթական գործընթացի ակտիվ մասնակից, որը կարևորում է շարունակաբար իր կոմպետենցիաները համալրելու և ինքնակրթվելու անհրաժեշտությունը:

Մանկավարժների մասնագիտական դերերի փոփոխությամբ և մասնագիտական կրթության համակարգի զարգացման ռազմավարական նպատակներով պայմանավորված՝ ապագա մանկավարժների մասնագիտական պատրաստման փորձի նկատմամբ նոր մոտեցումների ձևավորման անհրաժեշտություն է առաջացել, որի դեպքում այդ մանկավարժները պատրաստ կլինեն իրականացնելու մասնագիտական գործունեությունը կրթության մրցակցային պայմաններում՝ նպատակաուղղված անհատի պահանջմունքների և կարիքների բավարարմանն ու պետության սոցիալական պատվերի կատարմանը: Կրթության համակարգում անհրաժեշտ են այնպիսի մանկավարժներ, որոնք կարող են ակտիվ փոխազդեցության մեջ գտնվել մանկավարժական գործունեության բոլոր մասնակիցների հետ: Մանկավարժների մասնագիտական պատրաստվածության նկատմամբ ներկայացվող ժամանակակից պահանջները ենթադրում են մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացում կոմպետենտային մոտեցման կիրառում՝ միտված ապագա մանկավարժների ընդհանուր մշակութային, մասնագիտական և

բարոյական զարգացմանը: Մանկավարժական գործունեության իրականացման համար միայն տեսական գիտելիքները բավարար չեն, հետևապես մանկավարժական կրթությունը պետք է ապագա մանկավարժին զինի նաև այդ գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններով և հմտություններով, որը հնարավոր է մանկավարժական կրթության կազմակերպման կոմպետենտային մոտեցման միջոցով, որի պարագայում որպես կրթական վերջնարդյունք դիտարկվում են ոչ միայն ձեռքբերված գիտելիքները, այլև տարբեր իրավիճակներում անհատի գործելու կարողություններն ու հմտությունները: Այս մոտեցումը պահանջում է վերանայել սովորողների և մանկավարժների փոխհարաբերություններն ու սովորողների նկատմամբ դիրքորոշումը, իրականացնել կրթության համակարգում էական փոփոխություններ գաղափարական, բովանդակային և մեթոդական տեսանկյուններից:

Արդյունավետ գործունեություն ծավալելու համար մանկավարժները պետք է տիրապետեն կոմպետենցիաների լայն շրջանակի: Կոմպետենցիաների այդ շրջանակն ընդգրկում է առարկայական գիտելիքները, մանկավարժական հմտություններն ու սովորողների տարաբնույթ խմբերի հետ աշխատելու կարողությունները, ուսումնական հաստատության զարգացմանն ուղղված մասնագիտական ներդրումներն ու շարունակաբար մասնագիտական զարգացում ապահովելու ձգտումները (OECD 2005: 132): Մանկավարժական կոմպետենտությունը ձևավորվում է մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում, սակայն եթե դա պետք է դիտարկել որպես մասնագիտական կոմպետենտության ձևավորման սկզբնական փուլ և նախադրյալ, ապա մասնագիտական գործունեությունը, մասնագիտական զարգացման ու որակավորման բարձրացման գործընթացները՝ մասնագիտական կոմպետենտության և դրա առանձին բաղկացուցիչների մակարդակի բարձրացման ու զարգացման միջոցներ:

«Հ-ում մանկավարժական կրթության կազմակերպման կոմպետենտային մոտեցումը պահանջում է վերանայել մանկավարժական կրթության բովանդակությունն ու կազմակերպման միջոցները, ձևավորել մանկավարժական կրթության համակարգ, որը կհամապատասխանի արդի պահանջներին: Հետևապես, անհրաժեշտ է մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում «ուսանող - դասախոս - ուսումնական ձեռնարկ» շրջանակից անցում կատարել «ուսանող, անհատականություն - ուսանողակենտրոն մոտեցմամբ դասավանդող դասախոս -

տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ամբողջություն» բաղադրիչների միասնությամբ ուսուցմանը: Արդյունքում մանկավարժների մասնագիտական պատրաստումը կդիտարկվի որպես ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունների ամբողջություն՝ հիմնված նրանց միջև համագործակցության, շրջակա միջավայրի հետ փոխազդեցության, հոգևոր և նյութական արժեքների ձևավորման վրա ու կնպաստի ուսանողների անհատական ունակություններին համապատասխան մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների ձևավորմանը:

Այսպիսով, մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացում կոմպետենտային մոտեցմամբ առաջնորդվելը կնպաստի այդ գործընթացում որակական փոփոխությունների իրականացմանը, ինչպես նաև այդ գործընթացի՝ պետական կրթական չափորոշիչներին և ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխանության ապահովմանը: Մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ապագա մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացի փոփոխություններն ինքնաբերաբար հանգեցնում են մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի պատրաստման բովանդակային փոփոխությունների, քանի որ վերջիններս զբաղվում են այնպիսի մասնագետների պատրաստմամբ և վերապատրաստմամբ, որոնք պետք է կարողանան ժամանակակից պահանջներին համապատասխան կրթադաստիարակչական գործունեություն իրականացնել:

Մանկավարժական կրթությունը պետք է դիտարկել որպես շարունակական գործընթաց՝ երաշխավորելու մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետությունը: Հանրակրթական և մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերի ու ուսումնական պլանների միջև փոխկապակցվածությունը բավարար չէ մանկավարժական կրթության որակը ապահովելու համար, անհրաժեշտ է նաև ստեղծել համագործակցություն կրթության ոլորտում քաղաքականություն մշակողների, ուսումնական հաստատությունների և մասնագիտական հանրության միջև (European Commission 2014: 3): Մանկավարժական կրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում են բոլոր դերակատարները՝ կրթության ոլորտի լիազոր մարմինը, մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները, ՊԴ կազմը և կրթության ոլորտի մյուս բոլոր շահակիցները: Կրթական

բարեփոխումների իրականացման համատեքստում մանկավարժական կրթության ոլորտի շահակիցների համար նոր մարտահրավերներ են ձևավորվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկավարժները կրթության որակը պայմանավորող առաջնային դերակատարներից են:

Սույն հոդվածի շրջանակում իրականացված հարցմանը մասնակցած 432 ուսուցիչներից 410-ը ունեցել են մանկավարժի որակավորում, իսկ 22-ը՝ ոչ: Հարցմանը մասնակցած ուսուցիչների 83.7%-ը նշել են, որ իրենց մասնագիտական պատրաստվածության մակարդակը համապատասխանում է ուսուցչին ներկայացվող արդի պահանջներին, այսինքն՝ ունեն ժամանակակից ուսուցչին անհրաժեշտ կոմպետենցիաները, մինչդեռ 16.3%-ը նշել են, որ մասամբ է համապատասխանում, որի պատճառների թվում են նաև ոչ որակյալ մանկավարժական կրթությունը և ոչ բավարար մանկավարժական փորձը: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցման մասնակիցների գերակշիռ մասը նշել է, որ իրենց մասնագիտական պատրաստվածության մակարդակը համապատասխանում է ուսուցչին ներկայացվող արդի պահանջներին՝ հարկ է նաև առանձնացնել ժամանակակից ուսուցչին առաջնահերթ կերպով անհրաժեշտ հիմնական մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները: Հարցման մասնակիցները ժամանակակից ուսուցչի համար առավել կարևոր են համարել հետևյալ՝ մեթոդական, դաստիարակչական, աշակերտների տարբեր տարիքային խմբերի հետ աշխատելու, գնահատման, հետազոտական, թեստեր կազմելու մասնագիտական կոմպետենցիաները: Ընդհանրական կոմպետենցիաներից առանձնացրել են հետևյալները՝ կազմակերպչական ու կառավարչական, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ կիրառելու, հաղորդակցման (գրավոր և բանավոր խոսքի), նախագծման և պլանավորման, ուսումնաճանաչողական կոմպետենցիաները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցիչների մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները ձևավորվում են մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ կարևոր է պարզել՝ ինչպես են նրանք գնահատում ՀՀ-ում մանկավարժական կրթության որակը, ինչպես նաև՝ որքանով է այն նպաստում ապագա մանկավարժների մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների ձեռքբերմանը: ՀՀ-ում մանկավարժական կրթության որակը ուսուցիչների 63.01%-ը գնահատել են միջին, 13.48%-ը՝ ցածր, 12.54%-ը՝ դժվարացել են պատասխանել, իսկ 10.97%-ը բարձր են գնահատել այն: Հարցման մասնակիցների 50% և

ավելին նշել են, որ մասամբ են համաձայն, որ ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժական կրթությունը նպաստում է ուսանողների մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների ձեռքբերմանը:

Այն հարցին, թե որն է առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակներում մասնագիտական մանկավարժական կրթության առավել նպատակահարմար տևողությունը, հարցման մասնակից ուսուցիչների գերակշիռ մասը բակալավրիատի համար առաջարկել են չորս ակադեմիական տարի, իսկ մագիստրատուրայի համար՝ մեկ ակադեմիական տարի տևողությունը: Այսպիսով, հարցման մասնակիցներն առաջարկել են բակալավրիատում ուսումնառության տևողությունը թողնել անփոփոխ, իսկ մագիստրատուրայում՝ կրճատել մեկ տարով: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրով մագիստրատուրայում ուսումնառության մեկ տարվա ընթացքում ապագա մանկավարժները չեն հասցնի ձեռք բերել գործնական հմտությունների անհրաժեշտ մակարդակը, եթե բակալավրիատի մակարդակում չեն ստացել մանկավարժի որակավորում: Հետևապես, այդ պարագայում մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրի մագիստրատուրայի մակարդակում պետք է սահմանվեն մուտքային պահանջներ:

Կարևորելով մանկավարժների մասնագիտական մոտիվացիայի դերը մանկավարժական գործունեության արդյունավետության ապահովման գործընթացում՝ պետք է նշել, որ հարցման մասնակիցների 42.35%-ը միանշանակ պնդել են, որ եթե մասնագիտություն ընտրելու հնարավորություն լիներ, նորից կընտրեին մանկավարժի մասնագիտությունը: Հատկանշական է այն հանգամանքը, որ հարցվածների 12.55%-ը նույնիսկ լիովին անհամաձայն են այս պնդմանը, որը փաստում է՝ ուսուցիչների մի մասն ունի մասնագիտական մոտիվացիայի բավականին ցածր մակարդակ և ուսուցչությամբ զբաղվելու ցանկության բացակայություն:

Էմպիրիկ տվյալների վերլուծությունը փաստում է, որ ՀՀ-ում մանկավարժական կրթության համակարգում առկա մի շարք բովանդակային և կառուցվածքային հիմնախնդիրները բացասաբար են ազդում մանկավարժական կրթության որակի վրա: Դրանց թվում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- երկարաժամկետ հեռանկարների համար կրթական ծառայությունների շուկայի պահանջների ուսումնասիրության և կանխատեսումների բացակայություն,

- ազգային (պետական) մակարդակում մանկավարժական կրթության հեռանկարային զարգացման ռազմավարության բացակայություն,
- ազգային (պետական) մակարդակում մանկավարժների պահանջարկի մշտադիտարկման բացակայություն, որը հանգեցնում է շրջանավարտների զբաղվածության ցածր մակարդակի,
- ուսուցիչներին ներկայացվող մասնագիտական պահանջներն ու չափորոշիչներն ամփոփող համապարփակ փաստաթղթի բացակայություն,
- կրթական ծրագրերի մշակման գործընթացներում շահակիցների ներգրավվածության բավականին ցածր մակարդակ,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դպրոցների միջև համագործակցության ոչ բավարար մակարդակ,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դիմորդների ընդունելության միավորների ցածր շեմ,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում ՊԴ կազմի մասնագիտական գործունեության արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայություն և ոչ բավարար մասնագիտական կոմպետենցիաներ ունեցող դասախոսների պահպանում,
- ՊԴ կազմի կողմից մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների նկատմամբ դիմադրություն,
- ուսումնառության ընթացքում մանկավարժական պրակտիկայի արդյունավետության ոչ բավարար մակարդակ,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնամեթոդական նյութերի և նյութատեխնիկական բազայի հագեցվածության ոչ բավարար մակարդակ,
- գործնական հմտությունների ձևավորմանը նպաստող դասընթացների և հետազոտական աշխատանքների սակավաթիվություն,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակության և ուսուցման մեթոդների արդիականացման դանդաղ ընթացք:

ՀՀ-ում մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացներում և մանկավարժության մասնագիտության կրթական

ծրագրերում անհրաժեշտ են մի շարք փոփոխություններ, որոնք կնպաստեն վերոնշյալ հիմնախնդիրների լուծմանը: Դրանց թվում են.

- մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգի մշակում՝ ներգրավվելով ոլորտի շահակից բոլոր խմբերին,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ քաղաքականությունների (լրա)մշակում և աշխատաշուկայի պահանջներին ու պահանջարկին, պետական կրթական չափորոշիչներին ու ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերում ներգրավվելու մեխանիզմների ստեղծում և կիրառում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացում և բովանդակային փոփոխությունների իրականացում, ինչպես նաև կամընտրական դասընթացների շրջանակի ընդլայնում և ուսանողներին ընտրության հնարավորության ընձեռում,
- ուսումնառության ընթացքում շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և իրականացում, ինչպես նաև պրակտիկայի նկատմամբ հետևողական մոտեցման ցուցաբերում և օբյեկտիվ գնահատում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ՊԴ կազմի վերապատրաստումների առավել հաճախակի կազմակերպում և միջազգային առաջատար մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ ՊԴ կազմի փոխանակման ծրագրերի շրջանակների ընդլայնում,
- ուսումնամեթոդական նյութերի և նյութատեխնիկական բազայի կատարելագործում, այդ թվում տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցվածություն և կիրառման ընդլայնում, տպագիր ու էլեկտրոնային ուսումնական պաշարների համալրում, ինչպես նաև հայալեզու որակյալ մասնագիտական գրականության ստեղծում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գիտական և գիտաարտադրական գործունեության ընդլայնում ու արդյունավետության բարձրացում,

- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատությունների և դպրոցների միջև սերտ կապի ու շարունակական համագործակցության ապահովում, այդ համագործակցության շրջանակներում ապագա մանկավարժների համար ավելի հաճախակի դասալսումների կազմակերպում,
- մասնագիտական զարգացման դպրոցների ստեղծում՝ միտված մանկավարժների մասնագիտական պատրաստման ու զարգացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ոլորտային հետազոտությունների իրականացմանն ու դասավանդման առաջավոր փորձի բացահայտմանն ու տարածմանը,
- ապագա մանկավարժների միջազգային շարժունության խթանում և փոխանակման ծրագրերի շրջանակների ընդլայնում,
- նախագծային աշխատանքներ ու հետազոտություններ իրականացնելու հմտությունների ձևավորմանը և զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում, ինչպես նաև հետազոտական աշխատանքներում ուսանողներին առավել հաճախակի ներգրավվում,
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողների գիտելիքների ստուգման մեթոդների և քննությունների կարգի վերանայում և խստացում:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ պետք է փաստել, որ ՀՀ-ում մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության և նրանց ներկայացվող մասնագիտական պահանջների միջև եղած անհամաձայնությունները պայմանավորված են նաև մանկավարժական կրթության համակարգում առկա հիմնախնդիրներով: Մանկավարժական կրթության արդիականացումը պետք է նպատակաուղղված լինի մանկավարժական կրթության կազմակերպման և իրականացման ընթացքի, պայմանների ու վերջնարդյունքների բարելավմանը: Ներկայացված հիմնախնդիրների լուծմանն ուղղված վերոնշյալ քայլերը կարող են նպաստել մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու այնպիսի մանկավարժների մասնագիտական պատրաստմանը, որոնք մասնագիտական կոմպետենցիաների միջոցով ունակ կլինեն լուծելու մանկավարժական խնդիրները, կտիրապետեն

Ժամանակակից կրթական ու տեղեկատվական տեխնոլոգիաներին, կունենան ընդհանուր կրթվածության բարձր մակարդակ, մանկավարժական մշակույթ՝ միտված շարունակական մասնագիտական զարգացմանն ու պատշաճ կերպով կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին և նորարարական գործընթացներին արձագանքելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Асадуллин Р.М., Фролов О.В., *Современный педагогический университет: поиск новой идентичности*, Сибирский педагогический журнал, N 3, 2017, ст. 53-63.
Asadullin R.M., Frolov O.V., *Sovremennyy pedagogicheskiy universitet: poisk novoy identichnosti*, Sibirskiy pedagogicheskiy zhurnal, N3, 2017, st. 53-63.
2. Biesta G. *The Future of Teacher Education: Evidence, Competence or Wisdom?* Research on Steiner Education 3 (1), 2012, pp.8–21.
3. European Commission, *Initial Teacher Education in Europe: An Overview of Policy Issues*, 2014.
4. Ingersoll R.M., Collins G.J. *The Status of Teaching as a Profession*. In J. Ballantine, J. Spade, and J. Stuber (Eds.), *Schools and Society: A Sociological Approach to Education* (p.199-213) 6th Ed. CA: Pine Forge Press/Sage Publications, 2018.
5. The Organisation for Economic Co-operation and Development (OECD), *Teachers Matter: Attracting, Developing and Retaining Effective Teachers*, Paris, 2005, <https://www.oecd.org/education/school/attractingdevelopingandretainingeffectiveteachers-finalreportteachersmatter.htm>.
6. The Teaching and Learning International Survey (TALIS) 2018 Results, *Teachers and School Leaders as Lifelong Learners*, Vol. 1, OECD Publishing, Paris, 2019, https://www.oecd-ilibrary.org/education/talis-2018-results-volume-i_1d0bc92a-en.

ФРИДА АКОПЯН - АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ПЕДАГОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: педагогическое образование, функции педагогического образования, система педагогического образования,

педагогическая деятельность, профессиональные роли педагога, педагогическая компетентность

В статье рассматриваются существующие проблемы в системе педагогического образования Республики Армения и предлагаются соответствующие изменения для их решения. В рамках статьи была изучена профессиональная литература по теме, проведены глубинные интервью со специалистами в области образования, а также проведен электронный опрос 432 учителей в 11 регионах Армении с целью выявления проблем педагогического образования в Республике Армения.

FRIDA HAKOBYAN - CURRENT ISSUES OF ORGANIZATION OF TEACHER EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: teacher education, functions of teacher education, teacher education system, pedagogical activity, professional roles of teacher, pedagogical competence

This article touches upon the existing issues of teacher education system in the Republic of Armenia and proposes corresponding changes to resolve them. Within the framework of the article, professional literature related to the topic was studied, in-depth interviews were conducted with education experts, as well as an electronic survey was conducted among 432 teachers in 11 regions of Armenia to identify issues of organization of teacher education in the Republic of Armenia.

Ներկայացվել է՝ 09.09.2021
Գրախոսվել է՝ 09.09.2021

**ՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հիմնաբառեր՝ սպորտային փոխաբերություն, տեղեկատվական բաց, մտածելակերպ, ռազմավարություն, կոնցեպտուալ փոխաբերություն, դինամիկ համարժեքություն, միջմշակութային հաղորդակցություն, գործաբանական հայեցակերպ, խոսքարկող, սպորտային խոսույթ

Սույն հոդվածում փորձ է արվում բացահայտել անգլերեն ֆուտբոլային փոխաբերությունների թարգմանության դժվարությունները, հաշվի առնելով այն փաստը, որ թարգմանիչը գործ ունի երկու տարբեր հասկացության ոլորտների հետ: Ներկայացվում են թարգմանության ընթացքում առաջ եկող խնդիրները, մասնավորապես երբ թարգմանիչը փորձում է լրացնել ոչ միայն իր և սկզբնաղբյուր լեզվական տիրույթը ներկայացնող մարդկանց միջև գոյություն ունեցող տեղեկատվական բացը, այլև հաղթահարել իր և նրանց մտածելակերպերի միջև գոյություն ունեցող տարբերությունները: Թարգմանության ուսուցման ռազմավարություն մշակելիս, շեշտադրվում է հասկացության քարտեզագրման (conceptual mapping), ինչպես նաև մտածելակերպի քարտեզագրման (mind mapping) դերը իմաստային-գծագրական դասակարգիչների կիրառման գործընթացում: Առաջարկվում է սպորտային փոխաբերությունները թարգմանելիս, համադրել անգլերեն սպորտային փոխաբերությունները հայերեն ոչ սպորտային փոխաբերություններով և անգլերեն ոչ սպորտային փոխաբերությունները հայերեն սպորտային փոխաբերություններով թարգմանելու ռազմավարությունները:

Փոխաբերությունը ոճական հնար է, որը խոսքը պատկերավոր, արտահայտիչ է դարձնում: Փոխաբերությունը հիմնվում է առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին հատկանիշների նմանության, նաև գործառական ընդհանրության վրա: Խոսքը հիմնականում փոխաբերական է, այսինքն՝ բառերն իրենց բուն իմաստով ավելի հազվադեպ են գործածվում, քան փոխաբերական իմաստով:

Օտար լեզու ուսումնասիրելու դժվարություններից մեկն այն է, որ սովորողները փորձում են յուրացնել նոր բառի բուն իմաստը, չնայած ցանկացած բառ ոչ միայն գործածվում է փոխաբերաբար, այլև ունենում է մեկից ավելի փոխաբերական իմաստներ: Մի լեզվից մեկ ուրիշ լեզու որևէ բառ, արտահայտություն թարգմանելիս, անձը փորձում է գտնել տվյալ բառի, արտահայտության համարժեքը: Դա դժվար է, քանի որ նույն երևույթը մի լեզվով կարող է նկարագրվել փոխաբերաբար, մյուս լեզվով՝ առանց ռճական հնարների կիրառման: Գործն ավելի է բարդանում, երբ թարգմանիչը փորձում է թարգմանել այսպես կոչված կոնցեպտուալ փոխաբերությունները, որոնք ըստ Լակոֆի և Ջոնսոնի՝ ներկայացնում են մեր մտածողության կառուցվածքը կամ կազմում են մեր մտածողության ստաղծը (Lakoff and Johnson 1980): Կոնցեպտուալ փոխաբերությունը վերաբերում է մի գաղափարի կամ ճանաչողական տիրույթի (domain) տեսանկյունից մեկ ուրիշ գաղափար հասկանալուն: Կարևոր է նշել, որ ճանաչողական տիրույթը վերաբերում է լեզվակրի մտածելակերպին և այն հնարավոր է ուսումնական և այլ պայմաններում մոդելավորել՝ կիրառելով կոնցեպտուալ քարտեզագրում (conceptual mapping) կամ մտքի քարտեզագրում (mind mapping): Ակնհայտ է, որ թարգմանիչը թարգմանության ընթացքում մտքի քարտեզագրում իրականացնում է հիմնականում ենթագիտակցական մակարդակում:

Ջորջ Լակոֆը և Մարկ Ջոնսոնը իրենց «Փոխաբերություններ, որոնցով ապրում ենք» (Metaphors We Live By, 1980) գրքում ցույց են տալիս, որ կոնցեպտուալ փոխաբերությունների կարելի է հանդիպել առօրյայում, և դրանք ոչ միայն ձևավորում են հաղորդակցությունն, այլև՝ մտածելու և գործելու ձևերը: Խնդիր է դրվում կիրառել թարգմանության ընթացքում կոնցեպտուալ փոխաբերությունների լեզուն, որն ընկած է առօրյա հաղորդակցման հիմքում, մեկնաբանելու արդյունավետ եղանակներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոխաբերությունները գերակշռող են հաղորդակցության մեջ, և դրանք ուղղակի չեն կիրառվում լեզվում: Ընդ որում՝ իրականում մենք որևէ բան ըմբռնում և ըմբռնելուց հետո գործում ենք, գործածելով անհրաժեշտ քանակությամբ փոխաբերություններ:

Կոնցեպտուալ փոխաբերությունների տեսությունը հաճախակի է կիրառվում թարգմանության ռազմավարությունների մշակման գործընթացում: Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում ֆուտբոլին վերաբերող փոխաբերությունների թարգմանության հիմնախնդիրը, քանի որ դրանք անզլերենի խոսակցական լեզվի կարևոր բաղադրիչ են և աչքի են ընկնում իրենց հատկաբանական յուրահատկություններով: Շատ անզլերեն ֆուտբոլային

փոխաբերություններ հայերեն դժվարությամբ են թարգմանվում, քանի որ լինելով հատկաբանական դարձվածքային միավորներ, հանդես են գալիս որպես բառ-իրակություններ:

Թարգմանաբանության մեջ ընդունված ռազմավարություն է թիրախային լեզվի փոխաբերությունը մայրենի լեզվում գործածվող փոխաբերությամբ ներկայացնելը: Այսինքն՝ սկզբնաղբյուր լեզվի փոխաբերությունը թարգմանվում է թիրախային լեզվի համարժեք փոխաբերությամբ: Հիմնական դժվարությունն այն է, որ փոխաբերությունը արտացոլում է մեր հասկացության կամ ճանաչողական համակարգը: Ակնհայտ է, որ անգլախոս լեզվակրի և հայախոս լեզվակրի ճանաչողական համակարգերը թե՛ հասկացությունների, թե՛ իրադրությունների, թե՛ տեղի ունեցող իրադարձությունների, ընդհանրապես երևույթների մակարդակներում միշտ չէ որ կարող են լինել նույնը: Այստեղ առաջ են գալիս ոչ միայն տեղեկատվական բացերի լրացման, այլև մտածելակերպերի տարբերությունների հաղթահարման հիմնախնդիրները:

Երկրորդ ռազմավարությունը ենթադրում է թարգմանել անգլերեն սպորտային փոխաբերությունը, որի ընթացքում տեղի է ունենում յուրահատուկ տեղարշարժ սկզբնաղբյուր լեզվի տիրույթից թիրախային լեզվի տիրույթ: Երրորդ ռազմավարությունը վերաբերում է սպորտային փոխաբերությունների ոչ սպորտային փոխաբերություններով թարգմանությանը: Այն ենթադրում է շեշտը դնել տեղեկատվության ճիշտ հաղորդման վրա: Չորրորդ ռազմավարությունը ենթադրում անգլերեն ոչ սպորտային փոխաբերության թարգմանություն հայերեն սպորտային փոխաբերություններով: Այդ պարագայում կարևոր է ճիշտ մոդելավորել տվյալ իրադրությունը, ենթատեքստը:

Հատկապես դժվարություն են ներկայացնում գլխաբառերի, հոդվածների վերնագրերի թարգմանությունը:

Թարգմանության ընթացքում դինամիկ համարժեքություն ապահովելու կարևոր պայման է փոխաբերությունների տեղեկատվական և հաղորդակցական ներուժը, կարևորությունը հաշվի առնելը: Մի կողմից, խնդիր է դրվում ամբողջությամբ փոխանցել տեղեկատվությունը: Մյուս կողմից, թարգմանիչը պետք է մտածի չաղճատել սկզբնաղբյուր հանդիսացող լեզվով ներկայացվող փոխաբերության իմաստը: Ինչպես նշում են Հաթիմը և Մանդին. «թարգմանության հաջողությունը պայմանավորված է համարժեքության դինամիկ ձևերի ապահովմամբ (Hatim & Munday 2004: 42):

Անհրաժեշտ է հստակորեն տարբերակել թարգմանության ռազմավարությունները թարգմանության ուսուցման

ռազմավարություններից: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է յուրացնել տեքստի շուրջ աշխատանքի, վերլուծության, վերլուծական ընթերցանության և այլ հնարները, տարբերակել տեքստի մեկնաբանության ներակա և արտակա եղանակները (implicit, explicit), հստակ պատկերացում ունենալ վերլուծվող տեքստերի ոճական, ժանրային առանձնահատկությունների մասին: Նորդը համոզված է, որ թարգմանության ուսուցումը և թարգմանությունը փոխկապակցված գործընթացներ են (Nord 2009):

Մի կողմից, թարգմանիչը խնդիր է դնում լրացնել անհրաժեշտ առաջ եկող տեղեկատվական բացը, այսպես կոչված իմաստային բացերը կամ լակունաները՝ շարունակաբար հարստացնելով իր հենքային գիտելիքները: Մյուս կողմից՝ խնդիր է դրվում իրականացնել միջմշակութային հաղորդակցություն, առանց լեզվակիրների հետ կենդանի շփման:

Անգլերեն սպորտային խոսույթի թարգմանության ռազմավարությունն ընտրելիս, պետք է հաշվի առնել նախ և առաջ սպորտային տեղեկատվության գործաբանական հայեցակերպը: Ինչպես նշում է Յ. Ա. Կոլպաշչիկովան. «Ուսումնասիրվող տեքստերի գործաբանական ծրագրի մեջ են մտնում երեք գործառույթ՝ տեղեկատվական, խոսքարկող և ապելյատիվ» (Колпащикова 2016: 120-122):

Տեղեկատվական գործառույթը, ըստ նույն հեղինակի այն է, երբ հասցեատիրոջը տեղեկատվություն է փոխանցվում: Խոսքարկող գործառույթը ենթադրում է հայտնել տեքստի միջոցով վերաբերմունքը գործողությունների նկատմամբ: Ապելյատիվ գործառույթը ենթադրում է ներգործություն հասցեատիրոջ վրա, որի նպատակն է ստեղծել որոշակի կարծիք տվյալ երևույթի մասին: Սպորտային խոսույթի թարգմանության գործաբանական հայեցակերպը ենթադրում է նախաթարգմանական փուլում սահմանել գործաբանական տեղեկատվության խոսքային միջոցները, որն իրականացվում է բառային, ձևաբանական և շարահյուսական միջոցների վերլուծությամբ: Սպորտային խոսույթի թարգմանության յուրահատկությունն այն է, որ միայն ներտեքստային հատկանիշների ուսումնասիրությամբ հնարավոր չէ ձևավորել գործաբանական մոտեցում: Անհրաժեշտ է իրականացնել տեքստի խոսույթային վերլուծություն (Колпащикова 2016: 120-122):

Լուրջ դժվարություն է սպորտային խոսույթի թարգմանության ժամանակ պահպանել մենթալ հիմքերը: Դա ենթադրում է բավականին խորը հենքային-մասնագիտական գիտելիքների առկայություն:

Փաստորեն թարգմանիչը գործ ունի թիրախային լեզուն ներկայացնող մարդկանց մենթալ կամ մտածելակերպի կողի հետ:

Երբեմն ամենարդյունավետ համարվող ռազմավարությունների կիրառումը չի տալիս ցանկալի արդյունք: Ընդհար է դրվում ոչ միայն յուրացնել համապատասխան բառապաշար, այլև այսպես կոչված անգլերենի փոխաբերական աշխարհի պատկերը: Մյուս դժվարությունն այն է, որ խիստ տարբերվում են հայերենի և անգլերենի ֆրեյմային սլոտները, որը բերում է փոխաբերական բացերի հաղթահարելու հիմնախնդիրը լուծելու անհրաժեշտությունը հասկանալուն (Колпащикова 2016: 120-122):

Սպորտային խոսույթի թարգմանության կարևոր պայման է փոխաբերական վերլուծությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգլերենը վերլուծական լեզու է և հարուստ է փոխաբերություններով (Бродский 2020: 263):

Շատ դեպքերում ֆուտբոլային փոխաբերությունների թարգմանությունը դժվարություն է ներկայացնում նախ և առաջ այն պատճառով, որ հայալեզու թարգմանիչները հիմնականում ծանոթ չեն ամերիկյան ֆուտբոլի կանոններին, և «ֆուտբոլ» հասկացույթի իմաստային-զուգորդական դաշտում շրջանառվող շատ եզրույթներ, դարձվածքներ, ոճական հնարներ կարելի է թարգմանել ծանուցման միջոցով: Սույն ռազմավարությունը նույնպես կիրառելու հարուստ ավանդույթներ ունի:

Սպորտային փոխաբերությունների վերլուծությունը հիմնականում ցույց է տալիս, որ դրանք համարժեք փոխաբերություններով թարգմանելու հնարավորությունը խիստ սահմանափակ է:

1. The project team is good at *basic blocking and tackling* but rather than be an *armchair quarterback*.

- Կողքից նայելու փոխարեն ելույթ ունեցող թիմը բավականին լավ էր պաշտպանվում և հարձակվում:

Թարգմանության ժամանակ կիրառվել է փոխաբերությունը ոչ փոխաբերական արտահայտությամբ թարգմանելու ռազմավարությունը: Լեզվակիրները մի անգամից հասկանում են հատկաբանության փոխաբերական իմաստը, քանի որ հստակ պատկերացնում են, թե ինչ գործառույթներ է կատարում *quarterback*-ը ամերիկյան ֆուտբոլում: Նա պաշտպանական գծում խաղը հսկող, սկսող գործառույթ է կատարում:

Թարգմանության ժամանակ *blocking and tackling* և *armchair quarterback* փոխաբերությունները համարժեք փոխաբերություններով թարգմանել միշտ չէ որ հնարավոր է:

2. I'm going *to run interference* in all the working sessions of the project to make sure the team stays on track.

Ես պատրաստվում էի աջակցել խաղի բոլոր փուլերում, վստահ լինելով, որ թիմը հունի մեջ կընկնի:

Եթե թարգմանենք նկարագրական որոշիչով, ապա *run interference* նշանակում է հսկել խաղընկերոջը հետևից, որ այլ ֆուտբոլիստներ նրան չկարողանան մոտենալ, այսինքն՝ աջակցում են թիմակցին թիկունքից: Այստեղ նույնպես փոխաբերության համարժեքը գտնել չի հաջողվել: Բուն աջակցության ձևը կամ բովանդակությունը թարգմանության ժամանակ կորսվում է:

3. I might do end arounds bureaucratic procedures.

Ես պետք է հաղթահարեի բյուրոկրատական ընթացակարգերը:

End arounds հատկաբանական փոխաբերությունն ինչ-որ առումով ամերիկյան ֆուտբոլում շատ տարածված եզրույթ է, որը նշանակում է հարձակման ավարտ, երբ անցնում են փոխանցումներ կատարելու սահմանագիծը: Այստեղ կիրառվել է փոխաբերությունը մեկ այլ փոխաբերությամբ թարգմանելու ռազմավարությունը:

4. I just hope the team won't be stopped at the one yardline as what happened in the last project.

- Ես հույս ունեմ, որ թիմը չի կանգնի վերջնամասում, ինչը տեղի ունեցավ վերջին խաղի ժամանակ:

Այստեղ նույնպես stopped at the one yardline ֆուտբոլային փոխաբերություն է, որը նշանակում է՝ մի գծի վրա շարվել, գնդակը խաղի մեջ մտցնելուց առաջ:

5. Going on a blitz in the last two weeks to *push the project over the goal*.

-Վերջին երկու շաբաթում հանկարծակի հարձակում իրականացնելով, թիմը հաղթանակներ տարավ:

Կարելի է նաև պահպանել բլից փոխառությունը, սակայն այս համատեքստում նույնպես փոխաբերությունը թարգմանվում է նկարագրական որոշիչով:

6. Hey can you help me find resources for this project that I'm getting ready to kickoff?

Էյ, կոգնես ինձ ուժ հավաքեմ խաղի համար և պատրաստ եմ այն սկսել:

Kickoff բառը նույնպես խոսակցական լեզու է ներմուծվել ամերիկյան ֆուտբոլից և նշանակում է խաղը սկսելու ժամանակ:

7. Please don't punt and redirect me to Jane Doe.

Մի շեղիր և ուղորդիր ինձ դեպի Ջեյն Դոուն:

Այստեղ նույնպես punt-ի փոխաբերական իմաստը դժվար է պահպանելը, քանի որ այն նշանակում է՝ խփել նետված, փոխանցված գնդակին: Գուցե և ճիշտ թարգմանություն է՝ տշել բառի գործածումը:

8. This is a very important project for me and I've been asked to carry the ball.

Սա շատ կարևոր խաղ է ինձ համար և ինձ հանձնարարված է գնդակը մինչև վերջ խաղարկել:

Carry the ball նշանակում է գնդակը բռնել և տանել, անցնելով կամ շրջանցելով հակառակորդ խաղացողներին: «խաղարկել» եզրույթը մասնակիորեն է արտահայտում փոխաբերության իմաստը:

9. We have a general game plan but no solid playbook for implementation.

Մենք ունենք խաղի ընդհանուր պլան, բայց չունենք հստակ այն իրագործելու խաղի սխեմա:

Playbook նշանակում է ներկայացման սցենար: Ամերիկյան փուտբոլում փոխաբերական իմաստով այն նշանակում է խաղի սխեմա, ինչպես նաև թիմի ռազմավարություն:

10. On top of that, I feel like my sponsors are constantly moving the goalposts.

Ամենավերջում ինձ թվաց, թե հովանավորները վերջնական փոխել են խաղի կանոնները:

Goalposts նշանակում է ամերիկյան փուտբոլում դարպասաձող: Անգլերեն խոսակցական լեզվում այն հաճախակի է կիրառվում և նշանակում է՝ ինչ-որ գործողության ընթացքում կամ հընթացս կանոնների փոփոխում:

Նշված ֆուտբոլային փոխաբերությունների թարգմանությունը դժվարություն է ներկայացնում նախ և առաջ այն պատճառով, որ հայալեզու թարգմանիչները հիմնականում ծանոթ չեն ամերիկյան ֆուտբոլի կանոններին, և «ֆուտբոլ» հասկացույթի իմաստային-զուգորդական դաշտում շրջանառվող շատ եզրույթներ, դարձվածքներ, ոճական հնարներ կարելի է թարգմանել ծանուցման միջոցով:

Ֆուտբոլային խոսույթի շրջանակներում ձևավորված ոճական հնարները, դարձվածքները թարգմանելիս անհրաժեշտ է հիշել, որ այն հարուստ է ռազմական փոխաբերություններով: Ինչպես և պատերազմի պարագայում, ֆուտբոլը խաղալուց կան հաղթողներ և պարտվողներ, ռազմավարական մտածողություն, թիմային աշխատանք, պատրաստվածություն, հանդիսատեսի վարքագիծ, հաղթանակի փառք և պարտության ամոթ (Chapanga's 2004): Նշվածը ևս մեկ անգամ շեշտադրում է սպորտային խոսույթի թարգմանության գործաբանական

հայեցակերպը, երբ բառը, արտահայտությունը հնարավոր է հասկանալ, գործողության տեղը, ժամանակը, գործող անձանց, խաղի կանոնները պարզելուց, բացահայտելուց հետո:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ սպորտային փոխաբերությունների թարգմանության ընթացքում կարևորվում է ոչ միայն, բառային, այլև ոճական համարժեքության ապահովման հիմնախնդիրը: Գործն ավելի է բարդանում, երբ թարգմանիչը փորձում է թարգմանել այսպես կոչված կոնցեպտուալ փոխաբերությունները:

Թարգմանաբանության մեջ հիմնականում կիրառվում են սկզբնաղբյուր լեզվի փոխաբերությունը թիրախային լեզվի համարժեք փոխաբերությամբ թարգմանելու, սկզբնաղբյուր լեզվի փոխաբերությունը թիրախային լեզվի ոչ համարժեք փոխաբերությամբ թարգմանելու, սկզբնաղբյուր լեզվի փոխաբերությունը թիրախային լեզվի ոչ փոխաբերական արտահայտությամբ թարգմանելու ռազմավարությունները:

Լեզվաբանական մակարդակում, թարգմանիչը խնդիր է դնում, շարունակաբար հարստացնելով իր հենքային գիտելիքները, լրացնել անհրճադատ առաջ եկող տեղեկատվական բացը, այսպես կոչված իմաստային բացերը: Մեթոդական կամ դասավանդման մակարդակում, խնդիր է դրվում մոդելավորել իրական, լեզվակիրների հաղորդակցությանը բնորոշ խոսքային իրադրություններ և սովորեցնել թարգմանել, հաշվի առնելով տվյալ բառի, արտահայտության գործաբանական հայեցակերպը՝ մշակութային, հասարակական, պատմական և այլ ենթատեքստերը:

Մասնավորապես ֆուտբոլային փոխաբերությունների ուսուցման ռազմավարություններն ընտրվում և մշակվում են, հաշվի առնելով կոնցեպտուալ փոխաբերությունների տեսությունը, ուսուցման հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը և փոխաբերությունների թարգմանության գործաբանական հայեցակերպը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Бродский М. Ю. Политический дискурс и перевод [Электронный ресурс] / М. Ю. Бродский. - Екатеринбург.- 2020, с. 263-267. Дата обращения 02.02.2021 <https://www.academia.edu/1215613/>.
Brodskij M. Ju. Politicheskij diskurs i perevod [Jelektronnyj resurs] / M. Ju. Brodskij. - Ekaterinburg. - 2020, s. 263-267. Data obrashhenija 02.02.2021 <https://www.academia.edu/1215613/>.

2. Ефанова Л.Г. Контаминация. часть 2. Основные разновидности контаминации//Вестник ТГУ. Филология. – 2016. - #1, с. 5-13.
Efanova L.G. Kontaminacija. chast' 2. osnovnye raznovidnosti kontaminacii//Vestnik TGU. Filologija. – 2016. - #1. – S. 5-13.
3. Зильберт А.Б. Спортивный дискурс: точки пересечения с другими дискурсами (проблемы интертексту пересечения с другими дискурсами (проблемы интертекстуальности) // Язык, сознание, коммуникация. - М.: МАКС Пресс,2001. - Вып.19, с.103 - 112.
Zil'bert A.B. Sportivnyj diskurs: točki peresechenija s drugimi diskursami (problemy intertekstu peresechenija s drugimi diskursami (problemy intertekstual'nosti) // Jazyk, soznanie, kommunikacija. - M.: MAKSS Press,2001. - Vyp.19. - S. 103 - 112.
4. Колпащикова, Ю. А. Проблемы перевода профессиональных текстов спортивной тематики / Ю. А. Колпащикова. -Текст : непосредственный // Филология и лингвистика в современном обществе : материалы IV Междунар. науч. конф. (г. Москва, июнь 2016 г.). -Москва : Буки-Веди, 2016, с.120-122.
Kolpashhikova, Ju. A. Problemy perevoda professional'nyh tekstov sportivnoj tematiki / Ju. A. Kolpashhikova. - Tekst : neposredstvennyj // Filologija i lingvistika v sovremennom obshhestve : materialy IV Mezhdunar. nauch. konf. (g. Moskva, ijun' 2016 g.). - Moskva : Buki-Vedi, 2016. - S. 120-122.
5. Комиссаров В. Н. Теория перевода (лингвистические аспекты): учебник для ин-тов и фак-тов иностр. яз. М.: Высшая школа, 1990. - 253 с.
Komissarov V. N. Teorija perevoda (lingvisticheskie aspekty): uchebnik dlja in-tov i fak-tov inostr. jaz. M.: Vysshaja shkola, 1990. - 253 s.
6. Пром Н. А., Янкина Е. В., Кохташвили Н. И. Метафоры спортивного дискурса: функциональный спектр//Вестник ТГПУ (TSPU Bulletin). - 2017.- #6 (183), с.32-37.
Prom N. A., Jankina E. V., Kohtashvili N. I. Metafory sportivnogo diskursa: funkcional'nyj spektr//Vestnik TGPU (TSPU Bulletin). -2017.- #6 (183). - S.32-37.
7. Сабурова Н.А., Дудка К. В. Коммуникативно-прагматические особенности спортивного дискурса и их сохранение при переводе (на материале спортивной статьи и обзора)// Филологические науки. Вопросы теории и практики Тамбов: Грамота, 2018. № 9(87). Ч. 1, с.158-161.

Saburova N.A., Dudka K. V. Kommunikativno-pragmaticheskie osobennosti sportivnogo diskursa i ih sohranenie pri perevode (na materiale sportivnoj stat'i i obozrenija)// Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki Tambov: Gramota, 2018. № 9(87). Ch. 1. -С. 158-161.

8. Садыгова А.Г., Зарипов А.Р. Лексико-прагматический аспект интертекстуальности спортивного дискурса// Вестник Казанского государственного университета культуры и искусств -2015, с.1-4. Дата обращения 03.03.2021 <https://cyberleninka.ru/article/n/leksiko-pragmaticheskiy-aspekt-intertekstualnosti-sportivnogo-diskursa/viewer>.
Sadygova A.G., Zaripov A.R. Leksiko-pragmaticheskiy aspekt intertekstual'nosti sportavnogo dikursa// Vestnik Kazanskogo gosudarstvennogo universiteta kul'tury i iskusstv. - 2015, s.1-4. Data obrashhenija 03.03.2021 <https://cyberleninka.ru/article/n/leksiko-pragmaticheskiy-aspekt-intertekstualnosti-sportivnogo-diskursa/viewer>.
9. Силина В.Б. Контаминация // Русский язык: энцикл. М., 1997, с.197-198.
Silina V.B. Kontaminacija // Russkij jazyk: jencikl. M., 1997. - S. 197-198.
10. Снятков К. В. Коммуникативно-прагматические характеристики телевизионного спортивного дискурса: дисс. ... к. фи-лол. н. Череповец, 2008с. 245 с.
Snjatkov K. V. Kommunikativno-pragmaticheskie harakteristiki televizionnogo sportivnogo diskursa: diss. ... k. fi-lol. n. Cherepovec, 2008. - 245 s.
11. Chapanga, E. 2004. An analysis of the war metaphors used in spoken commentaries of the 2004 edition of the Premier Soccer League (PSL) matches in Zimbabwe.- Zambezia 31: 62-79.
12. Commentators. In: Lavric, E./Pisek, G./Skinner, A./Stadler, W. (eds.): The Linguistics of football. Tübingen, 113-120.
13. LAKOFF, George. 1991. "Metaphor and war: The metaphor system used to justify war in the Gulf." Available at: http://www.ac.wvu.edu/~market/semiotic/lkof_war.html (Accessed 26 March 2021).
14. Nordin, Henrik (2008): The Use of Conceptual Metaphors by Swedish and German Football

ИГОРЬ КАРАПЕТЯН, ГЕВОРГ БАРСЕГЯН - СТРАТЕГИЯ ОБУЧЕНИЯ ПЕРЕВОДУ СПОРТИВНЫХ МЕТАФОР

Ключевые слова: спортивная метафора, информационный пробел, менталитет, стратегия, концептуальная метафора,

динамическая эквивалентность, межкультурная коммуникация, прагматический аспект, фатический, спортивный дискурс

Теория концептуальных метафор часто используется как при разработке стратегий перевода, так и при выборе стратегий обучения переводу. На лингвистическом уровне переводчик ставит задачу, постоянно пополняя свои фоновые знания, заполнить как постоянно возникающие информационные пробелы, так и пробелы, существующие между менталитетами переводчика и носителей языка. На методическом уровне задача состоит в моделировании реальных, аутентичных речевых ситуаций, типичных для носителей языка. В частности, стратегии обучения футбольным метафорам выбираются и разрабатываются с учетом теории концептуальных метафор, коммуникативно-когнитивного подхода к обучению и прагматический аспект перевода.

IGOR KARAPETYAN, GEVORG BARSEGYAN - THE STRATEGY OF TEACHING TRANSLATION OF SPORT METAPHORS

***Keywords:** sports metaphor, information gap, mentality, strategy, conceptual metaphor, dynamic equivalence, intercultural communication, pragmatic aspect, phatic, sports discourse*

The theory of conceptual metaphors is often used in developing translation strategies, as well as in the process of selecting translation teaching strategies. At the linguistic level, the translator sets a task by continuously enriching his background knowledge, filling in constantly emerging information gaps, as well as the so-called mind gaps. At the methodological or teaching level, the task is to model real life, authentic verbal situations typical of native speakers to teach translation, taking into account the pragmatic aspect of translating a word, an expression in different cultural, social, historical and other contexts. In particular, the strategies for teaching football metaphors are selected and developed, taking into account the theory of conceptual metaphors, the communicative-cognitive approach to teaching, the pragmatic aspect of metaphor translation.

Ներկայացվել է՝ 26.05.2021

Գրախոսվել է՝ 24.05.2021

**ԳՈՐԾԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Հիմնաբառեր՝ գործաբանական տեքստ, հանրամշակութային կոմպետենցիա, հաղորդակցական կոմպետենցիա, օտար լեզվի ուսուցում

Հոդվածում քննության է առնվում «գործաբանական տեքստ» հասկացությունը և նրա դերը օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում: Ուսումնասիրվում են գործաբանական տեքստերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանց հաղորդակցական հանրամշակութային արժեքը: Կարևորվում է այն հանգամանքը, որ գործաբանական տեքստերի յուրացումը նախապատրաստում է սովորողներին իրական հաղորդակցական խնդիրներ լուծելուն ունկնդրած կամ ընթերցած տեղեկատվության հետ առնչվելիս: Հոդվածում լուսաբանվում են գործաբանական տեքստերի տեսակները՝ ըստ դրանց արտաքին նկարագրական հատկանիշների, հաղորդակցական նպատակի և կիրառման ոլորտի: Անդրադարձ է կատարվում մեթոդական մոտեցումներին, որոնք հնարավորություն են ընձեռում օգտագործել գործաբանական տեքստերը օտար լեզվի ուսուցման գործընթացում: Ներկայացվում են գործաբանական տեքստերի հիման վրա պատրաստված վարժություններ, որոնք ուղղված են լեզվական տարբեր հմտություններ զարգացնելու: Որպես ամփոփում՝ հեղինակը նշում է, որ նմանօրինակ առաջադրանքների ներառումը օտար լեզվի ուսուցման գործընթացում կարող է նպաստել հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորմանը:

«Գործաբանական տեքստ» հասկացությունը լեզվաբանության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ոլորտ են ներմուծել մանկավարժ հոտազոտողներ Բիմը, Գալսկովան, Սախարովան, Կորյակովցևան և Պոլյակովը: Այս ժանրի տեքստերը վերջինս սահմանում է որպես «ոչ բարդ բազմաբնույթ աուտենտիկ տեքստեր, որոնք կանոնակարգում են ամենօրյա կյանքն ուսումնասիրվող լեզվի երկրում» (Бим и др. 1995:5): Աուտենտիկ են համարվում այնպիսի տեքստերը, որոնք ի սկզբանե պատրաստված չեն եղել ուսումնական նպատակներից ելնելով, այլ ստեղծվել են տվյալ լեզվով խոսող անձանց համար իրենց մայրենի լեզվով որոշակի տեղեկատվություն հաղորդելու նպատակով (Савинова 2007:117):

Աուտենտիկ նյութերը նպաստում են միջմշակութային հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, քանի որ ներկայացնում են թիրախային լեզվի ազգային և մշակութային տարրերը: Աուտենտիկ նյութերը տարատեսակ են, դրանով էլ պայմանավորված է լեզվաբանների շրջանում գոյություն ունեցող հակասական տեսակետները դրանց դասակարգման առնչությամբ: Մանկավարժ-հետազոտող Կ. Ս. Կրիչևսկայան աուտենտիկ նյութերի շարքին է դասում նաև բնագիր գեղարվեստական ստեղծագործությունները և ժողովրդական բանահյուսությունը (Кричевская 1996:14): Վերջինս աուտենտիկ նյութերի մեջ առանձնացնում է գործաբանական տեքստերը, որոնք համարվում են ժամանակակից օտար լեզվի գործնական օրինակներ՝ վերցված առօրյա կյանքից: Այդպիսի տեքստերը լինում են՝

- **տպագիր** - օրինակ, բաղադրատոմսեր, դեղատոմսեր, հրավիրատոմսեր, այցեքարտեր, գովազդային տեքստեր, հայտարարություններ, ճաշացանկեր, քարտեզներ, տեղեկատվական բուկլետներ, անվտանգության ցուցանակներ ու հրահանգներ և այլն:
- **լսողական/տեսալսողական** - տեղեկատվական ռադիոհաղորդումներ և հեռուստատեսային հաղորդումներ, նորությունների ռեպորտաժներ, եղանակի տեսություն, ռադիոհայտարարություններ օդանավակայաններում և կայարաններում, փողոցում և այլն:

Գործաբանական տեքստերում արտացոլված են տվյալ ժողովրդի ազգային, մշակութային առանձնահատկությունները, լեզվամտածողության դրսևորումները կենսագործունեության տարբեր ոլորտներում, ինչպես նաև արտալեզվական բնույթի՝ երկրագիտական, մշակութային, ավանդույթների, սովորույթների մասին գիտելիքներ և այլն (Սիրունյան 2016:293): Նշված հատկանիշները սովորողի մոտ կարող են պատկերացում ձևավորել տվյալ երկրում տիրող կենսակերպի մասին և հանդիսանալ մոտիվացիայի աղբյուր լեզվի ուսումնառության գործընթացում: Ընդհանուր առմամբ, գործաբանական տեքստերը կարելի է նկարագրել հետևյալ բնութագրիչ հատկանիշներով.

- Դրանք բովանդակային և գործառական առումով *աուտենտիկ* են՝ վերցված են իրական կյանքից և վերաբերում են լեզվամշակութային իրականություններին:
- Հասցեագրված են թիրախային լեզվի երկրում բնակվող միջին վիճակագրակագրական քաղաքացուն, քանի որ պարունակում են առօրյա կյանքին վերաբորող տեղեկատվություն:
- *Տեղային* են, այսինքն կապված են թիրախային լեզվի երկիրը նկարագրող որևէ վայրի կամ ժամանակի հետ, պարունակում են տեղանուններ կամ անձնանուններ:

- *Կանոնակարգող* բնույթ ունեն, այսինքն ուղղորդում են հասցեատիրոջը՝ իրականացնելու որոշակի գործողություններ:
- *Իրազեկող* են, այսինքն փոխանցում են տեղային տեղեկատվություն, որը կարող է ծառայել որպես գործողությունների որոշակի ուղեցույց:
- Ի զորու են հասցեատիրոջը ուղղակիորեն կամ անուղղակիորեն դրդել *արագ արձագանքման*: (Кечерукова & Тевелевич 2016:219)

Գործաբանական տեքստերի կարևոր գործառույթներից է տեղեկատվության տրամադրումը տպագիր կամ լսողական եղանակներով: Հասարակության մեջ մեր վարքը կառավարվում է տարատեսակ նշանների և հայտարարությունների միջոցով: Այնուամենայնիվ, օտար երկրում դրանց հետ առնչումը կարող է անձի մոտ շփոթություն առաջացնել: Այս առումով հատկանշական է լեզվաբան Տեր-Մինասովայի մոտեցումը տեղեկատվական-կանոնակարգման գործառույթ կատարող տեքստերի դերակատարությանը (օրինակ՝ հասարակական վայրերում առկա հայտարարությունները, հրահանգները, կոչերը, զգուշացումները և այլն): Ընդգծելով լեզվի և մշակույթի միջև կապը՝ նա կարևորում է առօրյա կյանքում մեզ շրջապատող բառերն ու տեքստերը և նշում՝ «դրանք որոշում են մեր կյանքի ուղին, մշակույթը, մտածելակերպը, ազգային բնույթը, այսինքն՝ ձևավորում են ինչպես որոշակի սոցիալական աշխարհ, այնպես էլ մեզ՝ որպես այդ աշխարհը ներկայացնող անձ» (Тер-Минасова 2000:229-230):

Վերջինս առանձնացնում է տեղեկատվական-կանոնակարգող բնույթի տեքստերի հետևյալ տեսակները և մեջբերում օրինակներ, որոնք կարելի է հանդիպել անգլախոս երկրների հասարակական վայրերում.

- *Ջուր տեղեկատվություն*
Entrance (Вход) - Մուտք
Brief cases and packages are subject to inspection (Портфели и чемоданы подлежат досмотру) - Պայուսակները և ճամպրուկները ենթակա են զննման
- *Հրահանգներ*
Use northern exit only (Пользуйтесь только северным выходом) – Ելքը միայն հյուսիսային կողմից
Pull handle to open the door in case of emergency only (Потяните за ручку, чтобы открыть дверь, только при крайней необходимости). - Քաշեք բռնակը, որպեսզի բացեք դուռը՝ միայն խիստ անհրաժեշտության դեպքում
- *Արգելքներ*
No smoking (Не курить) Ծխելն արգելվում է
No entrance (Нет входа) Մուտքն արգելվում է

Do not exit any time (Не выходить без разрешения) Առանց թույլտվության դուրս չգնալ

- *Զգուշացումներ*

There is a ... penalty for deliberate misuse (За преднамеренное нарушение предусмотрено наказание) Միտումնավոր խախտումների համար նախատեսված է տուգանք:

Please offer this seat to elderly or disabled people or those carrying children (Пожалуйста, уступите эти места пожилым, инвалидам и людям с детьми) Խնդրում ենք նստատեղը զիջել տարեց, հաշմանդամ կամ երեխաներ տեղափոխող անձանց (էջ 233):

Գործաբանական տեքստերը իրենց բնույթով ստեղծվում են որոշակի տեղեկատվություն հաղորդելու նպատակով: Ինչ վերաբերում է նման տեքստերի հետ իրական պայմաններում առնչվելուն, ապա վերոնշյալ գործընթացը մշտապես տեղի է ունենում որոշակի հանգամանքների ներքո: Նշվածի ցայտուն օրինակն այն է, որ յուրաքանչյուր անձ կարող է հայտնվել մի այնպիսի իրավիճակում, երբ նա ցանկություն կամ անհրաժեշտություն կունենա ստանալ որոշակի տեղեկատվություն: Նման անհրաժեշտության առկայությունը կդրդի նրան ընթերցելու գործաբանական տեքստը՝ որի միջոցով կստանա անհրաժեշտ տեղեկություն, որը կնպաստի պատասխան արձագանքի ձևավորմանը՝ այս կամ այն կերպ գործողության տեսքով: Նման օրինակներ են ճանապարհային ցուցանակները, վճարային համակարգերին կցված հրահանգները և այլն: Օտար լեզվի դասավանդման մեջ գործաբանական տեքստերի կիրառման նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ կատարել տեքստերի հանգամանալից քննություն: Վարժությունների շարք մշակելիս նպատակահարմար է կատարել սովորողների տարիքային առանձնահատկություններին, լեզվի իմացության մակարդակին, ուսուցման նպատակներին ու խնդիրներին և այլ նմանօրինակ առանձնահատկությունների համապատասխանող տեքստերի ճիշտ ընտրություն: Կրիչևսկայան առաջարկում է գործաբանական նյութերի ստորև բերված դասակարգումը՝ ներկայացնելով դրանց կիրառման ոլորտները.

- Ուսումնասանագիտական հաղորդակցության ոլորտ
- Հանրամշակութային հաղորդակցության ոլորտ
- Ամենօրյա հաղորդակցության ոլորտ
- Առևտրային հաղորդակցության ոլորտ
- Ընտանեկան-կենցաղային հաղորդակցության ոլորտ
- Սպորտի և հանգստի հաղորդակցության ոլորտ (Кричевская 1996:16)

Կարծում ենք, նման դասակարգումը կարող է օգնել ուսուցչին կատարելու տեքստերի նպատակահարմար ընտրություն՝ համաձայն

սովորողների հետաքրքրությունների, ուսուցման թեմատիկայի և նպատակների:

Գործաբանական տեքստերի կիրառումը օտար լեզվի դասավանդման մեջ

Օտար լեզուների դասավանդումը հաղորդակցական մոտեցման շրջանակներում անհնար է իրականացնել առանց բանավոր և գրավոր աուտենտիկ նյութերի կիրառության: Այս առումով գործաբանական տեքստերի յուրացումը նախապատրաստում է սովորողներին իրական հաղորդակցական խնդիրների լուծմանը, քանի որ այս ժանրի տեքստերը արտացոլում են թիրախային լեզուն ներկայացնող երկրի իրողությունները և պարունակում հաղորդակցական իրավիճակների լայն շրջանակ: Արդյունքում, թեև լեզվի ուսուցման գործընթացը իրականացվում է բնական միջավայրից դուրս, այնուամենայնիվ բովանդակային առումով առավելագույնս մոտ է գտնվում իրական լեզվական գործունեությանը:

Հարկ ենք համարում նշել, որ մեթոդական գրականության մեջ գործաբանական տեքստերի կիրառության խնդիրն անդրադարձ կատարող ուսումնասիրությունները սակավաթիվ են (Սիրունյան 2016, Коренова 2015, Гончарова, Юнусова 2016, Чичерина 2009): Նշված ուսումնասիրություններում սակայն անդրադարձ է կատարվում ոչ միայն նման տեքստերի գործաբանական նշանակության ճանաչմանը և վերհանմանը, այլև այն մեթոդական մոտեցումների կիրառմանը, որոնք նպաստում են դրանց հնարավորինս դյուրին ընկալմանը: Սույն հոդվածի հաջորդիվ ներկայացվող հատվածում հարկ ենք համարում արդրադարձ կատարել այն մեթոդական մոտեցումներին, որոնք հնարավորություն են ընձեռում աշխատել գործաբանական տեքստերի հետ օտար լեզվի ուսուցման գործընթացում՝ զարգացնելու բառապաշարը, լսողական ընկալումը և քերականությունը:

Քերականական վարժություն

Ստորև ներկայացված է վարժություն, որում կիրառվում է տեղեկատվական-կանոնակարգող բնույթի գործաբանական տեքստ: Վերջինս շինհրապարակում անվտանգության նկատառումներով փակցված մի ցուցանակ է, որը պարունակում է նշաններ և ուղեկցող հրահանգիչ տեքստեր: Վարժությունը նախատեսված է եղանակավորող բայերի ուսուցման համար:

Task 1. Look at the sign and read the instructions. Where can one see such a sign? (Նայի՛ր ցուցանակին և ընթերցի՛ր հրահանգները: Որտե՞ր կարելի է տեսնել նման ցուցանակ:



Task 2. Read the instructions again and match the modal verbs with their characteristics. (Կարդա՛ հրահանգները նորից և համապատասխանեցրո՛ւ եղանակավորող բայերը հրենց բնութագրումներին:)

- | | | |
|--------------------------|--|-------------------------|
| MUST | a. It's good idea to do this action | 1. prohibition |
| No person ALLOWED | b. There is a strong necessity to do this action | 2. Advice or suggestion |
| SHOULD | c. It is forbidden to do this action | 3. obligation |

Լսողական ընկալման վարժություն

Ստորև ներկայացված վարժությունն ուղղված է զարգացնելու սովորողների լսողական հմտությունները: Այստեղ սովորողները պետք է լսեն օդային չվերթի մեկնարկից անիջապես առաջ ինքնաթիռում գտնող ուղևորներին հասցեագրված նախաթռիչքային հայտարարություն:

Task 1. Listen to the pre-flight announcement and fill in the gaps with the missing words. (Լսի՛ր նախաթռիչքային հայտարարությունը և լրացրո՛ւ տեքստում բաց թողնված բառերը:)

Transcript of the text

Ladies and gentlemen, welcome onboard [] 4B7 with service from Hong Kong to []. We are currently third in line for [] and are expected to be in the air in approximately seven minutes' time. We ask that you please [] your seatbelts at this time and secure all baggage [] your seat or in the overhead compartments. We also ask that your seats and table trays are in the [] position for take-off. Please turn off all personal electronic [], including laptops and cell phones. Smoking is prohibited for

the duration of the flight. Thank you for choosing Mountain [redacted]. Enjoy your flight. (retrieved from <https://www.englishclub.com/english-for-work/airline-announcements.htm>)

Key: Flight, San Francisco, take-off, fasten, underneath, upright, devices, Airlines

Task 2. Listen again and make a list of the actions the passengers should do. (Լսի՛ր նորից և թվարկի՛ր այն գործողությունները, որ պետք է կատարեն ուղևորները:)

Քառապաշարի զարգացման ուղղադված առաջադրանք

Ստորև ներկայացված է վարժությունների շղթա՝ թեմատիկ դասի տեսքով՝ «Travelling: Hotel facilities and services» թեմայի շրջանակներում: Այն նպատակահարմար է կիրառել բարձր դասարաններում և կարելի է իրականացնել մի քանի փուլով: Գործնական կարողությունների զարգացմանն ուղղված այսպիսի աշխատանքն իրենից ներկայացնում է կարողությունների և հմտությունների ամբողջություն (ընթերցում, համագործակցային ուսուցում, բանավոր քննարկում): Դասը ներկայացված է՝ համաձայն ավանդական PPP (presentation-practice-production) մոտեցման փուլային կառուցածքի, որին նախորդում է թեմայի բացում/գիտելիքի խթանում փուլը:

1. Թեմայի բացում/գիտելիքի խթանում (Lead-in) Սովորողների հետ անցկացվում է ընդհանուր քննարկում՝ թեմայի շուրջ բազային գիտելիքների ակտիվացման նպատակով: Ուսուցիչն վերջիններիս ուղղում է նմանատիպ հարցեր՝

1. *Do you like travelling? Why (not)? (Սիրու՞մ ես ճամփորդել: Ինչու՞/ինչու՞ ոչ:)*
2. *Talk about your experience of staying at a hotel. (Խոսի՛ր հյուրանոցում մնալու քո փորձառության մասին:)*
3. *What was good and bad there? (Ի՞նչն էր այնպեղ լավ և վատ:)*
4. *How do you choose a hotel before making a reservation? (Ինչպե՞ս ես ընտրում հյուրանոց նախքան ամգրագրում կատարելը:)*
5. *How do hotels differ from each other? (Ինչո՞վ են հյուրանոցները տարբերվում իրարից:)*

Հարցերի բնույթը և ծավալվող քննարկման մեջ առկա լեզվական նյութի բարդության աստիճանը կարող է տարբեր լինել՝ կախված սովորողների լեզվի իմացության մակարդակից և ուսուցման միջավայրից (դպրոց, համալսարան և այլն):

2. Թեմայի ներկայացում (Presentation). Այս փուլում ծավալվում է բառապաշարային աշխատանք, որտեղ սովորողները ստանում են որոշակի տեղեկատվություն հյուրանոցային հարմարությունների և ծառայությունների մասին: Նրանք ծանոթանում են թեմային հատուկ բառապաշարին՝

ուսումնասիրելով գործնականում կիրառվելիք առաջնային աղբյուրը, օրինակ՝ ինտերնետային կայքը, որտեղից կարելի է ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Սովորողները մուտք են գործում գործնական հարթակ՝ հյուրանոցների ամրագրման որևէ ինտերնետային կայք: Հնարավորության դեպքում առաջադրանքը իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կամ թղթային տարբերակով: Հանձնարարվում է զույգերով կամ փոքր խմբերով պարզել, թե որոնք են հյուրանոցները նկարագրող կատեգորիաներ (*Star rating, Guest rating, Amenities, Meal plans available, Popular Locations* և այլն): Տեղի է ունենում քննարկում այն մասին, թե ինչ են իրենցից ներկայացնում տվյալ կատեգորիաները, այնուհետև ուսումնասիրվում են դրանցում առկա ենթակետերը: Ընդհանուր քննարկման ժամանակ ուսուցիչը պարզաբանում է անհասկանալի բառերի նշանակությունը տվյալ համատեքստում:

Ստորև ներկայացված են հյուրանոցների բնութագրիչ կատեգորիաներ, որոնք կարելի է հանդիպել գործնական ինտերնետային հարթակներում.

Amenities (հարմարություններ) - Kitchen, Pool, Free WiFi, Washer and dryer, Hot tub, Parking included, Air conditioned, Pet friendly, Free airport shuttle, Spa, Ocean view, Water park, Casino.

Meal plans available (առկա սննդային պլաններ) - Breakfast included, Lunch included, Dinner included, All inclusive.

Popular Locations (հանրաճանաչ տեղանքներ) - Trafalgar Square, Edinburgh Castle, Piccadilly Circus, Wembley Stadium, The British Museum, Windsor Castle, Loch Lomond, Oxford Street, London Bridge (<https://www.expedia.com/>)

Ինչպես նկատում ենք, այս առաջադրանքում ընդգրկված բառապաշարը իր մեջ պարունակում է առօրյա կյանքում լայնորեն շրջանառվող բառեր և արտահայտություններ, որոնք տվյալ պարագայում ծառայում են որպես ոլորտի տերմիններ: *Popular Locations* բաժնում զետեղված են տեղային նշանակության

արտահայտություններ, որոնք կարևոր են թիրախային լեզվի երկրի հետ սովորողին ծանոթացնելու առումով: Կախված նրանից, թե սովորողների տվյալ խումբը լեզվական ինչ մակարդակում է գտնվում, ուսուցիչը ընտրում է



համապատասխան կատեգորիներ՝ արդյունավետ քննարկում ապահովելու նպատակով:


3. Վարժանք (Practice) - Բառապաշարի ամրապնդում

Ա) Սովորողները կատարում են բառապաշարային առաջադրանք՝ համապատասխանեցնելով հյուրանոցային հարմարություններին և ծառայություններին վերաբերող նշանները իրենց համարժեք անվանումների հետ: Առաջադրանքում ներառված նշանների հետ աշխատանքը կարևոր է նրանով, որ դրանք կարելի է հանդիպել հյուանոցային ուղեցույցներում: Ուսուցչի հետ առաջադրանքը ստուգելուց հետո սովորողները կարատում են «հիշողության վարժանք»՝ փորձելով մտապահել տրված արտահայտությունները՝ օգտվելով միայն նշաններից:

Բ) Սովորողների ուշադրությանն է ներկայացվում թիրախային լեզվի երկրում գտնվող մի հյուրանոցի բնութագիրը: Տրվում է առաջադրանք՝ կապված վերը նշված բառապաշարի հետ.

Read the description of a hotel and make a list of its facilities and services. (Ընթերցի՛ր հյուրանոցի նկարագրությունը և կազմիր այնպեղ առկա հարմարությունների և ծառայությունների ցանկ)

Retrieved from <https://en.islcollective.com>



More about
Travelodge Gatwick Airport Central

Whether you're a tourist or traveling on business, Travelodge Gatwick Airport Central is a great choice for accommodation when visiting Horley. From here, guests can make the most of all that the lively city has to offer. With its convenient location, the property offers easy access to the city's must-see destinations.

Offering guests superior services and a broad range of amenities, Travelodge Gatwick Airport Central is committed to ensuring that your stay is as comfortable as possible. To name a few of the property's facilities, there are daily housekeeping, 24-hour front desk, car park, pets allowed, 24-hour check-in.

The property's accommodations have been carefully appointed to the highest degree of comfort and convenience. In some of the rooms, guests can find flat screen television, towels, smoking policy - non-smoking available, heating, internet access - wireless (charges apply). The property's host of recreational offerings ensures you have plenty to do during your stay. Travelodge Gatwick Airport Central is an ideal place of stay for travelers seeking charm, comfort, and convenience in Horley.

4. Վերարտադրություն (Production). Այս փուլում սովորողներին հանձնարարվում է փոքր խմբերով կատարել բանավոր կամ գրավոր առաջադրանք, որտեղ պետք է կիրառվեն ոլորտին հատուկ արդեն իսկ քննարկված բառերն ու արտահայտությունները.

Ա. Բանավոր առաջադրանք.

In pairs/groups discuss what kind of hotel services and facilities during a holiday would need... (Ձույգերով/փոքր խմբերով քննարկե՛ք, թե ինչպիսի հարմարությունների և ծառայությունների կարիք կունենա...)

- A family on Budget (սահմանափակ միջոցների տեր ընտանիքը)
- A newly married couple (նորապսակ զույգը)
- An elderly couple (ծեր զույգը)
- A person on wheelchair (անվասայլակով տեղաշարժվող անձը)
- A group of friends (մի խումբ ընկերներ):

Բ) Գրավոր առաջադրանք

In pairs/groups write a short description of a hotel which would need ... (Ձույգերով/փոքր խմբերով գրե՛ք մի հյուրանոցի նկարագրություն, որի կարիքը կունենա...)

- A family on budget
- A newly married couple
- An elderly couple
- A person on wheelchair
- A group of friends

Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը դասարանին են ներկայացնում իրենց տարբերակները:

Վերոնշյալ վարժություններում ընդգրկված տեքստերը իրենց բնույթով գործաբանական են, քանի որ համապատասխանում են ռուս հետազոտողներ Կեչեռուկովայի և Տեվելևիչի ներկայացրած բնութագրագիշիկներին հետևյալ առումներով.

- դրանք աուտենտիկ են՝ կիրառվում են առօրյա կյանքում,
- ունեն կոնկրետ հասցեատեր (օր.՝ ինքնթիռի ուղևոր, անցորդ, հյուրանոց փնտրող անձ),
- կապված են թիրախային լեզվի երկրի հետ (օր.՝ ամերիկյան ավիատուրի, Լոնդոն քաղաքում գտնվող հյուրանոց),
- կանոնակարգում են հասցեատիրոջ գործությունները (օր.՝ հյուրանոց փնտրող անձը ընտրում է իրեն անհրաժեշտ հարմարություններ),
- կրում են իրազեկող բնույթ (օր.՝ շինհրապարակում փակցված ցուցանակը իրազեկիչ ազդակ է հնարավոր վտանգների մասին),
- առաջացնում են արագ արձագանքման վարք (օր.՝ ուղևորները ամրացնում են ամրագոտիները):

Այսպիսով, կարելի է պնդել, որ գործաբանական տեքստերը ներկայացնում են օտար լեզվի գործառույթներն ու առանձնահատկությունները, իսկ դրանցում առկա տեղեկատվությունը ի հայտ է բերում տվյալ լեզվով խոսող ազգի ազգային և մշակութային արժեքներն ու ավանդույթները: Նշված տեքստերը իրենցից գործաբանական

մեծ արժեք են ներկայացնում, քանի որ պարունակում են կենսական հարուստ բառապաշար, ինչպես նաև ոճական և քերականական կարևոր արտահայտչամիջոցներ: Կարծում ենք, որ հանրակրթության շրջանակներում գործաբանական տեքստերի կիրառումը կարևոր է նրանով, որ իրենց բնութագրող հատկանիշներից ելնելով՝ վերոնշյալ տեսակի տեքստերը կարող են նպաստել սովորողների լեզվամշակութային, հանրամշակութային և խոսողական կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև բարձրարացնել օտար լեզու սովորելու մոտիվացիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Սիրունյան Ն. (2016), Գործաբանական տեքստերի շուրջ աշխատանքի մեթոդիկական ավագ դպրոցում, *Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա*, 290-296:
Sirownyan N. (2016), Gorc'abanakan teqsteri showrj ashxatanqi met'odikan avag dprocowm, Vanad'ori petakan hamalsarani gitakan teghekagir, Prak A, 290-296:
2. Бим, И. Л., Гальскова, Н. Д., Сахарова, Т. Е., Коряковцева, Н. Ф., Поляков, О. Г. (1995). Аттестационные требования к владению иностранным языком учащимися к концу базового курса обучения. *Иностранные языки в школе*, (5), 2-8.
Bim, I. L., Gal'skova, N. D., Saharova, T. E., Korjakovceva, N. F., Poljakov, O. G. (1995). Attestacionnye trebovanija k vladeniju inostrannym jazykom uchashhimisja k koncu bazovogo kursa obuchenija. Inostrannye jazyki v shkole, (5), 2-8.
3. Гончарова, В. А., Юнусова, Ю. Ш. (2016). Социокультурный потенциал прагматического текста на иностранном языке на этапе основного общего образования. *Филологические науки. Вопросы теории и практики*, (1-2 (55)), 201-204.
Goncharova, V. A., Junusova, Ju. Sh. (2016). Sociokul'turnyj potencial pragmaticheskogo teksta na inostrannom jazyke na jetape osnovnogo obshhego obrazovanija. Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki, (1-2 (55)), 201-204.
4. Кечерукова, М. А., Тевелевич, А. М. (2016). Прагматический текст в методике обучения иностранным языкам. *Научный диалог*, (5 (53)), 214-224.
Kecherukova, M. A., Tevelevich, A. M. (2016). Pragmaticheskij tekst v metodike obuchenija inostrannym jazykam. Nauchnyj dialog, (5 (53)), 214-24.

5. Кричевская, К. С. (1996). Прагматические материалы, знакомящие учеников с культурой и средой обитания жителей страны изучаемого языка. *Иностранные языки в школе*, (1), 13-17.
Krichevskaja, K. S. (1996). Pragmaticcheskie materialy, znakomjashhie uchenikov s kul'turoj i sredoj obitanija zhitelej strany izuchaemogo jazyka. *Inostrannye jazyki v shkole*, (1), 13-17.
6. Савинова, Н. А., Михалева, Л. В. (2007). Аутентичные материалы как составная часть формирования коммуникативной компетенции. *Вестник Томского государственного университета*, (294), 116-119.
Savinova, N. A., Mihaleva, L. V. (2007). Autentichnye materialy kak sostavnaja chast' formirovanija kommunikativnoj kompetencii. *Vestnik Tomskogo gosudarstvennogo universiteta*, (294), 116-119.
7. Тер-Минасова, С. Г. (2000). СГ Язык и межкультурная коммуникация. 229-248
Ter-Minasova, S. G. (2000). SG Jazyk i mezhkul'turnaja kommunikacija. 229-248

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՎԱՅՔԵՐ

1. Hotels, Resorts, Hostels & More. Available at: <https://www.agoda.com/> (Accessed 26 January 2021).
2. Stays in London. Available at: <https://www.expedia.com/> (Accessed 02 February 2021).
3. UK Site Safety Multi-Hazards Sign. Available at: <https://www.thesignshed.co.uk/products/site-safety-standard-sign> (Accessed 10 February 2021).
4. Silvia Lefevre (2018) Picture dictionary - Hotel and room amenities. Available at: <https://en.islcollective.com/> (Accessed 02 February 2021).
5. Airline Announcements. Available at: <https://www.englishclub.com/> (Accessed 15 February 2021).

ЛИЛИТ МАНВЕЛЯН - РОЛЬ ПРАГМАТИЧЕСКИХ ТЕКСТОВ В ОБУЧЕНИИ ИНОСТРАННОМУ ЯЗЫКУ

Ключевые слова: *прагматический текст, социокультурная компетентность, коммуникативная компетентность, обучение иностранному языку*

В статье рассматривается понятие «прагматический текст» и его роль в методике преподавания иностранных языков. Изучаются особенности прагматических текстов с целью выявить их коммуникативные и социально-

культурные ценности. Отмечается, что освоение прагматических текстов подготавливает учащегося к решению реальных коммуникативных проблем, когда они находятся в стране изучаемого языка и нуждаются в использовании информации, полученной в аудиальной или печатной формах. Данная статья иллюстрирует виды прагматических текстов по их внешним описательным признакам, коммуникативному назначению и области их употребления. Упомянуты методические подходы, позволяющие работать с прагматическими текстами в процессе обучения иностранному языку. Представлены упражнения на основе прагматических текстов, которые направлены на развитие различных языковых навыков. Автор приходит к выводу, что включение прагматических текстов в учебный процесс может способствовать развитию у учащихся навыков общения на иностранном языке.

LILIT MANVELYAN - THE ROLE OF PRAGMATIC TEXTS IN FOREIGN LANGUAGE EDUCATION

Keywords: *pragmatic text, sociocultural competence, communicative competence, foreign language teaching*

The article touches upon the concept of “pragmatic text” and its role in the methodology of teaching foreign languages. The peculiarities of pragmatic texts are studied, identifying their communicative and sociocultural value. It is highlighted that the mastering of pragmatic texts prepares students for solving real communication problems when they are in the country of the target language and need to use information received in auditory or printed forms. The article illustrates the types of pragmatic texts according to their external descriptive features, communicative purpose and area of application. Reference is made to the methodological approaches that allow using pragmatic texts in the process of teaching a foreign language. Exercises based on pragmatic texts are presented, aimed at developing different language skills. The author comes to the conclusion that incorporating pragmatic texts into the teaching process can contribute to the development of students’ foreign language communicative competence.

Ներկայացվել է՝ 19.03.2021

Գրախոսվել է՝ 16.04.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից՝ 23.04.2021

**ԹՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ
ԼԵԶՎԻ (ՖՐԱՆՍԵՐԵՆԻ) ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ**

ՄԱՆԵ ԱՂԲԱԼՅԱՆ

Հիմնաբառեր՝ թվային ծառայություն, ՏՀՏ, ռեսուրս, էլեկտրոնային հարթակ, կրթություն, առցանց ուսուցում, օտար լեզու, թվային գործիք, բարձրագույն հասարակություն, հեռահաղորդակցում

Թվային ծառայությունները մեր առօրյա կյանքի առանցքում են: Թվային ծառայությունները դրսևորվում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ ֆինանսներ, արդյունաբերություն, հեռահաղորդակցություն, առևտուր, անվտանգություն, ինչպես նաև կրթությունը իր ամբողջ համակարգով: Կարելի է ասել, որ թվայինը հանգեցրել է պրակտիկայի խորը նորացման սոցիալական գիտությունների աշխարհում: Հոդվածում վեր են հանվում բարձրագույն կրթության մեջ թվայինի ունեցած կարևոր ռազմավարական առանձնահատկությունները, նաև այն թե ինչպիսի դեր է կատարում թվային ծառայությունը ուսանողների կյանքում, և ինչպիսին է այդ աշխարհում ուսանողների ինտեգրման դերը: Հոդվածում կարևորություն է տրվում թվայինին՝ որպես դասավանդման և որպես ապագայի զարգացման կարևորագույն գործիքի: Օտար լեզվի դասավանդման գործընթացում թվային տեխնոլոգիաների ներդրման առավելությունն անժխտելի փաստ է: Օտար լեզվի դասավանդման խնդիրներն ակնհայտ են դառնում, երբ կարևորվում են սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական նախաձեռնությունը: Տեղեկատվական հասարակության պայմաններում ապրող մարդու համար օտար լեզուներով հաղորդակցվելու կարողությունները հեշտացնում են մշակութային երկխոսությունը: Հոդվածում ցույց է տրվում, որ օտար լեզուների ուսուցման նպատակը սովորողներին միջլեզվական և միջմշակութային շփումներին, մշակութային երկխոսությանը նախապատրաստելն է, ինչն էլ առավել արդյունավետ է իրականացվում թվային ծառայությունների միջոցով:

Ժամանակակից հասարակության մեջ քաղաքակրթական զարգացումների հիմքում տեղեկատվական գործընթացներն են, որոնցում

վճռորոշ դերակատարություն ունեն տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները: Դրանց ներդրումը տարբեր բնագավառներում նպաստում է կրթության տեղեկատվայնացմանը, որն ուսուցման գործընթացի բարեփոխման և արդիականացման կարևոր պայմաններից մեկն է: Կրթության ոլորտում SCS ներդրումն ու արդյունավետ կիրառումն ուղղակիորեն կապված են նոր սերնդին վաղվա օրվան պատրաստելու գաղափարներին: Պատահական չէ, որ նշվում է, որ կրթության տեղեկատվայնացումը կրթական տեղեկատվական ռեսուրսների հավաքման, մշակման, օգտագործման և տարածման հիման վրա կրթական գործընթացի բոլոր մասնակիցների գիտակրթական-տեղեկատվական պահանջների բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է:

Ծառայությունների թվայինի վեափոխումն արդեն իսկ ընթացքի մեջ է: Թվայինի անցումն իր ազդեցությունն է ունեցել և շարունակում է ունենալ գիտության տարբեր ոլորտների վրա: Վերջին տարիներին թվայնացման գաղափարի աճ է նկատվում մեր հասարակության բոլոր շերտերի մոտ: Թվային տեխնոլոգիաների ինտեգրումը լեզուների ուսուցման մեջ նորություն չէ: Առցանց թվային գործիքների և ռեսուրսների առաջարկը շատ ծավալուն և կարևոր արժեք է ներկայացնում բարձրագույն կրթության հաստատություններում և կարևորում է կրթության զարգացման դինամիզմը կրթության մեջ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Մենք ապրում ենք անընդհատ փոփոխվող աշխարհում, որի վրա ազդում են տեխնոլոգիական արագ զարգացումները: Այս փոփոխություններն այնքան արագությամբ ու հեշտությամբ տեղի ունեցան, որ մենք պարտավորվում ենք ավելի լավ հասկանալ, թե ինչպես է աշխատում այս թվային աշխարհը և այն ռիսկերը, որոնց մենք ենթարկվում ենք: Այս նոր տեխնոլոգիական դարաշրջանի միջավայրին հարմարվելու, կառավարելու և ղեկավարելու համար անհրաժեշտ է զարգացնել նոր հմտություններ:

Թվայինի կիրառումը օր օրի ավելի մեծ տեղ է գրավում դասավանդման գործընթացում: Թվայինի ընդարձակ թռիչքն օտար լեզվի դասավանդման մեջ դարի մեծագույն ներդրումներից մեկն է: Թվային ռեսուրսների հայեցակարգերը և տարածումը կատարվում է բավականին հզոր և ամուր համակարգի օգնությամբ (Desmarais 1998:98):

Թվային ռեսուրսների և գործիքների առաջարկն առցանց տարբերակով ֆրանսերենի որպես օտար լեզվի դասավանդման մեջ բավականին բաց է և ակնհայտ է դարձնում ֆրանսախոսների

դինամիկան տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառում:

Ֆրանսախոս մամուլը հիմնական, բազային դեր է կատարում թվային ծառայությունների առաջարկում (Barbot 2000:25): Դրանք հուսալի են դարձնում գրեթե բոլոր տեսալսողական տարբեր տարատեսակ միջոցները, տեքստերը, որոնք ուղեկցվում են բազմաթիվ առցանց ուսուցողական վարժություններով և մեթոդական փաստաթղթերով: Այդ միջոցները միաժամանակ հասցեագրված են թե՛ դասվանդողներին, թե՛ տարբեր կրթական մակարդակների պատկանող տարբեր տարիքի սովորողներին: Դրանք ներառում են ընդհանուր ֆրանսերենից մինչև տարբեր մասնագիտական ոլորտների վերաբերող ֆրանսերեն լեզվով ընդարձակ թեմատիկա և առաջարկում են ոչ միայն լսարանում կամ ինքնուսուցման մեջ օգտագործվող նյութեր, այլ նաև հավասարապես նպաստում են աշխատանքի պլանավորմանը՝ առաջարկելով արդեն կազմված մանկավարժական-մեթոդական բազմաթիվ փաթեթներ: Այս ոլորտում ֆրանսերենը որպես օտար լեզու դասավանդման մեջ առանձնակի դրական ազդեցություն ունեցող ինտերակտիվ մուլտիմեդիաներից առանձնացում են «TV5 Monde»-ը և «RFI Savoirs»-ը իր տարբեր ենթաբաժիններով և տարբեր մակարդակների համար առաջարկվող ուսումնական նյութերով: Վերը նշված երկու թվային ծառայությունների ենթաբաժիններն են՝ «Դասավանդել ֆրանսերեն», «Սովորել ֆրանսերեն», որոնք առանձնանում, աչքի են ընկնում առաջարկվող ռեսուրսների հստակությամբ և որակներով: Առաջարկվող նյութերից օգտվելն ամբողջովին անվճար է, նյութերն անընդհատ թարմացվում են, փոփոխվում են, շատ ակտուալ են, յուրաքանչյուր նյութի, փաթեթի մեջ նկատվում են տվյալ ժամանակի շունչը, բառապաշարը, ամենը հիմնավորվում է փաստերով:

Հարկ է նշել նաև «Francelab», «TV5 Quebec Canada» մանկավարժական մուլտիմեդիաների մասին, որոնք նույնպես պարունակում են տեսալսողական մանկավարժական շատ փաթեթներ: «TV5 Que'bec»-ի նյութերը հիմնականում վերաբերվում են հենց կանադական սոցիալ-մշակութային ոլորտների: «Radio Canada», «RTBF» / Բելգիայի ֆրանսիական համայնքի ռադիո-հեռուստաընկերությունը, «RTS» /Շվեյցարիայի ռադիո-հեռուստաընկերությունը/ նույնպես մեծ ներդրումներ են ունենում օրիգինալ մեդիաների ստեղծման համար (վեբ էջեր, լսողական գրքեր և այլն): Այս մեդիաները հասանելի են բոլոր թվային տեխնոլոգիաներում, հեռուստատեսությունում, համակարգիչում: Այսպիսով սովորողները և դասավանդողները կարողանում են նաև

տեղեկանալ այդ լեզվակիր, տվյալ դեպքում ֆրանսախոս երկրի սոցիալ-մշակութային արդիականությանը վերաբերող հաղորդումների և այլնի մասին: Բազմաթիվ փաթեթներ, փաստաթղթեր ներբեռնելի են:

Ֆրանսերենի որպես օտար լեզվի դասավանդման զարգացմանը և կատարելագործմանը նպաստում է ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը(OIF): Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը և ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիան իրենց ներդրումն ունեն ֆրանսերենի զարգացման գործում: «Institut Francais»-ն՝ Ֆրանսիայի արտաքին մշակութային գործունեության օպերատորը, առաջարկում է կրթական թվային բազմաթիվ, տարատեսակ ծառայություններ՝ փաստագրական նյութերին հասանելիություն, «Culturethèque» և «IF cinéma» և մի քանի այլ առցանց մեդիաների կիրառություն:

Դասավանդողների վերապատրաստումն իրականացնում է «IFos»-ը՝մասնագիտացված ֆրանսերենի վերապատրաստման հարթակը, «IF classe»-ը՝ դասավարների համար: Տարբեր մասնագիտացված ուղղությունների ֆրանսերենի պատասխանատվությունը իրականացնում է «NumériFOS»-ը: Եվ վերջապես ցանկայի է առանձնացնել պրակտիկային, փորձի փոխանակմանը և տարածմանը նպաստող սոցիալական մասնագիտական հարթակը՝ «IF Profs»-ը: Ֆրանսիական խոշորագույն հրատարակչությունները (CLE International, Hachette, Didier, Edition, Maison des langues, Irésses universitaires de Grenoble) նույնպես զարկ են տալիս թվային ծառայություններին առաջարկելով ուսումնական, կրթական բոլոր նյութերի թվայնացված, էլեկտրոնային տարբերակները, ինչը նույնպես հեշտացնում է կրթական գործընթացի կամակերպումն առցանց տարբերակով: Բազմաթիվ մոտիվացված դասավանդողներ նույնպես կիսվում են իրենց նորարարական փորձերով, մանկավարժական-մեթոդական ծրագրերով շատ մանկավարժական լեզվական ֆորումներում:

Թվայինի արդյունավետ ինտեգրման համար բամաթիվ գործոնների մեջ կարևորվում է նաև դասավանդողների վերապատրաստումը, հասանելի առարկայական նյութերի ապահովումը, դասավանդողների և սովորողների մոտիվացիան, ինչու՞ ոչ՝ նաև երկրի սոցիալտնտեսական զարգացվածությունը: Ի հայտ եկած փոփոխությունները բնականաբար առաջ են բերում բազում բանավեճեր, որոնք առանցքային խնդիրներն են դառնում նախկին և ժամանակակից մեթոդների, ավանգարդիստների և դասականների, իդեալիստների գաղափարների ուսումնասիրությունների մեջ: Այդ արգացումներն արդեն

առնչվում են մեր առօրյային, հստակաբար կարող ենք ասել, որ թվային աշխարհը մեր գիտակցական մակարդակում է: Այն հասկանալի ու ըմբռնելը դառնում է ավելի դյուրին, ինչին նպաստում են այդ ոլորտին վերբերող աստիճանաբար զարգացող հմտությունները: Այսպիսով, թվայինը մեր հանրության խորը փոփոխությունն է, որ ունակ է փոխել նաև մարդկային հարաբերությունները:

Թվային ծառայության շնորհիվ է, որ դասավանդողը ստեղծում է առցանց հարցաշար, թեստեր „Kahoot”-ի օգնությամբ, որի կիրառումը տեղի է ունենում սահմանված ժամանակով, իրականացվում է դերախաղեր՝ ֆիլմեր ստեղծելով, ինչը անգնահատելի դեր է ունենում լեզվական բարելավման համար: Թվայինը հնարավորություն է տալիս ի կատար ածել նոր առաջադրանքներ, որոնք անհնար էին անցյալում: Օրինակ՝ դասավանդողը, դասախոսը կարող է պահանջել ուսանողներից կարճամետրաժ ֆիլմ նկարահանել՝ կենտրոնանալով դասընթացի այդ պահին բնորոշ թեմատիկայի վրա: Սա կարող է նպաստել լեզվական կարողությունների զարգացմանը: Նոր տեխնոլոգիաների դերը միանշանակ մեծանում է լեզվի դասավանդման մեջ: Տեխնոլոգիաները շատ արագ են կատարելագործվում, դրանց ի հայտ գալը հեշտացնում ուսումնական պրոցեսի կազմակերպումը: Թվային միջոցների կիրառումն առօրյա կյանքում օգնում է տարածել տեղեկատվությունը, որոնք իրենց ուրույն տեղն են ունենում կրթական տիեզերքի համար: Հարկ է նշել, որ թվայինի դերը դասավանդման գործընթացի մեջ շատ մեծ և տարբերակող է:

Թվայինի հետևում թաքնված են տեխնոլոգիաներ, տարբեր տեղեկատվական գործիքներ, տարբեր հարթականներ: Թվային աշխարհի համակարգում վերահսկումը կարող է դառնալ անհասանելի և անիրականանալի: Քաղաքական ինստիտուտներում, սոցիալական կամակերպություններում, գործնականում վերահսկումը դառնում է առանցքային խնդիր (Béziat, Piccardo 2007:99):

Քանի որ կրթական, դաստիարակչական խնդիրները նույնն են մնում՝ չնայած թվայնացմանը, հարկ է նշել, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն են հենց թվային համակարգի լայն շրջանակը, որն օգտագործվում է տեղեկատվության ստեղծելու, փոխանցելու և՛ տարածելու, և՛ ծառայություններ մատուցելու համար՝ համակարգչային սարքավորում, ծրագրակազմ, հեռախոսային գծեր, բջջային, էլ. փոստ, բջջային և արբանյակային տեխնոլոգիաներ, անլար և կաբելային ցանցեր, մուլտիմեդիա և ինտերնետներ (Fortier 1999:47):

SՀՏ օգտագործումը հնարավորություն է տալիս ուսանողներին ստանալ տեղեկատվություն և համակարգել դրանք, գործնականում

աշխատել տեղեկատվության հետ, զարգացնել որոշ հմտություններ, որոնք թույլ են տալիս տեղեկատվություն փոխանակել՝ օգտագործելով ժամանակակից միջոցները (Arnold, Dumont 1999:35): Բարձրագույն ուսումնական հաստատությունները տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ ուսումնառության կամակերպումը հնարավոր է դառնում կրթական էլեկտրոնային ռեսուրսների միջոցով (աղյուսակներ, տեսահոլովակներ, առցանց թեստեր, էլեկտրոնային դասագրքեր, դասավանդողների կողմից սեփական կրթական ռեսուրսների ստեղծում և այլն): SCS-ին տիրապետումը ուսանողներին հնարավորություն է տալիս մուտք գործել տարբեր տեղեկատու համակարգեր, էլեկտրոնային գրադարաններ, ինչն էլ ավելի արդյունավետ է դարձնում որակի բարձրացման գործընթացը: Ինտերնետային որոշիչների օգնությամբ ուսանողները կարող են որոնել և գտնել էլեկտրոնային ռեսուրսներ, ծրագրակազմ, քանի որ այսօր շատ է կարևորվում ուսանողի սեփական գործունեությունը՝ նոր գիտելիքների որոնման, ընկալման, մշակման գործում: Այս պարագայում հարկ է ավելացնել, որ դասավանդողը հանդես է գալիս որպես ուսուցման գործընթացի կազմակերպիչ, ուսանողի ինքնուրույն գործունեության ղեկավոր՝ ապահովելով նրանց անհրաժեշտ օգնությունն ու արագությունը, ինչն էլ նպաստում է յուրաքանչյուր ուսանողին ակտիվ ճանաչողական գործընթացի մեջ ներառմանը և ուսանողներին սովորեցնում է ներկայացնել իրենց տեսակետը և պաշտպանել այն (Conseil supérieur de l'enseignement. Programme National d'Évaluation des Acquis, PNEA 2008): Ավանդական դասերի և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով կատարվող դասերի միջև կարելի է գտնել որոշակի տարբերություններ: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերն ավելի հետաքրքիր են դառնում ուսանողների համար, տեղի է ունենում գիտելիքի առավել արդյունավետ յուրացում: Որոշ համակարգչային ծրագրերի օգտագործումը (Moodle, Quizzes, Google form և այլն) նպաստում է նաև դասախոսի աշխատանքի հեշտացմանը (քանի որ նյութերը նախապես են պատրաստված լինում էլեկտրոնային եղանակով): Բացի այդ կարևոր է նշել, որ տեսանելիությանն ավելի բարձր մակարդակ է ստեղծվում: Չպետք է մոռանալ համացանցում կան մեծ թվով կատալոգներ, պորտալներ, որոնք հավաքում են էլեկտրոնային կրթական ռեսուրսները, որոնց օգնությամբ նպատակահարմար կլինի կազմակերպել ուսումնական պրոցեսը: Չպետք է մոռանալ, որ տեղեկատվական տեխնոլոգիաները ռազմավարական նշանակության ժամանակակից տեխնոլոգիական համակարգեր են (քաղաքական, պաշտպանական, տնտեսական, սոցիալական և մշակութային): Մտածողությունը, գիտակցությունը, գործունեությունը,

միջանձնային և խմբային հարաբերությունները, որոնք ձևավորվում են տեղեկատվական հարուստ միջավայրում որակապես փոխակերպվում են: Այն սերունդը, որը մեծանում է համակարգիչների, էլեկտրոնային խաղերի, բջջային կապի հետ սերտ կապի մեջ, աշխարհայացքով տարբերվում է հոգեբանական, բարոյական և հոգևոր առումով:

Թվայինի շնորհիվ է, որ հեռավար ուսուցումը իր ամուր հիմքերը դրեց: Բոլոր ուսումնական հաստատություններն անորոշ ժամանակով դադարեցրին իրենց գործունեությունը և բոլոր ուսումնական գործընթացները վերափոխվեցին հեռավարի՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել COVID-19 վտանգները:

Ի վերջո կարելի է գալ այն եզրահանգման, որ ժամանակակից կրթությունը դժվար է պատկերացնել առանց ինտերնետային ռեսուրսների: Ինտերնետը հսկայական ներուժ ունի կրթական զարգացման և օտար լեզուների դասընթացներում բարենպաստ հնարավորություններ է ստեղծում նաև ուսանողների աշխատանքի ինքնուրույն կազմակերպման մեջ: Մուլտիմեդիան լայնորեն կարող է օգտագործել բոլոր դասախոսների կողմից՝ ապահովելով աուդիո և վիդեո բազմազանությունը, ինչն էլ իր հերթին կարող է ավելի հստակեցնել նոր բառապաշարային, քերականական և նույնիսկ հնչյունական նյութերը: Օտար լեզվի դասավանդման գործընթացում թվային տեխնոլոգիաների ներդրման առավելությունն անժխտելի փաստ է: Անժխտելի կարևոր է նաև այն, որ ուսանողների օտարալեզու հաղորդակցման կարողությունների ձևավորման գործում նույնպես այն ունի մեծ դերակատարում, որն արտացոլվում է էլեկտրոնային փոստի, զրույցի, ֆորումների, վեբ կոնֆերանսների կիրառման ժամանակ: Թվային ծառայություններից օգտվելու պայմաններում ի հայտ եկած ռեսուրսներն անգնահատելի հիմք են տեղեկատվական միջավայր ստեղծելու, կրթության և ինքնակրթության, օտարալեզու հաղորդակցման ունակության զարգացման համար: Չպետք է մոռանալ, որ տեղեկատվական և հաղորդակցման նորագույն տեխնոլոգիաներն ավելի ու ավելի շատ տեղ են գրավում ժամանակակից մարդու կյանքում և օտար լեզվի դասընթացների ժամանակ դրանց կիրառումը մեծացնում է ուսանողների մոտիվացիան և ճանաչողական գործունեությունը, ուժեղացնում է, նաև անհատականացնում է ուսումը: Շատ ժամանակ թվային կրթական ռեսուրսների օգտագործումն օտար լեզուների դասավանդման մեջ օգնում է ուսանողներին հաղթահարել օտար լեզուն որպես հաղորդակցության միջոց օգտագործելու հոգեբանական արգելքը:

преподавания и дальнейшего развития. Наконец, в статье выделяется мысль о том, что роль цифровых служб неопределима на международном уровне.

MANE AGHBALYAN - THE STRATEGY OF DIGITAL SERVICES IN FOREIGN LANGUAGE (FRENCH) TEACHING

Keywords: *digital service, ICT, resource, electronic platform, education, online learning, foreign language, digital tool, higher education institution, telecommunication*

Nowadays the digital is on the basis of our daily life. Digital services are found in almost every area of public life: finance, industry, telecommunications, trade, security, as well as education with its entire system. It may be noted that the digital has led to a profound modernization of practice in the world of social sciences. The article highlights the potential strategic features of the digital in higher education, the role that the digital service plays in students' lives, and the success of student integration in that world. The article focuses on the digital as a teaching tool, as a key tool for future development. The article finally highlights the idea that the role of digital services is invaluable internationally.

Ներկայացվել է՝ 24.03.2021
Գրախոսվել է՝ 24.03.2021

**ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԵԼԵՆԱ ԱՎԱԿԻՄՈՎԱ
ՍՅՈՒՋԱՆՆԱ ՅԱՎՐՅԱՆ**

Հիմնաբառեր: դարձվածք, դարձվածային սերտաճումներ, անգլերենի դասավանդում, ժամանակակից մեթոդներ, անգլերենի բառապաշար, դասավանդման մեթոդներ

Հոդվածն ուսումնասիրում է դարձվածային սերտաճումների դերը օտար լեզվի դասավանդման գործընթացում և դրանց ուսուցանման ժամանակակից մեթոդները: Հատուկ ուշադրություն է դարձվում դարձվածքների դերին՝ որպես լեզվի իմացության մակարդակի ցուցիչներից մեկը: Հեղինակներն առաջարկում են դարձվածքները ուսուցանելու պատկերավոր քարտերի ինտերակտիվ մեթոդ, ինչպես նաև որոշ այլ տեսակի վարժություններ, որոնք կարող են ներառվել ուսումնական գործընթացում որպես հավելյալ միջոցներ: Հոդվածի վերջում տրամադրվում է առցանց ռեսուրսների ցանկ՝ մանկավարժներին և այլ մասնագետներին օգնելու նպատակով:

Սույն աշխատանքով հեղինակները փորձում են ցույց տալ, թե ինչ ժամանակակից մեթոդներ կարելի է կիրառել անգլերենի դարձվածքներն ուսուցանելու համար թե ավագ դպրոցականներին, թե ուսանողներին, թե ոչ մասնագիտական խմբերին, ինչպես սկսնակներին, այնպես էլ լեզվին լավ տիրապետողներին:

Աշխատանքի գործնական արժեքը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքները կարող են օգտակար լինել օտար լեզվի բառապաշարի յուրացման, բանավոր և գրավոր խոսքի հմտությունները կատարելագործելու, անգլերենի ուսուցման մեթոդները բարելավելու, դասապրոցեսը ինտերակտիվ դարձնելու, դպրոցում և համալսարանում անգլերենի գործնական դասավանդման համար:

Դարձվածքները հանդիպում են յուրաքանչյուր լեզվի մեջ: Դարձվածքային արտահայտություններ սովորելը և գործածելը օտար

լեզվի յուրացման կարևոր և բարդ ոլորտներից են, ուստի որոշակի հմտության աստիճան է անհրաժեշտ: Անգլերենը բացառություն չէ, քանի որ այն ունի մեծ թվով դարձվածքներ, որոնք լայնորեն օգտագործվում են և՛ առօրյա խոսքում, և՛ ակադեմիական համատեքստում: Քարտերը, Գոդարը և այլոք (Carter, Goddard 2001: 79) պնդում են, որ դարձվածքները շատ իրական խնդիրներ են առաջացնում օտար լեզու սովորողների համար: Ունկնդիրները կամ ընթերցողները միշտ չէ, որ ընկալում են դարձվածքի իմաստը:

Այնուամենայնիվ, բավականին անկանխատեսելի իմաստի պատճառով, դարձվածքները ընկալելն ու մտապահելը, ինչպես նաև կիրառելը հավելյալ դժվարություն է ստեղծում սովորողների համար: Անգլերեն լեզվով հաղորդակցվելիս դարձվածային արտահայտություններ օգտագործելն այսօր համարվում է անգլերենի տիրապետման կարևոր ցուցիչ, քանի որ այն հիմնականում բնորոշ է բնիկ լեզվակիրներին, ովքեր դարձվածքները գործածում են և՛ առօրյա, և՛ գործնական, և՛ ակադեմիական խոսքում:

Դարձվածքները հասկանալու կարևորությունը ընդգծվում է այն փաստարկի միջոցով, որ դրանք «առկա են նաև ակադեմիական համատեքստում: Հետևաբար, բառապաշարը չհասկանալը կարող է ազդել ակադեմիական կատարողականի՝ ընթերցման ընկալման և գրավոր խոսքի վրա» (Lundblom & Woods 2012: 203): Մքթարտին և այլոք կարծում են, որ անգլերենում դարձվածքային արտահայտությունները լայնորեն կիրառվում են և՛ խոսակցական, և՛ գրավոր լեզվում, ուստի լեզու սովորողները պետք է մեծ ջանքեր գործադրեն դարձվածքները յուրացնելու համար (McCarthy, O’Keeffe 2010:68): Հատկապես հետազոտողների ուշադրությունը գրավել են թերթերը (Moon 1998: 69-71) և մեդիան առհասարակ, քանի որ դարձվածքային սերտաճումների բազմաթիվ օրինակներ հաճախ ենք հանդիպում թերթերում, հատկապես դրանց վերնագրերում:

Ադկինսը (Adkins 1968:148-152.) նշում է, որ դարձվածային արտահայտությունները կազմում են անգլերեն լեզվի սիրտը՝ նրան տալով գույն, զգացողություն, հմայք և ճշգրտություն: Ինչպես նշում են Սուքիասյանը և Գալստյանը. (Սուքիասյան , Գալստյան 1975: 6) «մեծ է դարձվածքների դերը խոսքի գեղեցիկ դրսևորման մեջ . դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ազատում խոսքը միապաղաղությունից, միօրինակությունից ու չորությունից»:

Հոդվածում առաջարկվող դարձվածքային արտահայտություններ ընկալելու և սովորելու ինտերակտիվ մեթոդները փորձարկվել և կիրառվել են Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի հայաստանյան մասնաճյուղին կից Ա. Երիցյանի անվ. վարժարանի 9-12րդ դասարաններում անգլերենի ուսուցման ընթացքում, ինչպես նաև Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի առաջին կուրսի ուսանողների խոսքի զարգացման դասընթացների ընթացքում:

Դարձվածքը կառուցվածքով երկու կամ ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր (Սուքիասյան 1999: 296):

Դարձվածքը սահմանում են նաև որպես փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցություն կամ դարձվածքային նշանակությամբ կայուն կապակցություն կամ կայուն արտահայտություն (Սուքիասյան, Գալստյան 1975: 6):

Վ. Վինոգրադովը կարծում է, որ «դարձվածքը լեզվական միավորների համադրություն է, որի իմաստը չի համընկնում դրա բաղադրիչ տարրերի նշանակության հետ: Այս անհամապատասխանությունը կարող է լինել ամբողջականի համատեքստում տարրերի իմաստի փոփոխության արդյունք (Виноградов 1986: 53-79.):

Հենց այս բաղադրիչ տարրերի նշանակության անհամապատասխանությունը ընդհանուր իմաստին առաջացնում է դժվարություն օտար լեզու սովորողների համար:

Դարձվածքային արտահայտությունների իմաստը գտնելը, առավել ևս կռահելը կարող է դյուրին թվալ, սակայն դրանց իմաստը միշտ չէ, որ ներառված է բառարանում, որը հաճախ կարող է տալ դարձվածքային արտահայտություն կազմող բառերի բառացի իմաստը:

Որոշ հետազոտողներ նշում են, որ «դարձվածքները շփոթություն և դժվարություն են ավելացնում լեզվի ուսուցման մեջ, ուստի նրանք հատուկ տեղ են գրավում բառապաշարի և ընթերցանության ուսուցման գործընթացում» (D'Angelo Bromley 1984: 272): Թերթերն ու ամսագրերը, ժամանակակից երգերն ու հեռուստահաղորդումները, ինչպես նաև գրականությունն ու կինոնկարները դարձվածքների անսպառ աղբյուր են, որոնք անհրաժեշտ է ներառել ուսուցչի դասավանդման մեթոդների գործիքակազմում:

Գոյություն ունեն բազմաթիվ մեթոդներ, որոնք օգտագործվում են անգլերենի ուսուցման ընթացքում դարձվածքային սերտաճումներ

ուսուցանելու նպատակով: Հիմնական մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ դասական և փոխաբերությունների կոնցեպտուալ ուսուցման մեթոդ:

Դասական մեթոդը խրախուսում է բառապաշարի խորացված ուսուցումը համատեքստում: Իսկ փոխաբերությունների կոնցեպտուալ մեթոդը ենթադրում է ոճաբանության, շարահասության, նույնիսկ լեզվամշակույթի որոշակի նախնական գիտելիքներ: Դասական մեթոդը դարձվածքները սովորեցնում է համատեքստում:

Լիոնտասը (Liontas 2003: 289-301.) պնդում է, որ համատեքստը կարող է նպաստել բառապաշարի և դարձվածքային արտահայտությունների ըմբռնմանը, ինչպես նաև սովորելուն: Լիոնտասի ուսումնասիրությունը եզրակացնում է, որ «ենթատեքստի բացակայությունը» խոչընդոտներ է ստեղծում «բառապաշար սովորելու և հասկանալու հարցում» (ibid: 288) :

Մյուս մեթոդը առաջարկում է անգլերեն դարձվածքները մատուցել փոխաբերությունների կոնցեպտուալ ուսուցման միջոցով: Այս մեթոդը կիրառելու համար անգլերեն սովորողները պետք է որոշակի գիտելիքներ ստանան ոճաբանությունից՝ ինչ է փոխաբերությունը, համեմատությունը և այլն:

Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր անհատի ընկալումն ու նյութի յուրացումը տարբերվում է այլ սովորողի ընկալման ձևից և տեմպից: Օտար լեզվի դասավանդման մեր փորձը ցույց է տալիս, որ ընդլայնված համատեքստը՝ օրինակ փոքրիկ պատմությունները, ավելի էական ազդեցություն են ունենում բառապաշարի և դարձվածքային արտահայտությունների մտապահման վրա, քան ուղղակիորեն արտահայտությունների իմաստը ուսուցանելը:

Ավագ դպրոցի և առաջին կուրսի շատ ուսանողներ հաճախ նշում են, որ բավականին լավ տիրապետելով անգլերենին, իրենք գիտակցում են, որ ինչ-որ բան այնուամենայնիվ թերի է լեզվի ընկալման և բանավոր խոսքի ասպեկտներում: Հիմնականում աշակերտներն ու ուսանողները զգում են, որ չնայած այն փաստին, որ տարիներով ջանասիրաբար սովորում են անգլերեն և տիրապետում են լեզվին A1-ից B2+ մակարդակներում, չունեն լսելու, ընկալելու կամ արտահայտվելու խնդիր, սակայն հաճախ դժվարանում են հասկանալ բնիկ լեզվակիրների առօրյա ոչ ֆորմալ խոսքը, ծավալուն հատվածներ ժամանակակից անգլիալեզու գրականությունից, ֆիլմերից և հեռուստաշուններից: Ավելին, մեր քննարկումները բացահայտեցին, որ դժվարության հիմնական աղբյուրը առօրյա դարձվածքներն են, որոնք հաճախ չեն հանդիպում դասագրքերում:

Այս համատեքստում առաջարկում ենք առանձնակի ուշադրություն դարձնել դարձվածքների ուսուցանմանը և դասերը պլանավորելիս շաբաթական 15-30 րոպե ժամանակ հատկացնել դրանց և մշտապես ձեռքի տակ ունենալ նյութերի որոշ ընտրանի՝ դասերը աշխուժացնելու և ուսանողներին մոտիվացնելու նպատակով:

Դարձվածքների ուսուցանումը բարելավելու և ավելի լավ արդյունքների հասնելու նպատակով դասերը պլանավորելիս կարելի է համակցել ուսուցման տարբեր ժամանակակից մեթոդներ: Այդ իսկ պատճառով նոր նյութ մատուցելիս հեղինակները կիրառել են մի քանի մեթոդներ՝ cloze passage, multiple choice activity, ինտերակտիվ աուդիո-վիզուալ մեթոդ, վերջինս մեր կիրառած մեթոդներից ամենամեծ թվով ուսանողների ուշադրություն է գրավել:

Առցանց ռեսուրսների բազմազանության պարագայում ուսուցիչների համար ավելի հեշտ է դարձել նյութերի և դասավանդման գաղափարների փոխանակումը և ժամանակակից մեթոդների մշակումն ու կիրառումը:

Դարձվածքների ուսուցանումը կարելի է խմբավորվել ըստ կոնկրետ մեկ թեմայի կամ բազմազան թեմաների շուրջ: Յուրաքանչյուր մոտեցում ունի իր առավելությունները: Թեմատիկ խմբավորումը ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել որոշակի թեմայի շուրջ բառապաշար և արդյունավետ կերպով հարստացնել թեմատիկ գիտելիքները: Մյուս կողմից, տարբեր տիրույթներին վերաբերող դարձվածքները խառնելը լավ միջոց է նախկինում սերտած արտահայտությունները ամրապնդելու համար:

Նախ և առաջ, առաջարկում ենք օգտվել www.idiomconnection.com կայքի հնարավորություններից, քանի որ այն ներառում է մեծ թվով հաճախ կիրառվող դարձվածքներ, որոնք խմբավորված են ինչպես այբբենական կարգով, այնպես էլ թեմատիկ գլխաբառերով: Օրինակ՝ հնարավոր է որոնել դարձվածքներ, որոնք սկսվում են «լ» տառով կամ դարձվածքներ, որոնց առանցքային բառը մարմնի մաս, հագուստ, տրանսպորտ, աշխատանք և այլն ցույց տվող բառ է: Յուրաքանչյուր դարձվածքի հոդվածը ներառում է սահմանում և օրինակելի կիրառում նախադասության մեջ: Կարևորն այն է, որ յուրաքանչյուր շարքի վերջում կա բազմակի ընտրության (multiple choice) առաջադրանք՝ պատասխանի կոճակով, որը թույլ է տալիս սովորողներին ինքնուրույն ստուգել իրենց գիտելիքները: Այս կայքը կարելի է օգտագործել և՛ լսարանային աշխատանքի՝ ինտերակտիվ գրատախտակի առկայության դեպքում, և՛ ինքնուրույն աշխատանքի, և՛ տնային հանձնարարությունների համար:

Անգլերենի դարձվածքների ուսուցանումը առավել գրավիչ է գունավոր պատկերավոր քարտերի միջոցով, որոնք պատկերում են դարձվածքի բառացի իմաստը՝ այսպիսով ստեղծելով իմացական դիտմանս, որը նպաստում է դարձվածքի էֆեկտիվ մտապահմանը: Տես՝ նկ. 1, 2, 3



Նկար՝ 1, 2, 3


Մենմոտեխնիկայի ազդեցությունը դարձվածքների մտապահման վրա լայնորեն ուսումնասիրել են Boers և այլոք (Boers, etc, 2009: 367-382, Boers, Lindstromberg, 2008: 189-216): 2011թ Szczepaniak and Lew –ի անցկացրած ուսումնասիրությունը նույնպես փաստում է պատկերների միջոցով դարձվածքների մտապահման առավելությունը մի քանի այլ մեթոդների նկատմամբ: (Szczepaniak 2011: 323-347):

Պատկերավոր քարտերի մեթոդի ընթացքում յուրաքանչյուր դարձվածքի ուսուցանումը բաժանում ենք երեք փուլի: Նախ, սովորողներին ներկայացվում է գունավոր պատկերը՝ ինտերակտիվ գրատախտակին, համակարգչի վրա կամ գունավոր տպագրությամբ, որը գրոտեսկային կերպով պատկերում է դարձվածքի առանձին տարրերի իմաստը, այնուհետև տալիս ենք բացատրությունը անգլերենով . անհրաժեշտության դեպքում թարգմանում ենք նաև հայերեն, ապա միասին դիտարկում ենք գործածումը օրինակելի նախադասության մեջ: Վերջում սովորողներին առաջարկվում է կազմել իրենց սեփական նմանատիպ նախադասություն: Բազմաթիվ կայքեր առաջարկում են դարձվածքների առանձին տարրերը բառացիորեն նկարագրող պատկերներ . հեղինակները հաճախ օգտվում են Kaplan International languages կայքին պատկանող նկարագրողումների բաժնից, <https://7esl.com/english-idioms/> և <https://www.oysterenglish.com/idiom-examples.html> կայքերում առաջարկվող պատկերներից: Այս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ է ունենալ նախօրոք տպած պատկերների

պաշար կամ կրիչ՝ համակարգչով կամ ինտերակտիվ գրատախտակով ցուցադրելու համար:

Ուսուցանման այս տարբերակը, թերևս, ուսանողների ամենանախընտրելին է, քանի որ ցանկացած տարիքի և գիտելիքների տեր ուսանողները տպավորվում են զվարճալի թեմատիկ նկար-քարտերով:

Մեր փորձը ցույց է տվել, որ այս տարբերակով դարձվածքները մտապահելու ուսանողների ունակությունը 35%-ով բարձրանում է մյուս մեթոդների համեմատ: Թեմատիկ նկար-քարտերով ուսուցանումը կատարվում է շաբաթը մեկ-երկու անգամ, յուրաքանչյուր անգամ տրամադրելով 10-30 րոպե՝ կախված դասի նպատակից: Յուրաքանչյուր հաջորդ դասին, նախորդ թեման ամրապնդելու նպատակով, ուսուցիչը կարող է ցուցադրել երկուսից մինչև հինգ քարտ արդեն ծանոթ դարձվածքների պատկերով և առաջարկել բազմակի ընտրության (multiple choice activity) միջոցով ընտրել ճիշտ տարբերակը . առաջադրանքը կարելի է կատարել և՛ խմբային, և՛ անհատական աշխատանքի տարբերակով: Տես՝ նկար 4,5 :



A. you are very strong
B. you are the first to do or say smth
C. you like cold drinks

A. ride a horse
B. stop your car
C. be patient

Նկար 4 ,5

Երբեմն ուսանողները ստանում են անհատապես պատասխանելու հնարավորություն, երբեմն բաժանվում են երկու մրցող խմբերի (կախված նրանից, թե որքան ժամանակ ունենք):

Երբ ներկայացնում ենք նոր դարձվածքներ, նույնպես կարող ենք կիրառել քարտերը: Տվյալ պարագայում առաջարկում ենք նրանց կռահել՝ հիմնվելով նկարի և բառերի վրա: Ապա բացատրում ենք իմաստը և բերում օրինակ:

Յուրաքանչյուր անգամ ներկայացվում են 7-10 թեմատիկ դարձվածքներ:

Հաջորդ քայլը ամրապնդող առաջադրանքներն են, որոնցից ամենաէֆեկտիվը կարելի է համարել «լրացրու բաց թողնված բառերը» (cloze passage): Սա ընթերցանության ընկալման առաջադրանք է, որտեղ բառերը համակարգված կերպով բաց են թողնված: Ուսանողները լրացնում են բացթողումները: Նրանց պատասխանները ճիշտ են համարվում, եթե դրանք ճշգրիտ համընկնում են բացակայող բառերի հետ: Օրինակ՝ Fill the gaps with words from the box.

Sometimes, more than one answer is possible.

Someone has let the _ _ _ _ _ out of the bag.

Tina knows all about her 'surprise' birthday party.

lips hat cat wraps dark

“Do you have any similar idioms in your own language?” կարևոր հարցերից է, որն անհրաժեշտ է պարբերաբար ուղղել ուսանողներին և խրախուսել նրանց գտնել հայերենում անգլերեն դարձվածքների համարժեքները:

Իսկ որպես տնային հավելյալ աշխատանք կարելի է առաջարկել ուսանողներին հետևյալ տարբերակը՝ գրել կարճ էսսե կամ թեմատիկ շարադրություն՝ օգտագործելով հինգ նոր, հինգ արդեն յուրացրած դարձվածք: Մոտիվացնելու նպատակով թեմայի ընտրությունը հաճախ թողնում ենք ուսանողների հայեցողությանը:

Հաջորդ առաջարկվող մեթոդն է «Ժամանակագրական հերթականություն/պատմությունների հորինում»-ը: Սա գրավոր առաջադրանքի տեսակ է, որը միշտ ոգևորում է սովորողներին, եթե թեմայի ընտրության հարցում ուսանողին տրվում է ազատություն: Այն կարելի է իրականացնել և՛ որպես լսարանային ինքնուրույն, և՛ տնային աշխատանք:

Աշակերտներին առաջարկվում է դարձվածքային արտահայտությունները ժամանակագրական կարգով տեղադրել հորինված փոքրիկ պատմության մեջ: Այս տարբերակը ամենալավը գործում է աշխատանքի և ռոմանտիկ հարաբերությունների հետ կապված բառապաշար սովորելիս: Օրինակ՝ *butterflies in my stomach, blind date, fall in love, old flame, no love lost between us/them, walking on air, love conquers all*:

Համատեքստից իմաստի կռահումը (“Guessing from context”) ևս մեկ առաջադրանքի տարբերակ է: Այն դրդում է ուսանողին ուշադրություն դարձնել համատեքստին և դարձվածքի իմաստը կռահել տեքստի բանալի բառերից և նախադասություններից: Հոգեբանները պնդում են, որ կամաձին ուշադրությունը կենտրոնացնելիս բարձրանում է ուսանողների կողմից բառերը հիշելու հավանականությունը: Փոքրիկ պատմվածքներ և համատեքստային աշխատանք է առաջարկում հետևյալ կայքը, <http://www.englishdaily626.com/idioms>, որտեղ յուրաքանչյուր դարձվածք օգտագործված է երկխոսություններում կամ կարճ պատմություններում:

Դարձվածքները յուրացնելու և ամրապնդելու հաջորդ աշխատանքն է ընդգծված բառերը փոխարինել թեմատիկ դարձվածքներով: Օրինակ՝ “Replace the underlined part of the sentence with a suitable idiom”.

Նոր դարձվածքներ ներկայացնող և գիտելիքը ամրապնդող մեկ այլ տեսակի առաջադրանք առաջարկում ենք կատարել դասարանում և ստուգել հենց տեղում. ավագ դասարանների ուսանողներին առաջադրանքի համար հատկացվում է 15-20 րոպե ժամանակ: Առաջարկվում է դարձվածքներով համեմված տեքստ, որոնց իմաստը անհրաժեշտ է կռահել համատեքստից. տեքստն ընթերցելուց հետո անհրաժեշտ է առաջին սյունյակում տեղադրված համատեքստից կռահած դարձվածքը համապատասխանեցնել երկրորդ սյունյակի բացատրություններին:

Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է գործի դնել իր երևակայությունը և տարբեր նպատակներով կիրառել տվյալ կայքի ընձեռած հնարավորությունները:

Այսպիսով, համապատասխան բառապաշարի ուսուցումը կարելի է հաճելի և զվարճալի դարձնել ուսումնառության յուրաքանչյուր մակարդակում՝ A1-ից մինչև B2+՝ կիրառելով պատկերավոր նկարների հուշագրության մեթոդը, «լրացրու բաց թողնված բառերը» առաջադրանքը, «կռահիր համատեքստից» մեթոդը, «ժամանակագրական հերթականության/պատմությունների հորինում» մեթոդները: Նկարագրված մեթոդները նպաստում են բառապաշարի յուրացմանը և բանավոր և գրավոր խոսքի հմտությունների զարգացմանը, հարստացնում են մասնագետի օտար լեզվի ուսուցման մեթոդական գործիքակազմը, դասապրոցեսը դարձնում են ինտերակտիվ և մատչելի, նպաստում են ուսանողների ներգրավվածությանը և մատուցվող նյութն անմիջապես լսարանում ընկալելուն ու յուրացնելուն:

Առաջարկվող մեթոդների բազմազանությունը կարող է պարբերաբար օգտագործվել դասապրոցեսի ընթացքում՝ ապահովելով ուսանողների բարձր ներգրավվածությունն ու մոտիվացիան: Արդյունքում

ուսանողներն ավելի լավ պատկերացում են կազմում դարձվածքների և դրանց գործածման տիրույթների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան: Երեւանի Համալսարանի Հրատարակչություն, Երեւան, 1975, էջ 6:
Suqiasyan A., Galstyan S., Hayots lezvi dardzvacabanakan bararan. Yerevani Hamalsarani Hratarakchutyun, Yerevan 1975, ej 6:
2. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1999. էջ 296:
Suqiasyan A., Jamanakacic hayoc lezu, Yerevan 1999, ej 296
3. Виноградов В.В. Об основных типах фразеологических единиц в русском языке// Виноградов В.В., Лексикология и лексикография. Москва, 1986. С. 53-79.
Vynogradov V.V. Ob osnovnyyh tyrah frazeologicheskyyh edynyc v russkom jazyyke// Vynogradov V.V., Leksykologyya y leksykografyya. Moskva, 1986. S. 53-79.
4. Adkins, P.. Teaching idioms and figures of speech to non-native speakers. *Modern Language Journal*, 1968, (52), 148-152.)
5. Boers, F., Lindstromberg, S., Littlemore, J., Stengers, H., & Eyckmans, J.. Variables in the mnemonic effectiveness of pictorial elucidation. In F. Boers & S. Lindstromberg (Eds.), *Cognitive Linguistic Approaches to Teaching Vocabulary and Phraseology*, Berlin /New York: Mouton de Gruyter, 2008, pp.189-216.
6. Boers, F., Piquer-Piriz, A.M., Stengers, H., & Eyckmans, J.. Does pictorial elucidation foster recollection of idioms? *Language Teaching Research*, 2009, 13 (4), pp 367-382.
7. Carter, R., Goddard, A., Reah, D., Sanger, K., & Bowing, M. . Working with texts. A core introduction to language analysis (2nded.). London: Routledge, 2001, p 79.
8. D'Angelo Bromley, K.. Teaching idioms. *The Reading Teacher*, 1984, 38(3), p. 272.
9. Liontas, J. I.. Killing two birds with one stone: Understanding Spanish VP idioms in and out of context. *Hispania*, 2003, 86(2), pp 289-301.
10. Lundblom, E. G. E., & Woods, J., J.. Working in the classroom: Improving idiom comprehension through class-wide peer tutoring, *Communication*

Disorders Quarterly, 2012, 33 (4), pp 202-2019
<https://doi.org/10.1177%2F1525740111404927>

11. McCarthy, M., O’Keeffe, A., & Walsh, S.. Vocabulary matrix: Understanding, learning, teaching. Hampshire: Heinle, CENGAGE Learning, 2010, p 68
12. Moon, R. Fixed expressions and idioms in English. Oxford: Oxford University Press, 1998 , p 69-71
13. Szczepaniak, R., & Lew, R.. The role of imagery in dictionaries of idioms. *Applied Linguistics*, 2011, 32 (3), pp 323-347

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Boatner M.T., Gates J.E. A Dictionary of American Idioms. N.Y.: Barron's, cop.
2. Brewer's Dictionary of Phrase and Fable. 2nd ed. London: Cassell, 1981.
3. Collins V.H. A Book of English Idioms. London: Longmans, 1956.
4. Cowie A.P., Mackin R. Oxford Dictionary of Current Idiomatic English. Vol.2: Phrase, Clause and Sentence Idioms. Oxford: Univ. Press, 1983. LXIII.

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. <https://eslgames.com/wp-content/uploads/2015/06/esl-idioms-animals.pdf>
2. <https://eslgames.com/idiom-worksheets/>
3. <https://www.kaplaninternational.com/>
4. http://www.readwritethink.org/files/resources/interactives/idioms/idiom_1.html
5. <https://www.idiomconnection.com/heart.html>
6. <https://7esl.com/english-idioms/>
7. https://www.eslprintables.com/vocabulary_worksheets/travelling/Travelling_idioms_764087/
8. <https://en.islcollective.com/english-esl-worksheets/search/animal+idioms>
9. [https://www.liveworksheets.com/worksheets/en/English_as_a_Second_Language_\(ESL\)/Idioms/Idioms_zi61195jg](https://www.liveworksheets.com/worksheets/en/English_as_a_Second_Language_(ESL)/Idioms/Idioms_zi61195jg)
10. <https://7esl.com/love-idioms/>
11. https://www.eslprintables.com/vocabulary_worksheets/friendship/love/Love_idioms_772543/
12. <https://www.scribd.com/doc/125859645/Love-Idioms-Worksheet>
13. <https://www.oysterenglish.com/idioms-ebook.html>

**НЕЛЛИ ХАЧАТРЯН, ЕЛЕНА АВАКИМОВА, СЮЗАННА ЯВРЯН-
ИНТЕРАКТИВНЫЕ МЕТОДЫ ОБУЧЕНИЯ ИДИОМАТИЧЕСКИХ ЕДИНИЦ
КАК СРЕДСТВО МОТИВАЦИИ ДЛЯ СТУДЕНТОВ АНГЛИЙСКОГО
ЯЗЫКА**

***Ключевые слова:** идиомы, идиоматические выражения, обучение английскому языку, современные методы, английская лексика, методы обучения*

В статье рассматривается роль устойчивых выражений при обучении студентов английскому языку и частота употребления фразеологизмов как один из показателей уровня владения языком. Авторы представляют интерактивный метод обучения с помощью карточек как один из наиболее эффективных методов обучения идиоматических единиц. Также предлагается подборка наиболее эффективных интерактивных методик обучения идиомам в качестве дополнительных инструментов, которые могут быть включены в учебный процесс при освоении студентами английского языка. Также в конце статьи предлагается перечень онлайн-ресурсов с использованием новых интерактивных методик обучения идиомам.

**NELLI KHACHATRYAN, YELENA AVAKIMOVA, SYUZANNA YAVRYAN-
INTERACTIVE METHODS OF TEACHING IDIOMCS AS A MEANS OF
MOTIVATION FOR ESL STUDENTS**

***Keywords:** idioms, idiomatic expressions, teaching English, modern methods, English vocabulary, teaching methods*

The article examines the role of idioms in the teaching of a foreign language as well as modern methods of teaching them. Special attention is paid to the use of idioms as one of the indicators of language proficiency. The authors introduce an interactive method of teaching idioms with the help of picture cards as one of the most effective methods, as well as other methods and types of exercises that can be included in the teacher's teaching kit as additional tools. A list of online resources is provided at the end of the article to help educators and other specialists.

**Ներկայացվել է՝ 15.09.2021
Գրախոսվել է՝ 10.09.2021**

**О НЕОБХОДИМОСТИ БИЛИНГВАЛЬНОГО ЯЗЫКОВОГО
ОБРАЗОВАНИЯ В СВЕТЕ ИДЕЙ МЕЖКУЛЬТУРНОЙ КОММУНИКАЦИИ**

**НИНА ТАТКАЛО
ИННА САРКИСЯН**

Ключевые слова: образовательный процесс, билингвизм, межкультурная коммуникация, методика преподавания иностранных языков, поликультурное пространство

Приоритетным направлением образовательного процесса начала нового тысячелетия является ориентация на антропоцентризм, на формирование личности с высокой культурой общественного сознания. Это подразумевает воспитание нового поколения с высоким культурным и образовательным уровнем, поколения, владеющего несколькими иностранными языками, осознающего культурную полифоничность мира и готового к диалогу в широком смысле этого понятия и адекватной межкультурной коммуникации.

Переосмысление целей и задач современного образования в свете гуманитаризации и гуманизации, проблемы формирования толерантности, диалогичности и межкультурной коммуникации стали рассматриваться в широком образовательном аспекте.

По утверждению М.М. Бахтина понимание есть взаимопонимание, то есть диалогичность: «Увидеть и понять автора произведения – значит увидеть и понять другое, чужое сознание и его мир, то есть другой субъект. При объяснении – только одно сознание, один субъект; при понимании два сознания, два субъекта» (Бахтин 1979: 9).

Понятие *диалог* рассматривается М.М.Бахтиным как непрерывный социальный процесс производства значения и смысла. Диалог – это совместная интерпретация смысла, что и предопределяет успешность диалогической коммуникации. С точки зрения методики преподавания иностранных языков особую ценность представляет тезис о том, что рефлексивность в диалоге играет основную роль в процессе возникновения понимания, так же, как и в процессе обучения показателем восприятия новой информации и формирования

образовательных и коммуникативных компетенций является адекватная рефлексия.

Именно это положение мы берем в качестве основы коммуникативного диалогического образования в лингвистических и школах РА.

В условиях, когда человек должен уметь сосуществовать в поликультурном пространстве, язык является, вероятно, единственным инструментом, с помощью которого становится возможным взаимопонимание и взаимодействие между представителями различных лингвосообществ. Отсюда совершенно очевидна необходимость уделять особое внимание проблеме формирования у учащихся способности эффективно участвовать в межкультурной коммуникации. В условиях средней общеобразовательной школы одним из наиболее целесообразных путей решения данного вопроса является ориентация на билингвальное и полилингвальное языковое образование.

Понятие *билингвальное языковое образование* предполагает “взаимосвязанное и равнозначное овладение учащимися двумя языками (родным и неродным), освоение родной и неродной/иностранной культуры, развитие учащегося как двуязычной и бикультурной (поликультурной) личности и осознание им своей двуязычной и бикультурной принадлежности” (Гальскова и др. 2003: 12-16).

В связи с этим практические цели билингвального языкового образования могут быть определены как:

- овладение предметным знанием с использованием двух языков (родного и иностранного);
- формирование и совершенствование межкультурной компетенции учащихся;
- развитие коммуникативной компетенции учащихся в родном и изучаемом иностранном языке;
- развитие у учащихся способности получать дополнительную предметную (внеязыковую) информацию из разных сфер функционирования иностранного языка.

Реализовать эти цели – значит сформировать языковую личность учащегося, то есть личность, способную порождать и понимать речевые высказывания на иностранном языке, а также иметь фоновые знания, то есть быть способным к межкультурному диалогу. В содержание языковой личности обычно включаются следующие компоненты:

- *ценностный, мировоззренческий компонент* содержания воспитания, т.е. система ценностей, или жизненных смыслов. Иностранный язык обеспечивает первоначальный и глубинный взгляд на мир, образует тот языковой образ мира и иерархию духовных представлений, которые лежат в основе формирования национального характера и реализуются в процессе языкового диалогового общения;
- *культурологический компонент*, т.е. уровень освоения культуры страны изучаемого языка как эффективного средства повышения интереса к данной дисциплине. Привлечение фактов культуры страны изучаемого языка, связанных с правилами речевого и неречевого поведения способствует формированию навыков адекватного употребления и эффективного воздействия на партнера по коммуникации;
- *личностный компонент*, т.е. то индивидуальное, глубинное, что есть в каждом человеке.

Таким образом, хотя для языковой личности нельзя провести прямой параллели с национальным характером, но глубинная аналогия между ними существует. Нельзя не упомянуть, что еще великий немецкий лингвист Вильгельм фон Гумбольдт рассматривал язык как определенную духовную энергию народа, как особое видение картины мира. Следовательно, представляется возможным трактовать языковую личность как глубоко национальный феномен и рассматривать в связи с конкретным языком – конкретную языковую личность, (например, русский язык – русская языковая личность).

Применительно к изучению иностранного языка необходимо, наряду с понятием “языковая личность”, рассматривать лингводидактическую категорию “вторичная языковая личность”, которая понимается как совокупность способностей человека к адекватному взаимодействию с представителями других культур, то есть, в конечном итоге – способностей к межкультурной коммуникации. В этом случае использование родного и иностранного языков осуществляется параллельно на паритетной основе.

В соответствии с концептом вторичной языковой личности осознание себя как вторичной языковой личности предусматривает:

- осознание себя, как языковой личности в целом, включая мотивационный уровень, лингвокогнитивный уровень и семантический уровень;
- способность пользоваться языком в текстовой деятельности – коммуникации;

- способность к саморазвитию, к обеспечению креативной текстовой деятельности.

В настоящее время данные физиологии и психологии позволяют сделать достаточно аргументированный вывод о том, что овладение вторым языком – это не просто накопление языкового материала в результате подбора лексических единиц, ситуаций и усвоения грамматических форм и структур, а перестройка речевых механизмов человека для взаимодействия, а позже и параллельного использования двух языковых систем. На первых этапах усвоения для этого необходимо сформировать навык переключения с языка на язык, а на более поздних – нейтрализовать одну систему для создания более благоприятных условий функционирования другой.

Именно поэтому одной из первоочередных задач билингвального языкового образования следует считать создание механизма билингвизма.

Рассматривая сущность становления механизма билингвизма, необходимо отметить, что она заключается в “возбуждении знаковых, денотативных (семасиологических) или ситуационных связей лексических единиц в условиях необходимости или возможности выбора между двумя языковыми системами” (Миньяр-Белоручев 1991: 15-16).

У всех, кто приступает к изучению иностранного языка, существуют денотативные или ситуационные связи лексических единиц родного языка. Они знают в необходимых пределах, как обозначать тот или иной предмет, то или иное явление, какими речевыми единицами реагировать на возникающую ситуацию. При изучении лексических единиц второго языка, каждая новая иноязычная лексическая единица связывается не с тем или иным субъектом действительности, а с соответствующим словом родного языка и только через него с самим обозначаемым. При этом возникает опасность создания ложных знаковых связей в том случае, если новое иностранное слово не имеет полноценного эквивалента в родном языке.

Р.К. Миньяр-Белоручев выделяет некоторые особенности становления механизма билингвизма. Возможность создания ложных знаковых связей между лексическими единицами двух языков является первой особенностью данного механизма (Миньяр-Белоручев 1991: 15-16).

Вторая особенность становления механизма билингвизма состоит в связи иностранного языка с родным, что вызывает и его связь с соответствующей семантической системой, которая образуется вокруг любой лексической единицы.

Третья его особенность связана с правилом доминантного языка, который подавляет второй и прочие языки и является причиной не только лексической, грамматической, но и лингвострановедческой интерференции.

Вышеперечисленные особенности становления механизма билингвизма говорят о необходимости его формирования уже на начальном этапе обучения. На данной ступени образования происходит становление личности учащегося, выявление и развитие его способностей. Осваивая новый язык, ребенок расширяет не только свой кругозор, но и границы своего мировосприятия и мироощущения. При этом то, как он воспринимает мир и что он в нем видит, всегда отражается в понятиях, сформированных на основе родного языка учащегося и с учетом всего многообразия присущих данному языку выразительных средств. Явления иной культуры всегда оцениваются ребенком через призму принятых в родном лингвосоциуме культурных норм и ценностей, через призму усвоенной им модели миропонимания.

Следовательно, речь идет о том, чтобы, с одной стороны, воспрепятствовать созданию ложных знаковых связей между речевыми единицами родного и иностранного языков, а с другой стороны, способствовать становлению новой национальной системы понятий, коррелирующей с системой понятий родного языка. Это возможно при реализации следующих задач:

- закрепление знаковых связей иноязычных речевых единиц с их эквивалентами в родном языке;
- разработка ситуационных связей ситуационных клише иностранного языка;
- торможение процесса создания ложных знаковых связей между лексическими единицами и структурами второго и первого языка;
- разработка механизма переключения с одного языка на другой;
- создание условий порождения иноязычных высказываний независимо от структур родного языка.

Практическая реализация вышеперечисленных положений возможна при использовании уже на начальном этапе следующих приемов обучения:

- презентация иноязычных лексических единиц с учетом их семантических полей, т.е. объяснение границ его значения, а также существенных для него связей с другими словами;

- систематические упражнения на создание и закрепление знаковых связей словосочетаний путем их перевода, прежде всего с родного языка на иностранный;
- разработка речевых микроситуаций для создания и закрепления ситуационных связей речевых клише;
- упражнения в чтении, записи под диктовку, цифровом обозначении числительных, названий дней недели, месяцев;
- использование зрительного субъективного кода как средства обучения монологической речи, ограничивающего влияние родного языка. С этой целью учащиеся получают задание записать содержание иноязычного текста любыми условными знаками, в том числе и рисунками, но без использования слов родного языка. На основе своих записей учащиеся строят монологическое высказывание. Работа с “личным кодом” вызывает большой интерес и способствует повышению мотивации.

Созданию механизма билингвизма на начальном этапе обучения будут способствовать и упражнения, направленные на формирование сопутствующих речевых механизмов:

- повторение иноязычного текста, варьируемое по темпу речи и временному периоду (отставание от речи ведущего, измеряемое в количестве слов);
- скороговорки на изучаемом языке;
- аудирование иноязычного текста с опорой на текст на родном языке;
- сложное аудирование (аудирование одновременно с чтением другого текста);
- зрительное восприятие текста со счетом и др.

На начальном этапе обучения в условиях билингвального языкового образования особую роль играют приемы, формирующие не только механизм билингвизма, но и интерес учащихся к изучению родного и иностранного языков, способствующие более глубокому постижению родной и иноязычной культуры, а также привитию навыков межкультурной коммуникации.

Подводя итог всему сказанному, можно сделать следующий вывод: для современного языкового образования необходимы междисциплинарная интеграция, многоуровневость, вариативность, ориентация на межкультурный аспект овладения языком.

Языковая культура является неотъемлемой и существенной частью культуры человека в целом. Не вызывает сомнения, что правильно

поставленное лингвистическое образование является единственным путем к созданию более высокой культуры.

Билингвальное языковое образование является, с одной стороны, наилучшим средством для познания родного языка, а с другой - для философского его преодоления и для развития диалектического мышления.

“Учащиеся всем ходом занятий приучаются не скользить по привычным им явлениям родного языка, а подмечать разные оттенки мысли, до сих пор не замеченные ими в родном языке. Это можно назвать преодолением родного языка, выходом из его магического круга” (Щерба 1974: 354).

По мнению многих специалистов, в совершенстве овладеть родным языком - т.е. оценить все его возможности, - можно только изучая какой-нибудь иностранный язык. Ничего нельзя познать без сравнения, а единство языка и мышления не дает нам возможности отделять мысль от способов ее выражения. Билингвальное языковое образование дает нам эту возможность, помогая вскрывать разнообразные средства выражения как в иностранном, так и в родном языке, а также дает возможность успешно решать вопросы межкультурной коммуникации.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ REFERENCES

1. Бахтин М.М. Проблема текста в лингвистике, филологии и других гуманитарных науках. Опыт философского анализа \ \ Эстетика словесного творчества. - М.; Художественная литература, 1979. - 290 с.
Bahtin M.M. Problema teksta v lingvistike, filologii i drugih gumanitarnyh naukah. Opyt filosofskogo analiza \ \ Jestetika slovesnogo tvorchestva. - M.; Hudozhestvennaja literatura, 1979. - 290 s.
2. Гальскова Н.Д., Коряковцева Н.Ф., Мусницкая Е.В., Нечаев Н.Н. Обучение на билингвальной основе как компонент углубленного языкового образования // Иностранные языки в школе. - 2003. - № 2. - С. 12-16.
Gal'skova N.D., Korjakovceva N.F., Musnickaja E.V., Nechaev N.N. Obuchenie na bilingval'noj osnove kak komponent uglublennogo jazykovogo obrazovanija // Inostrannye jazyki v shkole. - 2003. - № 2. - S. 12-16.

3. Миньяр-Белоручев Р.К. Механизм билингвизма и проблема родного языка при обучении иностранному // Иностранные языки в школе. - 1991. - № 5.-С.15-16.
Min'jar-Beloruhev R.K. Mehanizm bilingvizma i problema rodnogo jazyka pri obuchenii inostrannomu // Inostrannye jazyki v shkole. - 1991. - № 5.- S.15-16.
4. Щерба Л.В. Языковая система и речевая деятельность. Л., 1974. - 354.
Shherba L.V. Jazykovaja sistema i rechevaja dejatel'nost'. L., 1974. - 354.

**ՆԻՆԱ ՏԱՏԿԱԼՈՒ, ԻՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ - ԵՐԿԼԵՉՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Հիմնաբառեր: կրթական գործընթաց, բիլինգվալ, միջմշակութային հաղորդակցություն, օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, բազմամշակութային տարածք

Ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ժամանակակից լեզվական կրթության համար անհրաժեշտ են միջդիսցիպլինար ինտեգրում, բազմամակարդակություն, փոփոխականություն, լեզվի տիրապետման միջմշակութային կողմնորոշում:

Բիլինգվալ լեզվական կրթությունը մի կողմից մայրենին ճանաչելու լավագույն միջոցն է, մյուս կողմից՝ այն փիլիսոփայական հաղթահարելու և դիալեկտիկական մտածողության զարգացման միջոց:

Բազմաթիվ մասնագետների կարծիքով՝ մայրենի լեզվին լիարժեք տիրապետելը, այսինքն՝ նրա բոլոր հնարավորությունները գնահատելը կարելի է միայն որևէ օտար լեզու սովորելիս: Ոչինչ չի կարելի սովորել առանց համեմատության, իսկ լեզվի և մտածողության միասնությունը մեզ հնարավորություն չի տալիս տարանջատել միտքը նրա արտահայտման ձևերից: Լեզվական բիլինգվալ կրթությունը մեզ տալիս է այս հնարավորությունը՝ օգնելով բացահայտել արտահայտման բազմազան միջոցներ ինչպես օտար, այնպես էլ մայրենի լեզվով, ինչպես նաև հնարավորություն է տալիս հաջողությամբ լուծել միջմշակութային հաղորդակցության հարցերը:

NINA TATKALO, INNA SARGSYAN - ON THE NEED FOR BILINGUAL LANGUAGE EDUCATION IN THE LIGHT OF THE IDEAS OF INTERCULTURAL COMMUNICATION

Keywords: *educational process, bilingualism, intercultural communication, methods of teaching foreign languages, multicultural space*

Based on the results obtained in the course of the study, the following conclusion can be drawn: for modern language education, interdisciplinary integration, multilevelness, variability and orientation to the intercultural aspect of language acquisition are necessary.

On the one hand bilingual language education is the best means for learning the native language and on the other – for its philosophical overcoming and for the development of dialectical thinking.

According to many experts it is quite possible to master the native language - that is to evaluate all its capabilities - only by studying a foreign language. Nothing can be known without comparison and the unity of language and thought does not allow us to separate thought from the ways of its expression. Bilingual language education gives us this opportunity helping to discover a variety of means of expression both in a foreign language and in our native language and also gives us the opportunity to successfully solve issues of intercultural communication.

Ներկայացվել է՝ 17.09.2021

Գրախոսվել է՝ 26.08.2021

**ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՕՏԱՐ
ԼԵՉԿԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ՍՈՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Հիմնաբառեր՝ առցանց ուսուցում, դասավանդում, հավելվածներ, հաղորդակցական գործիքներ, տեխնոլոգիա, օրար լեզվի դասընթաց

Վերջին 20 տարիների ընթացքում համացանցը վերածվել է երբևէ ստեղծված տեղեկատվության ամենամեծ, առավել մատչելի և հասանելի տվյալների բազայի: Այն փոխել է հաղորդակցման, գնումներ կատարելու, սոցիալական շփումների, բիզնեսով զբաղվելու, ժամանցի, ինչպես նաև կրթություն ստանալու մարդկանց պատկերացումները և ավանդական մոտեցումները: Թերևս ամենակարևոր նորամուծությունը վերոնշյալ փոփոխությունների մեջ առցանց, այսինքն՝ օնլայն ուսուցումն է, ինչը կրթությունը դարձնում է ավելի մատչելի և հասանելի, քան երբևէ: օրինակ՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց առջև բացում է կրթություն ստանալու լայն հնարավորություններ, կամ ինքնակրթության, հիանալի հնարավորություն է ընձեռում և այլն: Առցանց ուսուցումը կրթության կազմակերպումն է տարածության մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, այնպիսի տեխնոլոգիաների, ինչպիսիք են հեռահաղորդակցման գործիքները, տեսանյութերը, վեր տեխնոլոգիաները, աուդիո և այլ մեդիա նյութերը:

Առցանց ուսուցման ընթացքում գործնականում կիրառվում են ուսուցման տարբեր մեթոդներ (տեսակներ): Այս մեթոդները տարբերվում են սովորողի և դասախոսի հաղորդակցման բնույթով:

Օնլայն ուսուցման մեթոդներն են՝

- համաժամանակյա (synchronous learning),
- անհամաժամանակյա (asynchronous learning),
- խառը տիպի ուսուցում (blended learning):

Համաժամանակյա ուսուցումը (synchronous learning) դասապրոցեսի կազմակերպումն է հաղորդակցման տարբեր գործիքների միջոցով՝ կենդանի կապ պահպանելով մասնակիցների միջև: Անհամաժամանակյա ուսումը չի պահանջում կենդանի կապ մասնակիցների միջև, այն հասանելի է 7/24 ժամանակացույցով (Hrastinski 2008:51-52): Խառը

տիպի ուսուցումը երկու ձևաչափերի խառնուրդն է: Խառը տիպի դասընթացները ոչ միայն փոխում են դասապրոցեսի բովանդակության մատուցման ձևերը, այլև վերասահմանում են ավանդական կրթական մոդելները և լայն ուսուցման հնարավորություններ տալիս (Stein and Graham 2014:12):

Առցանց ուսուցումը շատերի համար բացարձակ նոր և անսովոր միջավայր է, որը, իհարկե, տարբերվում է ավանդական միջավայրից, ուստի և պահանջում է ուսուցման ոչ ավանդական, նոր մեթոդաբանություն: Սակայն շատ դասախոսներ ուսանողներին պարզապես տրամադրում են ավանդական լսարանային դասախոսություններ՝ ենթադրելով, որ դրանք բավարար կլինեն առցանց դասընթացի կազմակերպման համար: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները պարզել են, որ լավ մշակված, փաստաթղթավորված և կառուցվածքային դասընթացը խրախուսում և հեշտացնում է ուսանողների հետ ակտիվ շփումը, նրանցներգրավվածությունը դասագործընթացին, ինչը կարևոր է հաջողության հասնելու համար: Ըստ Shelton and Saltsman-ի կարծիքի՝ առցանց ուսուցման վերաբերյալ ամենատարածված բողոքները՝ 1) ուսուցման այս մեթոդի ըմբռնման բացակայությունն է, 2) ինստիտուցիոնալ աջակցության բացակայությունն է և 3) վախ, որ առցանց միջավայրում կրթության որակը տուժում է (Kentnor 2015: 29):

Ար օրերում դժվար է պատկերացնել ուսումնական գործընթացի կազմակերպումն առանց բարձրագույն տեխնոլոգիաների կիրառման. բացի այդ՝ ամբողջ աշխարհում իրենց ուրույն տեղն են ունեցել և ունեն առցանց դասընթացները. կարելի է գտնել առաջարկվող տարբեր առցանց կուրսեր՝ ինչպես վճարովի հիմունքներով, այնպես էլ՝ անվճար: Առաջարկվող առցանց դասընթացների թվի մեծ աճը հետաքրքրություն է առաջացնում կրթական տարբեր կազմակերպությունների շրջանում: 2019 թվականին «Կորոնավիրուս» (COVID-19) հիվանդության պատճառով ամբողջ աշխարհում ողջ կրթական համակարգը՝ տարրականից մինչև բարձրագույն, հայտնվեց մեծ մարտահրավերների առջև, և, իհարկե, Հայաստանն այդ ամենից անմասն չմնաց:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 2020 թ. ապրիլի վերջին կրթական հաստատությունները փակվեցին 186 երկրներում՝ մարտահրավեր նետելով մոլորակում ընդգրկված ընդհանուր սովորողների մոտ 74% -ին: Շատ երկրներում կրթական հաստատությունները փակվեցին 2020-ի մարտի սկզբից, իսկ մյուսները (օրինակ՝ Չինաստանը և Հարավային Կորեան)՝ 2020 թվականի հունվարից (Di Pietro 2020: 7):

COVID-19 համաճարակն առաջացրեց կրթական համակարգերի խաթարում ամբողջ աշխարհում՝ իր բացասական ազդեցությունն

ունենալով գրեթե 1,6 միլիարդ սովորողների վրա ավելի քան 190 երկրներում և բոլոր մայրցամաքներում: Հատկապես դա մեծ մարտահրավեր էր ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում: (United Nations 2020: 2-5):

Հայաստանում համավարակի պատճառով նույնպես փակվեցին կրթական հաստատությունները, և կրթության բոլոր մակարդակներում դասախոսները, կրթական հաստատությունների ղեկավարները և այլ պատասխանատուներ բախվեցին աննախադեպ մարտահրավերի՝ փորձելով համակարգել կրթական հաստատությունների աշխատանքը արագ փոփոխվող և անկանխատեսելի պայմաններում:

Այս ամենն առաջ բերեց մի շարք խնդիրներ թե՛ դասավանդողների, թե՛ ուսանողների մոտ: Պարզ դարձավ, որ շատերի համար առցանց աշխատելը բացարձակ նորույթ էր, խորթ և ստանդարտից դուրս: Կարիք առաջացավ դասընթացը նորովի կազմակերպելու պահանջ, որը ենթադրում էր ոչ ավադական գործիքակազմի կիրառում:

Եվ, ուրեմն, հայ հասարակությունը հայտնվեց մի իրականության մեջ, որտեղ պետք էր արագ անցում կատարել օնլայն կրթական համակարգի, դասավանդողներից մինչև ուսանողներ պետք է հաղթահարեին մի շարք մարտահրավերներ՝ սկսած կրթության նկատմամբ ունեցած պատկերացումների փոփոխվելուց մինչև նոր մեթոդների մշակումը և դրանց՝ առցանց եղանակով կիրառումը, նաև հոգեբանական մեխանիզմների հաղթահարումը :

Ի՞նչ խնդիր է դրվում դասախոսի առաջ առցանց դասավանդման գործընթացի շրջանակներում՝

- նյութերի նախապատրաստում՝ առցանց հարթակում ներկայացման և պատշաճ կիրառման համար,
- ուսանողներին առցանց գնահատում,
- առցանց (օնլայն) հարթակի ճիշտ կիրառում,
- ուսանողների ներգրավվածության ապահովում:

Ինչ խնդիրներ կարող են ունենալ դասախոսները և ուսանողները՝

- ինտերնետ կապի խափանում,
- համակարգչային գրագիտության բացակայություն,
- սարքերի (համակարգիչ , հեռախոս) ահասանելիություն:

Ի՞նչ դժվարությունների կարող է հանդիպել դասավանդողը օտար լեզվի դասավանդման գործընթացում առցանց հարթակում՝

- դասագրքերի, լրացուցիչ նյութերի, հարցաշարերի և այլ կրթական նյութերի ու ռեսուրսների ուսանողներին տրամադրում,

- գրավոր աշխատանքների կազմակերպում և ստուգում, թեստերի անցկացում
- խմբային աշխատանքների կազմակերպում և անցկացում,
- դասընթացի անընդմեջ բարելավում՝ ապահովելով ուսանողների լեզվական հմտությունների համընդհանուր զարգացում:

Օտար լեզու դասավանդողներն առանցքային դեր ունեն՝ ուսանողներին խրախուսել, օգտվել տարբեր առցանց հարթակներից: Քանի որ օտար լեզու ուսուցանելը շարունակական գործընթաց է և պահանջում է շատ ժամանակ, կարևոր է, որ ուսանողները, առցանց տարբեր հարթակներից օգտվելով, զբաղվեն ինքնակրթությամբ, ինչպես նաև ուսուցանվող լեզվով հաղորդակցվեն: Կարելի է գտնել անվճար կրթական հավելվածներ կամ հարթակներ, որոնք միաժամանակ շահեկանորեն կկիրառվեն լսարանային աշխատանքներին զուգահեռ (**blended learning**): Մենք ուսումնասիրել ենք այդպիսի հարթակներից և հավելվածներից մի քանիսը՝ **Google Drive (Google Forms - Quizzes), Kahoot, Podcasts, Eslvideo, HelloTalk** և միասին առցանց ֆիլմեր և ֆիդեոներ դիտելու համար նախատեսված մի շարք հարթակներ, օրինակ՝ **gaze, mycirtletv, syncplay, twoseven** և այլն:

Առցանց ուսուցումը կազմակերպելու համար մեզ անհրաժեշտ են ուսումնառության կառավարման համակարգեր և հաղորդակցական գործիքներ:

Ռեսուրսառության կառավարման համակարգերն են՝

- Moodle,
- Google Classroom,
- SAP Litmos,
- Blackboard
- ATutor և այլն:

Հաղորդակցական գործիքներ են՝

- Zoom,
- Viber,
- Skype,
- Google Hangouts,
- Microsoft Teams և այլն:

Առհասարակ առցանց հաղորդակցական գործիքների ճիշտ ընտրությունը կարող է որոշիչ դեր ունենալ դասընթացի հաջողության համար: Օրինակ, ըստ Sue Frantz –ի (հոգեբան, Վաշինգտոնի Highline College-ի պրոֆեսոր) եթե դասավանդողն ունի ուսանողների մեծ թիվ և նախատեսել է փոքր խմբերով աշխատանքներ, խորհուրդ է տրվում

օգտագործել այնպիսի հարթակ, ինչպիսին zoom-ն է: (Abramson 2020:1):

Zoom-ը մեծ հնարավորություններ է տալիս կոնկրետ նյութին համապատասխան դասերի կազմակերպման համար: Ուսանողների հետ շփումները մեզ հանգեցրին այն կարծիքին, որ լսելու (listening) առաջադրանքները և համակարգչային ներկայացումները (presentations) ամենաարդյունավետն են zoom-ով աշխատելու ժամանակ: Մենք, սակայն, կարծում ենք, որ այս հարթակի լիարժեք օգտագործումը կարող է ներառել լայն հնարավորություններ տարբեր հմտությունների լիարժեք զարգացման համար:

Zoom-ն ունի մի շարք հետաքրքիր և կարևոր գործիքներ, որոնք օգտակար կլինեն օտար լեզվի ուսուցման ընթացքում, թվարկենք դրանցից մի քանիսը.

Background Image

Այս գործիքը հնարավորություն է տալիս օգտագործելու տարբեր վիրտուալ ֆոններ: Ուսանողները կարող են ընտրել իրենց նախընտրած ֆոնային պատկերը, ապա բացատրել, թե ինչու են ընտրել դա՝ օգտագործելով կոնկրետ բառապաշար:

Breakout rooms

Այս գործիքը թույլ է տալիս բացել բազմաթիվ «սենյակներ» և բաժանել ուսանողներին խմբերի՝ ժամանակահատված նշանակելով խմբային առաջադրանքը կատարելու և ներկայացնելու համար:

Chat

Նպատակահարմար է խրախուսել չատի օգտագործումը, որտեղ ուսանողները կարող են գրել դասի ընթացքում առաջացած հարցերը կամ կիսվել ֆայլերով: Մասնակիցները կարող են կիսվել նյութերով՝ համատեղ դիտման և քննարկման, ինչպես նաև ստուգման համար:

Annotating a screen

Այս գործիքը հնարավորություն է տալիս մատիտի կիրառումը, երբ էկրանի երկկողմանի համօգտագործման ընթացքում հնարավոր է մեկնաբանել ներկայացված պատկերը: Այսինքն՝ կարելի է նկարել, լուսաբանել, սրբագրել և այլն: Դա կարող են անել ինչպես դասավանդողը, այնպես էլ ուսանողները (եթե այդ գործառույթը թույլատրվում է դասախոսի կողմից):

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Հայաստանում արդեն կա առցանց ուսուցման որոշակի փորձառություն, բայց այն ունի զարգացման և շտկման կարիք թե՛ ուսանողների և թե՛ դասախոսների համար: Օտար լեզվի դասընթացը կազմակերպելիս հատկապես ուսանողներին պետք է խրախուսել օգտվել ստեղծագործական և նորարարական ձևերից՝

օգտագործելով օնլայն համակարգը: Եթե մենք կարողանանք լավագույնս օգտագործել տեխնոլոգիական համակարգերը լեզվի ուսուցման ընթացքում, այդ դեպքում միայն հնարավոր կլինի ընդլայնել ուսանողների գիտելիքները: Հաշվի առնելով մեր փորձը, ինչպես նաև ուսանողների կարծիքը՝ կարելի է ասել, որ առցանց ուսուցումը, հարկավ, չի կարող լիովին փոխարինել հանրակրթությանը, բայց կարող է այլընտրանքային լրացուցիչ լուծում լինել որոշ իրավիճակներում. այն ինքնազարգացման և հետազոտական աշխատանքներ կատարելու արդյունավետ միջոց է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Ashley Abramson , COVID-19 | SPECIAL REPORT Enhancing online learning 2020, 2 p.
2. Di Pietro, G., Biagi, F., Costa P., Karpiński Z., Mazza, J., The likely impact of COVID-19 on education: Reflections based on the existing literature and recent international datasets 2020,50 p.
3. Education during COVID-19 and beyond United Nations AUGUST 2020, 26 p.
4. Hope K., University of Denver, Distance Education and the Evolution of Online Learning in the United States 2015, 18 p.
5. Jared S., Charles R. Graham Essentials for Blended Learning , A Standards-Based Guide 2014 , 214 p.
6. Stefan H., KTH Royal Institute of Technology, Asynchronous and synchronous e-learning , article 2008,6 p.

СОНА АЙВАЗЯН - ОНЛАЙН ОБРАЗОВАНИЕ КАК НОВАЯ ВОЗМОЖНОСТЬ В ОБУЧЕНИИ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ

Ключевые слова: онлайн образование, обучение, приложения, средства коммуникации, технологии, курс иностранного языка

В статье говорится об онлайн-образовании в целом и онлайн-образовании во время COVID-19. Утверждается, что COVID-19 затронул образовательные системы во всем мире, а также в Армении. В статье затрагиваются трудности связанные с образовательной системы Армении во время пандемии, но основная цель статьи - изучить особенности онлайн-образования в преподавании и изучении иностранных языков. Представлены некоторые онлайн-образовательные программные приложения и платформы, которые могут сделать процесс изучения и

преподавания иностранного языка более интересным. Zoom представлен как мощная платформа с множеством инновационных функций, которая может помочь учителям / лекторам проводить увлекательные онлайн-уроки.

SONA AYVAZIAN - ONLINE EDUCATION AS A NEW OPPORTUNITY IN FOREIGN LANGUAGE TEACHING

Keywords: *online learning, teaching, applications, communication tools, technology, foreign language course*

The article discusses online education in general and online education during covid-19. It is said that covid-19 has affected educational systems worldwide, as well as in Armenia. The article examines the difficulties of Armenian educational system during the pandemic but the main goal of the article is to look into the peculiarities of online education during foreign language teaching and learning. Some online educational software applications and platforms that can make the foreign language learning and teaching process more interesting are presented. Zoom is presented as a powerful platform that has many innovative features and can help teachers and lecturers to deliver engaging online lessons.

Ներկայացվել է՝ 26.04.2021
Գրախոսվել է՝ 11.03.2021

**ԲՈՒՀԵՐԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

ԱՆԻ ՇԱՀԻՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ մարդկային ռեսուրսներ, բուհերի մարդկային ռեսուրսների կառավարում, գործունեության արդյունավետության ցուցանիշներ (ԳԱՑ-եր), հեղանցիկ և առաջանցիկ ցուցանիշներ, կատարողականի գնահատում, ռազմավարական կառավարում, տաղանդների կառավարում

Բարձրագույն կրթության կառավարման արդի հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված բազմակի փորձերը շարունակաբար շեշտադրում են բուհերի կառավարման և կրթական ծառայությունների որակի բարելավման հիմնախնդրի կարևորությունը: Այդ շեշտադրման հիմքում բուհերի գործունեության բնականոն ընթացքն ու զարգացման հեռանկարն ապահովող մարդկային ռեսուրսների (ՄՌ)՝ աշխատակազմի կատարողականն է, որը պետք է պարբերաբար գնահատել ու բարելավել:

Ներկայումս կառավարման ոլորտում լայնորեն կիրառվող՝ աշխատակազմի կատարողականի գնահատման գործիքներից կամ մեխանիզմներից են գործունեության առանցքային ցուցանիշները (ԳԱՑ-եր): Դրանք կիրառվում են տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ բուհերի կողմից՝ սեփական գործունեության առանցքային բնագավառներում, ներառյալ մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ոլորտում, իրականացված աշխատանքների արդյունքները չափելու և գնահատելու համար: Ցանկացած բուհում ՄՌԿ համակարգերի գործառնականությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով բուհի ղեկավար կազմը, ներառյալ ՄՌ կառավարիչները, պետք է մշակեն այնպիսի ԳԱՑ-եր, որոնք լիովին կհամապատասխանեն տվյալ բուհի գործունեության ոլորտային և ՄՌԿ մոդելի առանձնահատկություններին, ներառյալ ՄՌԿ ռազմավարությանն ու դրանից բխող բոլոր առանցքային բաղադրիչներին: Հաշվի առնելով նշվածը՝ **սույն հոդվածում քննարկվում են բուհերի ՄՌ ԳԱՑ-երի մի քանի հիմնատեսակներ, ինչպես նաև ներկայացված են ԳԱՑ-երի օրինակներ**, որոնք մշակվել են մասնագիտական գրականության վերլուծության և բուհերի ՄՌԿ համակարգերում կիրառվող գնահատման մեխանիզմների

ուսումնասիրության ընդհանուր արդյունքների հիման վրա: Ներկայացված ԳԱՑ-երը կիրառելի են կազմակերպարարական տարբեր ձևեր ունեցող բուհերի (ներառյալ՝ ՀՀ բուհերի) համատեքստում և կարող են գործառնվել որպես ուղենիշ՝ ՄՌԿ ոլորտում ԳԱՑ-երի (վերա)մշակման ու դրանց միջոցով ՄՌ կատարողականի գնահատման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ռազմավարական կառավարման ժամանակակից մոտեցումների համաձայն՝ ՄՌԿ-ն մի ամբողջ փիլիսոփայություն է, որի հիման վրա որոշվում է, թե մարդիկ կազմակերպությունում ինչպես պետք է աշխատեն ու կառավարվեն (Armstrong & Taylor 2014): ՄՌ-ն կազմակերպության կառավարման օբյեկտ հանդիսացող ամենաարժեքավոր ռեսուրսն է, որի զարգացման ուղղությամբ պետք է շարունակաբար ներդրումներ կատարել: Մասնավորապես բուհերի ՄՌ արժեքն արտացոլվում է պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի կողմից ուսումնառողներին ապագա մասնագետներ պատրաստելու և բուհի գիտահետազոտական ոլորտը զարգացնելու դերակատարությամբ (դասավանդման և գիտահետազոտական գործունեության ոլորտներ), իսկ ուսումնաօժանդակ (ՌԻՕ) վարչական կազմի պարագայում՝ կրթական, ՌԻՕ և հարակից այլ բոլոր գործընթացների կազմակերպմամբ ու կառավարմամբ: Այդ փոխկապակցված գործընթացների արդյունավետությունը պետք է չափման գործիքների կիրառմամբ պարբերաբար գնահատվի և շարունակաբար բարձրացվի: Սա ենթադրում է, որ բուհերն իրենց ՄՌԿ ոլորտի շրջանակում պետք է մշակեն ԳԱՑ-եր՝ աշխատակազմի կատարողականի ցանկալի ցուցանիշները սահմանելու, դրանց միջոցով աշխատակազմի գործունեությանն առնչվող առանցքային խնդիրները բացահայտելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ նախանշելու նպատակով:

Բուհերում ՄՌ ԳԱՑ-երի մշակման պատասխանատուները (ղեկավար կազմի ներկայացուցիչներ, ներառյալ ՄՌ կառավարիչներ, ստորաբաժանումների ղեկավարներ, աշխատանքային խմբեր և այլն) ՄՌ ԳԱՑ-երն անհատական, ստորաբաժանումային և ինստիտուցիոնալ մակարդակներում տեղորոշելիս կարող են դրանք դասակարգել ըստ **մակրո-** և **միկրո**տիրույթների: ՄՌԿ ոլորտի ժամանակակից մոտեցումները ենթադրում են և՛ մակրո-, և՛ միկրոմակարդակներում ՄՌ կատարողականի վերլուծություններ, դրանց արդյունքների հիման վրա պարբերաբար կատարվող գնահատումներ և, համապատասխանաբար, տվյալ կազմակերպության կառավարչական, սոցիալական, տնտեսական և մի շարք այլ ոլորտներում համակարգային շարունակական

փոփոխություններ (Gabčanová 2012): Բուիերում նույնպես աշխատակազմի կատարողականը կարելի է գնահատել մակրո- և միկրոմակարդակներում կատարվող ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: **Մակրոմակարդակում** կատարվող ուսումնասիրությունները ներառում են ՄՌԿ ոլորտում բուիի ունեցած փորձի վերլուծությունը ռազմավարական մակարդակում՝ աշխատակազմի կատարողականի ցուցանիշները դիտարկելով բուիի ընդհանուր ԳԱՑ-երի շրջանակում և գնահատելով ՄՌ-ԳԱՑ-երի հնարավոր երկարաժամկետ ազդեցությունը բուիի գործունեության զարգացման վրա: Մակրոմակարդակում ՄՌ-ի գործունեությանն առնչվող ԳԱՑ-երը կարող են վերաբերել, օրինակ, աշխատողների ընդհանուր համակազմին (ըստ գործունեության տեսակների), աշխատակազմի սեռային ու տարիքային բաշխվածությանը/հարաբերակցությանը, աշխատակազմի հոսունության ցուցանիշներին և այլն: **Միկրոմակարդակում** կատարվող ուսումնասիրությունները ներառում են անհատական կատարողականների կամ ստորաբաժանումների մակարդակներում կատարվող առանձին հետազոտություններ, որոնց շրջանակում վերլուծության են ենթարկվում անհատ աշխատողների/ ստորաբաժանումների կատարողականների արդյունքներն ու շարժընթացի ցուցանիշները, օրինակ՝ նրանց ներդրումների, բավարարվածության, նվիրվածության, վերաբերմունքի, վստահության և նման այլ ցուցանիշներ (Chao & Chuan 2007):

Անկախ նրանից, թե բուին իր աշխատողների կատարողականի գնահատման նպատակով ուսումնասիրություններն իրականացնում է մակրո-, թե միկրոմակարդակում, ԳԱՑ-երը պետք է դիտարկվեն որպես ռազմավարական կառավարման վրա ազդեցություն ունեցող գործիքակազմ, որոնց միջոցով իրականացվող գնահատումները նպատակաուղղված կլինեն բուիի ՄՌԿ համակարգի ու բուիի ընդհանուր գործունեության և ոչ թե զուտ անհատ աշխատողների կատարողականների բարելավմանը (Gabčanová 2012): Վերոնշյալ պնդման հիմքում ՄՌ ռազմավարական կառավարման մոտեցումներն են, որոնցով բուին իր ՄՌԿ համակարգը փոխկապակցում է ընդհանուր գործունեության հետ և ՄՌ կատարողականի բարելավումն ուղղում է բուիի ռազմավարական առաջնահերթություններով սահմանված ոլորտների երկարաժամկետ զարգացմանը:

Հատկանշական է այն, որ դեռևս 1990-ականներից սկսած՝ ըստ որոշ տեսաբանների (Wright & McMahan 1992)՝ կազմակերպություններում աշխատող որոշ անհատների կատարողականը կարող է ամբողջ

կազմակերպության մրցակցային կայուն առավելության աղբյուր հանդիսանալ, եթե ապահովված են հետևյալ հիմնական պայմանները՝

- այդ աշխատողները ստեղծում են կազմակերպության համար հավելյալ արժեք,
- տվյալ կազմակերպության աշխատողների կարողությունները հնարավոր չէ կամ դյուրին չէ կրկնօրինակել,
- տվյալ կազմակերպության ՄՌ-ն չի կարող փոխարինվել տեղեկատվական տեխնոլոգիաներով կամ այլ միջոցներով, եթե նրանք տվյալ կազմակերպության համար մրցունակության ապահովման աղբյուր են հանդիսանում:

Այն բուհերը, որոնք իրատեսորեն հաշվի են առնում նշված հիմնապայմանները, և ՄՌ-Կ քաղաքականության առանցքում այդպիսի աշխատողների պահպանումն ու խրախուսումն է, ապա այդ բուհերն իրականացնում են տաղանդների¹ կառավարման քաղաքականություն: Ոլորտային հետազոտությունների համաձայն՝ տաղանդների կառավարման համակարգերի արդյունավետությունը կարելի է չափել հետևյալ հիմնական ԳԱՑ-երով (Sparrow *et al.* 2004)՝

- **ստեղծված հավելյալ արժեք՝ ըստ տաղանդների.** այս ԳԱՑ-ը վերաբերում է կազմակերպության տաղանդների կարողությունների արդյունավետ կիրառման միջոցով ներդրումների վերադարձելիության, կազմակերպության գործունեության առաջնահերթ ոլորտների զարգացմանն ուղղված ֆինանսական ներհոսքի մեծացման և առհասարակ կազմակերպության ֆինանսական հավելյալ միջոցներին առնչվող ցուցանիշներին, որոնք ապահովվում են տաղանդների գործունեության շնորհիվ.
- **տաղանդների թվային ցուցանիշներ.** այս ցուցանիշներով կազմակերպությունը որոշում է, թե աշխատակազմի ընդհանուր թվի քանի տոկոսն են կազմում տաղանդները (օրինակ՝ բուհի աշխատակազմի առնվազն 5%-ը տաղանդներ են).
- **տաղանդների վերապատրաստման ցուցանիշներ.** այս ԳԱՑ-երով կարելի է չափել, թե որոշակի ժամանակահատվածում (օրինակ՝

¹ ՄՌ-Կ ոլորտում *տաղանդը* կարելի է բնորոշել որպես անհատական հատուկ և զարգացվածության բարձր մակարդակ ունեցող կարողություններով աշխատող, ում կարողություններն օգտագործվում և ներդրվում են ի նպաստ կազմակերպության արդյունավետության ու մրցունակության բարձրացման: Այսինքն՝ տաղանդներն ունեն մտավոր մեծ ներուժ, ցուցաբերում են կատարողականության բարձր մակարդակ և նպաստում են կազմակերպության մրցակցային առավելության ձեռքբերմանը (Խաչատրյան և Մելքոնյան 2016):

յուրաքանչյուր տարի) կազմակերպությունը որքան ռեսուրսներ ու ժամաքանակ է հատկացնում տաղանդների վերապատրաստումներին՝ բուհի տաղանդների արտահոսքը կանխելու և բուհի գործունեության առանցքային ոլորտների զարգացման ուղղությամբ նրանց կարողությունները նպատակային ու առավելագույնս արդյունավետ կերպով ներդնելու նպատակով:

Բուհերի համատեքստում տաղանդներ կարող են լինել ինչպես ՊԴ, այնպես էլ վարչական և ՈՒՕ կազմի ներկայացուցիչներ, գիտահետազոտողներ և առհասարակ այն աշխատողները, որոնք իրենց անհատական ներդրման, մտավոր մեծ ներուժի և բարձր կատարողականի շնորհիվ էապես խթանում են բուհի գործունեության որևէ ոլորտի զարգացումը: Տաղանդների գործունեության ԳԱՑ-երի օրինակներ կարող են լինել նորարարությունների ներմուծումը, համագործակցային կապերի ընդլայնումը, բուհի մրցունակության ու գրավչության բարձրացումը, նյութական/ոչ նյութական արժեքավոր ռեսուրսների ձեռքբերումը: Ըստ Մորթոնի (Morton 2004)՝ տաղանդներն իրենց ներունակության, բացառիկ կարողությունների ու հնարավորությունների միջոցով ազդում են տվյալ կազմակերպության կատարողականի ինչպես ընթացիկ, այնպես էլ կանխատեսվող ցուցանիշների վրա: Այսուհանդերձ, միայն տաղանդների կատարողականի արդյունավետությունը չափող ԳԱՑ-երը չեն կարող լիարժեք ու համապարփակ պատկերացում տալ բուհի աշխատակազմի ընդհանուր գործունեության արդյունավետության ու դրա հնարավոր շարժընթացի վերաբերյալ: Հետևապես ցանկալի է, որ բուհը ԳԱՑ-երի միջոցով ՄՌ կատարողականի գնահատումը կատարի և՛ անհատական, և՛ կազմակերպական մակարդակներում:

Բուհերի ՄՌ կատարողականի չափման նպատակով կիրառվող ԳԱՑ-երը տարբեր են՝ պայմանավորված այդ բուհերի կազմակերպաիրավական ձևով, գործունեության ոլորտային առանձնահատկություններով, ռազմավարություններով: Օրինակ՝ հետազոտական բուհերը ԳԱՑ-երը սահմանելիս ավելի շատ կենտրոնանում են ՄՌ գործունեության գիտահետազոտական, քան կրթական գործունեության արդյունքների վրա: Հետևապես, այդ բուհերի ԳԱՑ-երի շարքում առանցքային նշանակություն ունեն նոր գիտահետազոտական արդյունքների, դրանց ապրանքայնացման ու պատենտների, միջազգային գիտահետազոտական ծրագրերի միջոցով ֆինանսական ներհոսքի ավելացման ցուցանիշները, գիտական կոչում և աստիճան ստացած աշխատողների թիվը և այլն (Wang 2010):

ՄՌ կատարողականի գնահատման օբյեկտիվությունն ու արդյունավետությունն ապահովելու համար բուհերը կարող են դիտարկել տնտեսագիտության և բիզնեսի կառավարման ոլորտներում ընդունված ԳԱՑ-երի հետևյալ երկու տեսակները՝ **հետանցիկ (lagging)** և **առաջանցիկ (leading)** ցուցանիշներ, որոնք կարող են կիրառելի լինել նաև բուհերի գործունեության համատեքստում: **Հետանցիկ** ԳԱՑ-երը վերաբերում են որոշակի ժամանակահատվածում բուհի գործունեության փաստացի ելքերին: Այս ցուցանիշները հիմնված են բուհի փորձառության, իրականացված գործողությունների և գործընթացների արդյունքների վրա: **Առաջանցիկ** ԳԱՑ-երը ցուցանում են ապագայում ակնկալվող ու ցանկալի ցուցանիշները, և դրանք ուղղակիորեն կապակցված են բուհի հեռահար նպատակների և զարգացման հեռանկարի հետ: Այսինքն՝ այդ ԳԱՑ-երը չափումներ են, որոնք սահմանում են բուհի հնարավոր զարգացման շեմը, աշխատակազմից ու այլ շահակիցներից ակնկալվող վերջնարդյունքները և մղիչ ուժ են հանդիսանում բուհի համար (Gabčanová 2012): Առաջանցիկ ԳԱՑ-երի միջոցով բուհը կարող է կանխորոշել ապագայում իր հնարավոր տեղն ու դիրքը մրցակցային շուկայում: Ի տարբերություն հետանցիկ ԳԱՑ-երի՝ առաջանցիկ ԳԱՑ-երն ավելի դժվար է սահմանել, քանի որ դրանք կանխատեսվող արդյունքներ են, և հնարավոր չէ դրանց լիարժեք ապահովումը երաշխավորել: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հետանցիկ ԳԱՑ-երով բուհը չափում է նախկինում իրականացրած գործունեության արդյունքները, իսկ դրա բարելավման ուղղությամբ կատարվելիք ներդրումների նպատակայնությունն ու արդյունավետությունն ապահովելու համար սահմանում է առաջանցիկ ԳԱՑ-եր: Հաշվի առնելով հետանցիկ և առաջանցիկ ԳԱՑ-երի բնույթն ու առանձնահատկությունները՝ ստորև ներկայացվում են բուհերի ՄՌ առաջանցիկ և հետանցիկ ԳԱՑ-երի օրինակներ (Աղյուսակ 1)։

Աղյուսակ 1. Բուհերի մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության հետանցիկ և առաջանցիկ ցուցանիշներ²

ՀԵՏԱՆՑԻԿ ԳԱՑ-ԵՐ	ԱՌԱՋԱՆՑԻԿ ԳԱՑ-ԵՐ
• աշխատակազմի բաշխվածությունը՝	• աշխատակազմի որակավորումների

² Աղյուսակում ներկայացված որոշ ԳԱՑ-եր փոխառված են Փ. Բալլարդի (Արևմտյան Միչիգանի համալսարան) կողմից իրականացված հետազոտության շրջանակներում սահմանված ցուցանիշներից (Ballard 2013):

<p>ըստ սեռի (արական և իգական սեռերի աշխատողների հարաբերակցություն) և տարիքային խմբերի</p> <ul style="list-style-type: none"> • աշխատակազմի բաշխվածությունը՝ ըստ դրույքաչափի (լրիվ և կես դրույքով, համատեղությամբ/ պայմանագրային հիմունքով աշխատողների հարաբերակցություն) • ՄՌ համալրման ցուցանիշներ (ներքին և արտաքին համալրումների հարաբերակցություն, գերհամալրման և թերհամալրման ցուցանիշներ և դրանցով պայմանավորված փաստացի ծախսեր, յուրաքանչյուր համալրման համար կատարված ծախսեր) • աշխատողների հոսունության և պահպանման ցուցանիշներ (ընդունված և ազատված աշխատողների հարաբերակցություն, ներքին պաշտոնեական առաջխաղացում ունեցած աշխատողների թիվ) • աշխատողների բացակայությունների (աբսենտիզմի) ցուցանիշներ (աշխատողների բացակա և ներկա աշխատանքային օրերի հարաբերակցություն, բացակայություններով պայմանավորված ծախսերի ցուցանիշներ) • աշխատողների հիվանդացության ցուցանիշներ • ՄՌ-ին հատկացված ֆինանսական ցուցանիշներ (առավելագույն և նվազագույն աշխատավարձերի հարաբերակցություն, ֆինանսական խրախուսման/պարգևատրման ցուցանիշներ, կրթաթոշակներ 	<p>բարձրացման և կատարողականի բարելավման ցուցանիշներ (նախատեսվող վերապատրաստումների և գործուղումների թիվ, ՄՌ մասնագիտական զարգացման այլ միջոցառումների իրականացման համար նախատեսված ֆինանսական/ոչ ֆինանսական ռեսուրսներ, ներդրումների և ակնկալվող ելքերի ակնկալվող հարաբերակցություն)</p> <ul style="list-style-type: none"> • բուհի առանցքային շահակիցների բավարարվածության մակարդակի բարձրացման ցուցանիշներ (ռեսուրսների համալրման, աշխատակազմի կողմից իրականացվող գիտակրթական և այլ ծառայությունների բարելավման ցուցանիշներ) • աշխատակազմի վարձրատրության ծախսերի մեծացման և խրախուսման համակարգի արդյունավետության բարձրացման ցուցանիշներ • ներքին համատեղումների միջոցով ծախսերի կրճատման ցուցանիշներ • ՄՌ-ի համակարգի արդյունավետության բարձրացման ցուցանիշներ (ՄՌ-ի բաժնում նոր հաստիքների ստեղծման, ՄՌ մասնագետների վերապատրաստումների, ՄՌ-ի էլեկտրոնային համակարգի բարելավման ու ՄՌ-ի համակարգում նորագույն տեխնոլոգիաների ինտեգրման, կատարողականի գնահատման նոր մեխանիզմների ներդրման համար նախատեսվող ֆինանսական/ոչ ֆինանսական ցուցանիշներ) • միջազգային համագործակցության ընդլայնման ցուցանիշներ
--	--

<p>ստացած աշխատողների թիվ)</p> <ul style="list-style-type: none"> • աշխատակազմի կատարողականի արդյունավետության/ֆունկցիոնալ ցուցանիշներ (ներդրված ռեսուրսների և ելքերի հարաբերակցություն, դասավանդման, ուսումնաօժանդակ և կառավարչական գործընթացներից ուսանողների և այլ շահակիցների բավարարվածության ցուցանիշներ) • ԱՌ կատարողականի գնահատման մեթոդների/մեխանիզմների արդյունավետության ցուցանիշներ • տաղանդների թվային/տոկոսային ցուցանիշներ • ներդրումների վերադարձելիության ցուցանիշներ (ներառյալ տաղանդների միջոցով) • աշխատակազմի մոտիվացիայի/կազմակերպությունից բավարարվածության ցուցանիշներ • ԱՌ գիտահետազոտական գործունեությանն առնչվող ցուցանիշներ (գիտական աստիճան/կոչում ունեցող աշխատողների, գիտական հրապարակումների, ֆինանսավորված գիտահետազոտական ծրագրերի, ազդեցության բարձր գործակից ունեցող ամսագրերում տպագրված գիտահետազոտական աշխատանքների թիվ) 	<ul style="list-style-type: none"> • տաղանդների պահպանման և համալրման ցուցանիշներ (հրավիրված մասնագետների, փորձագետների թվային ցուցանիշներ, տաղանդների միջոցով հավելյալ արժեքի կամ ներդրումների ակնկալվող վերադարձելիության ցուցանիշներ) • նոր գիտահետազոտական արդյունքների ստեղծման կամ նոր ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական և ոչ ֆինանսական միջոցների ձեռքբերման ծախսեր • բուհի գրավչության ու մրցունակության բարձրացման ցուցանիշներ, շուկայի նոր հատույթներ գրավելու և դրանց շրջանակում մրցակցային առավելության ձեռքբերման ցուցանիշներ (նոր կրթական ծրագրերի, ֆորմալ և ոչ ֆորմալ լրացուցիչ դասընթացների թիվ)
--	---

Հետանցիկ ԳԱՑ-երը համարժեք են **վերջնարդյունքահենք** ցուցանիշներին, քանի որ դրանք չափում են անցյալում կազմակերպության կողմից իրականացված գործունեության ելքերը և հիմնվում են վերջնարդյունքների վրա: Իսկ առաջանցիկ ԳԱՑ-երը կարող են դիտարկվել որպես **խթանիչ** ցուցանիշներ, որոնք՝ որպես դրդող ուժ, կազմակերպությանը նպատակաուղղում են դեպի զարգացման տեսլական: Դրանք այն ֆինանսական ու ոչ ֆինանսական արժեքներն

են, որոնք կազմակերպությունը ապագայում ցանկանում է ձեռքբերել (Eckerson 2009): Առաջանցիկ կամ խթանիչ ցուցանիշների միջոցով բուռն իր միջնաժամկետ գործողությունների պլանը կարող է վերածել երկարաժամկետ զարգացման պլանի՝ կիրառելով կառավարման պրոակտիվ մոտեցում, այսինքն՝ կանխատեսել ռիսկերն ու հնարավորությունները, կրթության և տնտեսական շուկաների փոփոխություններն ու հնարավոր շեղումները: ԳԱՑ-երի նշված երկու տեսակները միմյանց փոխակապացված են, քանի որ հետանցիկ կամ վերջնարդյունքահենք ԳԱՑ-երի հիման վրա են մշակվում և սահմանվում առաջանցիկ կամ խթանիչ ԳԱՑ-երը:

ՄԲ կատարողականը գնահատելիս բուռնորեն կարող են ԳԱՑ-երը սահմանել նաև ըստ հետևյալ երկու հիմնական տեսակի՝ **քանակական** և **որակական**՝ հիմնվելով իրենց կազմակերպարական ձևի, գործունեության ոլորտի առանձնահատկությունների, ռազմավարությունների և զարգացման հեռանկարների վրա: **Քանանական** ԳԱՑ-երի դեպքում չափումները՝ որպես կանոն, արտահայտված են լինում թվային կամ տոկոսային ցուցանիշներով, որոնք հստակ չափելի են դարձնում թիրախավորված ոլորտներում արձանագրված արդյունքները: ՄԲ-ի կատարողականի քանակական ԳԱՑ-երի օրինակներ կարող են լինել աշխատակազմի հոսունության և պահպանման ցուցանիշները, աշխատողների բացակայությունների թիվը, աշխատողների վարձատրության թվային ցուցանիշները և այլն (Chao & Chuan 2007): **Որակական** ԳԱՑ-երը, ի տարբերություն քանակական ցուցանիշների, առավել դժվար է գնահատել, քանի որ դրանք կարող են հստակ շոշափելի չլինել (Varouchas *et al.* 2018): Որակական (հիմնականում՝ ոչ ֆինանսական) ցուցանիշների միջոցով բուռն գնահատում է, օրինակ, իր առանցքային շահակիցների (աշխատակազմ, ուսանողներ, գործատուներ, շրջանավարտներ) կարիքների բավարարվածության աստիճանը և անգամ դրանք գերազանցելու իր հնարավորությունները, ՄԲ կատարողականի արդյունավետությունը, աշխատողների վարքագծային դրսևորումների փոփոխությունները, նրանց նվիրվածության ու մոտիվացիայի աստիճանը և այլն: Որակական ԳԱՑ-երն արտացոլում են հատկապես բուռն վերաբերյալ աշխատակազմի համընդհանուր ընկալումն ու վերաբերմունքը, բավարարվածության ու վստահության աստիճանը:

Որակական ԳԱՑ-երի միջոցով բուռն դեկավար կազմի և առհասարակ աշխատակազմի համար առավել տեսանելի է դառնում, թե աշխատողների մասնագիտական զարգացման ինչպիսի հնարավորություններ են առկա, աշխատակազմի գործընկերային

փոխհարաբերություններն ու հաղորդակցումը, խրախուսման մեխանիզմները որքանով են արդյունավետ, որքանով են հավասար աշխատանքային պայմաններ ապահովված աշխատակազմի բոլոր անդամների համար, բուիը կիրառում է արդյոք փոփոխությունների կառավարման հստակ քաղաքականություն և այլն (Carter & Robinson 2000): Նշվածները կարելի է որակել որպես առանցքային գործոններ, որոնք թեև ոչ միշտ են կարճաժամկետ կամ միջնաժամկետ հատվածում չափելի ու շոշափելի, սակայն զգալի կերպով ազդում են բուիի ընթացիկ գործունեության, դրա կենսունակության, արդյունավետության և մրցունակության վրա:

Մասնագիտական գրականությունում քանակական ԳԱՑ-երը բնորոշվում են նաև որպես «կոշտ», իսկ որակական ԳԱՑ-երը՝ որպես «փափուկ» ցուցանիշներ: Ինչպես կարելի է ենթադրել վերոգրյալից, «կոշտ» կամ քանակական ԳԱՑ-երը համեմատաբար ավելի դյուրին է հաշվարկել, քանի որ դրանք սովորաբար բուիին հասանելի տվյալների ու տեղեկության ուսումնասիրության արդյունքներն են՝ թվային, տոկոսային կամ հարաբերակցային արտահայտմամբ: «Փափուկ» ցուցանիշների դեպքում շեշտադրումը որակական ցուցանիշների գնահատման վրա է (օրինակ՝ շահակիցների/հաճախորդների վերաբերմունքը, ընկալումները, կարծիքները) (Carter & Robinson 2000): Դրանց միջոցով գնահատվում են որակական փոփոխությունների արդյունքները, օրինակ՝ նորամուծությունների ազդեցությունն աշխատակազմի կատարողականի և կազմակերպության ընդհանուր գործունեության արդյունավետության վրա, արտադրանքի կամ ծառայության որակական փոփոխությունները: Թե՛ «փափուկ» և թե՛ «կոշտ» ԳԱՑ-երի մշակման կամ սահմանման գործընթացները կարող են ժամանակատար ու ծախսատար լինել, սակայն դրանց համակցմամբ կազմակերպությունը կկարողանա օբյեկտիվ, հավաստի տվյալների վրա հիմնված պատկերացում կազմել իր ՄՌ կատարողականի փաստացի գործունեության, դրա արդյունավետության հնարավոր շարժընթացի, բարելավման ենթակա ոլորտների և զարգացման հեռանկարների շուրջ:

Այսպիսով, ԳԱՑ-երն օժանդակում են ցանկացած կազմակերպության, ներառյալ բուիի ղեկավար կազմին և աշխատակազմի մյուս բոլոր անդամներին իրենց գործունեությունը կենտրոնացնել առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վրա, չափելի դարձնել գործունեության առանցքային վերջնարդյունքները: ՄՌ ԳԱՑ-երը սահմանելիս հարկավոր է ընտրել դրանց այն տեսակները, որոնք առավելագույնս կհամապատասխանեն տվյալ բուիի գործունեության առանձնահատկություններին և մասնավորապես ՄՌ-Կ մոդելին,

կոյուրացնեն ու կբարելավեն աշխատակազմի կատարողականի գնահատման գործընթացները, ինչպես նաև միտված կլինեն բուհի երկարաժամկետ զարգացմանը: Ապահովելով ԳԱՑ-երի իրատեսական ու չափելի բնույթը՝ բուհերը կհավաստիանան, որ այդ ցուցանիշները միտված են մի կողմից սահմանված առաքելության արդյունավետ իրականացմանը, մյուս կողմից՝ իրենց մարդկային ռեսուրսների, ներառյալ տաղանդների մասնագիտական կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Խաչատրյան Ռ. և Մելքոնյան Հ., *Տաղանդների կառավարումը որպես ՀՀ բուհերի մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարման գործառույթ*: Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 2(37), Մանկավարժություն և հասարակական գիտություններ, Երևան, Լինգվա, 2016, 338-365 էջեր:
Khachatryan R. & Melqonyan H., Taghandneri kar'avarowmy' vorpes HH bowheri mardkayin r'esowsneri r'azmavarakan kar'avarman gorc'ar'owyt': Banber Erevani V. Bryowsovi anvan petakan lezvahasarakagitakan hamalsarani 2(37), Mankavarjhowt'yown yev hasarakakan gitowt'yownner, Erevan, Lingva, 2016, 338-365 e'jer:
2. Armstrong M. and Taylor S., 2014. *Armstrong's Handbook of Human Resource Management Practice*. Ashford Colour press Ltd, 13th ed., UK.
3. Ballard. P. J., 2013 (dissertation). *Measuring Performance Excellence: Key Performance Indicators for Institutions Accepted into the Academic Quality Improvement Program (AQIP)*. Western Michigan University, ScholarWorks.
4. Carter A. & Robinson D. 2000. *Employee Returns: Linking HR Performance Indicators to Business Strategy*. IES Report 365. The Institute for Employment Studies, UK.
5. Chao M. & Chuan Ch. M. 2007. *Developing Key Performance Indicators and Productivity/Performance Benchmarks for Performance-Based Remuneration Systems in Chinese Taipei*. APEC Secretariat, National Productivity Corporation.
6. Eckerson W. 2009. *Performance Management Strategies. How to Create and Deploy Effective Metrics*. TDWI Best Practices Report. The Data Warehousing Institute.

7. Gabčanová I. 2012. *Human Resources Key Performance Indicators. Journal of Competitiveness*, 4 (1), Tomas Bata University in Zlín, Faculty of Management and Economics, Vol. 4, Issue 1, pp. 117-128.
8. Morton L. 2004. *Talent Management – A Critical Way to Integrate and Embed Diversity*. Link&Learn, pp. 1-6.
9. Sparrow P., Brewster Ch., & Harris H. 2004. *Globalizing Human Resource Management*. Routledge, Taylor & Francis Group, London & NY.
10. Varouchas E., Sicilia M., & Sánchez-Alonso S. 2018. *Academics' Perceptions on Quality in Higher Education Shaping Key Performance Indicators*. MDPY, Sustainability (10) online journal (<https://www.mdpi.com/2071-1050/10/12/4752>).
11. Wang X. 2010. *Performance Measurement in Universities. Managerial Perspective*. Center for Higher Education Policy Studies. University of Twente, Enschede, the Netherlands.
12. Wright P. & McMahan G. 1992. Theoretical Perspectives for Strategic Human Resource Management. *Journal of Management*, 18(2), pp. 295–320.

АНИ ШАГИНЯН - ВИДЫ КЛЮЧЕВЫХ ПОКАЗАТЕЛЕЙ ЭФФЕКТИВНОСТИ ЧЕЛОВЕЧЕСКИХ РЕСУРСОВ ВЫСШИХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ

Ключевые слова: человеческие ресурсы, управление человеческими ресурсами высших учебных заведений, ключевые показатели эффективности, запаздывающие и опережающие индикаторы, оценка деятельности персонала, стратегическое управление, управление талантами.

В данной статье рассматриваются основные типы ключевых показателей эффективности (КПЭ) человеческих ресурсов (ЧР) вузов. КПЭ, определенные для оценки эффективности управления кадрами вузов, могут помочь вузам выявлять и указывать на текущие и потенциальные проблемы, связанные с их кадровой деятельностью, и соответственно предоставлять им своевременные и целенаправленные решения. При выборе конкретных типов КПЭ, вузы должны учитывать особенности своей деятельности, а также свои стратегии.

Основываясь на результатах обзора литературы и исследования различных инструментов измерения эффективности, в статье представлены конкретные типы и соответствующие примеры КПЭ ЧР,

которые могут помочь вузам (включая вузы Республики Армения) разрабатывать и улучшать процессы оценки работы персонала.

ANI SHAHINYAN - TYPES OF KEY PERFORMANCE INDICATORS OF HUMAN RESOURCES OF HIGHER EDUCATION INSTITUTIONS

Keywords: *human resources, human resource management of higher education institutions, Key Performance Indicators (KPIs), lagging and leading indicators, performance evaluation, strategic management, talent management*

The current article discusses the main types of key performance indicators (KPIs) of human resources (HR) of higher education institutions (HEIs). KPIs defined for the evaluation of HEIs' HR performance can help HEIs to identify and indicate the current and potential problems relating their HR activities and to provide timely and targeted solutions to them. The selection of specific types of KPIs should derive from the peculiarities and strategies of HEIs.

Based on the results of literature review and research of different performance measurement tools, specific types and respective examples of HR KPIs have also been provided in the article, which can guide HEIs (including HEIs of the Republic of Armenia) to (re)elaborate and improve their HR performance evaluation processes.

Ներկայացվել է՝ 24.09.2021
Գրախոսվել է՝ 29.09.2021

**ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

**ԼԻԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ,
ԳՐԻՇԱ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ**

Հիմնաբառեր՝ հեռահաղորդակցության ոլորտ, համացանց, տեղեկատվական տեխնոլոգիաներ, բաժանորդ, օպերատոր, կապի ծառայություններ, սմարթֆոն, վիրտուալ իրականություն

Հեռահաղորդակցության ոլորտն այսօր հանդիսանում է տնտեսության մյուս ճյուղերի զարգացման հիմնաքարը: Անհնար է պատկերացնել ժամանակակից աշխարհին առանց այս ոլորտի: Հեռահաղորդակցությունը հնարավորություն է տալիս կրճատել ժամանակի ավելորդ ծախսը և վերացնում է հեռավորությունը աշխարհի տարբեր երկրներում գտնվող տնտեսվարող սուբյեկտների միջև: Հեռահաղորդակցության ոլորտը կարևոր նշանակություն ունի ցանկացած երկրի համար, և Հայաստանը բացառություն չէ: Մեր հանրապետությունում հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունները փորձում են դիմակայել ներքին ուժեղ մրցակցությանը՝ միաժամանակ ուղիներ փնտրելով դուրս գալու արտաքին շուկա, կապեր հաստատելով այլ երկրների հեռահաղորդակցային ընկերությունների հետ: Կարևոր նշանակություն ունի նաև հեռահաղորդակցության համաաշխարհային շուկայի գլխավոր միտումներին հետևելը, որպեսզի երկիրը հետ չմնա գլոբալ զարգացումներից և լիարժեք օգտագործի իր ներուժը հեռահաղորդակցության ոլորտում: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել հեռահաղորդակցության համաաշխարհային շուկայի զարգացման դինամիկան, հիմնական մարտահրավերները և հեռանկարները:

Հեռահաղորդակցության ոլորտը ընթանում է փոխակերպման փուլով՝ նոր տեխնոլոգիաներին և ամպային միտումներին հարմարվելու համար:

Սկզբնական շրջանում ուշադրության կենտրոնում էր հաղորդակցության տեխնոլոգիան (Communication Technology. CT), որը

համարվում էր տեղեկատվական դարաշրջանի առաջին շրջանը: Երկրորդ փուլն ինտերնետ շրջանն էր, որը սկսեց մոտավորապես 2000 թվականից: Դա էլեկտրոնային առևտրի և պորտալների ժամանակն էր: 2006 թվականից հետո սկսեց ձևավորել ամպը (the Cloud), և դա համարվեց հեռահաղորդակցության ոլորտում փոխակերպման երրորդ փուլը: 2019 թվականից գտնվում ենք ամպի դարաշրջանի մեջ, որտեղ կրիչների նոր հնարավորություններ են բացվել:

Հնարավորություններից բացի, աշխարհի հեռահաղորդակցության ընկերություններն այս դարաշրջանում բազմաթիվ մարտահրավերների առջև են կանգնած: Նոր տեխնոլոգիաները, ինչպիսիք են իրերի համացանցը (Internet of Things, IoT), ընդլայնված իրականությունը (Augmented reality, AR), վիրտուալ իրականությունը (Virtual reality, VR), միկրոձառայությունները և այլն, անհրաժեշտ են, որպեսզի հեռահաղորդակցության կազմակերպությունները փոփոխեն իրենց բիզնեսի ռազմավարությունները և հարմարվեն ամպային դարաշրջանին: Ավելին, մրցակցային առավելություն ձեռք բերելու համար նրանք պետք է ուշադրություն դարձնեն իրենց հաճախորդներին հարմարեցված լուծումներ տրամադրելու վրա և կենտրոնան նրանց հետ երկարաժամկետ հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ:

Ներկայումս հեռահաղորդակցության ոլորտի հիմնական մարտահրավերներն են (Munesh Jadoun 2020).

1. Նոր տեխնոլոգիաների առկայության դեպքում հեռահաղորդակցային ընկերությունների և ինտերնետ ծառայություններ մատուցողների (Internet service providers, ISP) ծառայությունների բազմազանությունն ու որակն աճում են, շահույթը նվազում է: Այսպիսով, հեռահաղորդակցային ընկերությունները պետք է նորովի ուսումնասիրեն S<S նորարարության մակարդակը և հարմարեցնեն իրենց կազմակերպությունը թվային փոխակերպմանը՝ ստեղծելով խաչաձև ֆունկցիոնալ ինտերֆեյսներ և փնտրելով կազմակերպչական ճկունության պահպանման գործիքներ:

2. Միլիոնավոր բաժանորդների, մի շարք նոր ապրանքատեսակների, միավորված և հարմարեցված լուծումների, օպերացիոն օժանդակ ծառայությունների կոնֆիգուրացիան, պատվիրատուի ու հաճախորդների սպասարկումը և հաշվարկների իրականացումը դառնում են ավելի բարդ: Այսպիսով, այդ գործողությունները վարելու ծախսերը պահանջում են ռեսուրսներ և տարբեր գործիքներ՝ դրանով իսկ բարձրացնելով ֆինանսական արտահոսքերը:

3. Հեռահաղորդակցման կազմակերպությունները պետք է արդիականացնեն իրենց SS և կապի ենթակառուցվածքը և ապահովեն տվյալների ու ձայնային ծառայությունների մատուցման բարձր որակ, հուսալիություն և մատչելիություն: Ցանցերի անվտանգությունը դարձել է հեռահաղորդակցային ընկերությունների համար առաջնահերթություն, քանի որ նոր տեխնոլոգիաները ստեղծում են նորանոր սպառնալիքներ: Այսպիսով, անհրաժեշտ է մի շարք գործառնական և տեխնիկական նորարարություններ՝ ցանցի ամբողջական համակարգային անվտանգության ապահովման համար:

4. Հեռահաղորդակցային ընկերությունների և ISP-ների համար համար մեկ այլ մարտահրավեր է իրերի համացանցի ազդեցությունը, որը հանգեցնում է կապակցված սարքերի պայթուցիկ աճի:

Հեռահաղորդակցության ոլորտը շարունակում է արագորեն աճել ամբողջ աշխարհում: Սմարթֆոնների ներթափանցման և դրանց շահագործման շնորհիվ առաջատար հեռահաղորդակցային ընկերությունների կողմից ձայնային և տեղեկատվական ծառայություններ մատուցելու հնարավորությունները հասել են գագաթնակետին: Հեռահաղորդակցային ընկերությունները ամեն ինչ անում են, որպեսզի ապահովեն լավ ցանց, բարձր արագությամբ ինտերնետ, զանգերի ցածր սակագներ և այլն՝ հաճախորդներին հրապուրելու համար:

Հեռահաղորդակցության համաշխարհային շուկայի գլխավոր միտումներից է հանդիսանում սուր և ճնշող մրցակցությունը: Ինտերնետի միջոցով ուղղակիորեն սպառողներին հավելվածներ առաջարկող Over-the-top (OTT) խաղացողները պահպանել են իրենց գերիշխանությունը, նույնիսկ հիմնական հաղորդակցման ծառայություններում, ինչպիսիք են հաղորդագրությունները և ձայնը (Telecoms in 2018): WhatsApp-ը, Viber-ը և Apple-ի iMessage-ը արդեն ներկայացնում են բոլոր հաղորդագրությունների տրաֆիկի ավելի քան 80 տոկոսը, իսկ Skype-ը միայնակ է հաշվառում բոլոր միջազգային ձայնային սակագնային ընկերությունների մեկ երրորդից ավելին: Արդյունքում, շատ հեռահաղորդակցության ընկերությունների հիմնական հաղորդակցման ծառայության գծով եկամուտները զգալիորեն նվազել են՝ արձանագրելով SMS հաղորդագրությունների մեջ 30%, միջազգային ձայնային հաղորդակցման մեջ 20% և ռումինգում 15% անկում:

104 երկրներում երիտասարդների ավելի քան 80%-ը օգտագործում է համացանցը: Աշխարհի բնակչության համացանցից օգտվող 15-24 տարիքի երիտասարդների տեսակարար կշիռը (70.6%) զգալի գերազանցում է ամբողջ բնակչության մեջ համացանցից օգտվողների տեսակարար կշիռը (48%): Զարգացած երկրներում 15-24 տարեկան

երիտասարդների 94%-ը օգտվում է համացանցից, զարգացող երկրներում՝ 67%, իսկ թույլ զարգացած երկրներում՝ ընդամենը 30%: Առցանց 830 միլիոն երիտասարդներից 320 միլիոնը (39%) ապրում են Չինաստանում և Հնդկաստանում: Աֆրիկայում, Ասիայում և Խաղաղ օվկիանոսում ապրող 10 երիտասարդներից մոտավորապես 9-ը չեն օգտագործում Ինտերնետ (ICT Facts and Figures 2017):

Աշխարհի երկրների երկու երրորդում համացանցից օգտվող տղամարդկանց մասնաբաժինն ավելի բարձր է, քան կանանցը: Միակ տարածաշրջանը, որտեղ համացանցից օգտվող կանանց տոկոսը ավելի մեծ է քան տղամարդկանցը, Ամերիկան է, այսինքն, այն երկրներում, որտեղ բարձր են գնահատում գենդերային հավասարությունը բարձրագույն կրթության ոլորտում:

Ֆիքսված հեռախոսակապի բաժանորդագրությունների թիվը զարգացած և զարգացող երկրներում կազմում է համապատասխանաբար 463 և 497 միլիոն 2018թ., ընդ որում այդ թիվն աստիճանաբար նվազում է: Բաժանորդագրությունների քանակը անփոփոխ է մնացել թույլ զարգացած երկրներում՝ 8 միլիոն բաժանորդագրություններ 2005-2018թթ. կտրվածքով:

Ֆիքսված կապի բաժանորդագրությունների թվով առաջատար են Ասիան և Օվկիանիան: Ամերիկայում և Եվրոպայում ֆիքսված բաժանորդագրությունների թիվը 2005-2018 թթ. նվազել է՝ 300-ից հասնելով մոտ 240 միլիոնի: 100 միլիոնից ցածր ցուցանիշ արձանագրվել է ԱՊՀ և արաբական երկրներում, ամենից քիչ բաժանորդագրությունների թվաքանակ առկա է Աֆրիկայում (2018 թ.-ին՝ 10 մլն.):

Ֆիքսված բաժանորդների քանակը 100 բնակչի հաշվով 2005-2018թթ. նույապես շարունակում է նվազել ամբողջ աշխարհում: Հատկանշական է, որ չնայած ֆիքսված բաժանորդագրությունների ընդհանուր քանակով առաջատար է Ասիան և Օվկիանիան, այնուամենայնիվ 100 բնակչի հաշվով բաժանորդագրությունների քանակով առաջին հորիզոնականը զբաղեցնում է Եվրոպան, այնուհետև Ամերիկան և ԱՊՀ երկրները: Ասիան և արաբական երկրները գրեթե հավասար են այս ցուցանիշով (2018 թ.-ին՝ համապատասխանաբար 8.8 և 7.7): Բնականաբար այս ցանկը եզրափակում է Աֆրիկան (ITU, Statistics):

Ամբողջ աշխարհում 2018թ.-ին բջջային հեռախոսակապի բաժանորդների քանակը գերազանցել է 8 մլրդ: Զարգացող երկրներում այս թիվը բավականին արագ աճում է (6545 մլն 2018 թ.), սակայն թույլ

զարգացած երկրներում աճը աննշան է 743 մլն 2018թ.), իսկ զարգացած երկրներում այն կայուն է (1616 մլն):

Ասիայում և Օվկիանիայում բջջային հեռախոսակապի բաժանորդագրությունների թիվն ամենից շատն է, 2018թ. գերազանցելով 4500 մլն., իսկ Ամերիկայում է այս ցուցանիշը հատել է մեկ միլիարդը: Եվրոպայում այն կազմել է 815 միլիոն, մինչդեռ արաբական և ԱՊՀ երկրները հետ են մնում բջջային բաժանորդագրությունների թվաքանակով:

100 բնակչի հաշվով բջջային բաժանորդագրությունների թվաքանակով 2005-2018թթ. առաջատար են եղել զարգացած երկրները: 2018թ.-ին ամբողջ աշխարհում 100 բնակչին բաժին է ընկնում 107 բջջային հեռախոսակապի բաժանորդագրություն (ITU, Statistics):

Ֆիքսված հեռախոսակապի բաժանորդագրությունների թվի անկումը կարելի է կապել բջջային հեռախոսակապի զարգացման և հարմարավետության հետ: Բնականաբար սա կապված է նաև համացանցի և OTT խաղացողների առկայության հետ, որոնք հեռահաղորդակցությունն ավելի մատչելի են դարձնում: 2018թ. դրությամբ ֆիքսված հեռախոսակապի բաժանորդների թիվը շուրջ 8.7 անգամ պակաս է բջջային հեռախոսակապի բաժանորդագրությունների թվաքանակից:

Շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրություններն ամբողջ աշխարհում 2018թ. գերազանցել են 5 միլիարդը: 2009 թ.-ից այն կտրուկ աճ է գրանցել աշխարհի բոլոր երկրներում, այդ թվում՝ թույլ զարգացած: Շարժական լայնաշերտ բաժանորդագրությունների թվաքանակով Ասիան և Օվկիանիան կրկին առաջատար են: Նրանց հաջորդում են Ամերիկան և Եվրոպան: Աֆրիկան և արաբական երկրները գրեթե հավասար են, իսկ ԱՊՀ-ն ամենից քիչ բաժանորդագրություններն ունի:

100 բնակչի հաշվով շարժական լայնաշերտ բաժանորդագրությունների թվաքանակով առաջատար են զարգացած երկրները (111,2 2018թ.), զարգացող երկրներում այդ ցուցանիշը հավասար է 61-ի (ITU, Statistics):

Աշխարհում ֆիքսված լայնաշերտ ինտերնետ բաժանորդագրությունների թիվը գերազանցել է 1 միլիարդը 2018թ., ընդ որում թույլ զարգացած երկրներում բաժանորդագրությունների թիվը կազմել է 14 միլիոն: Ասիան և Օվկիանիան կրկին պահպանում են իրենց առաջատար դիրքը: Եվրոպան և Ամերիկան գրեթե հավասար են: Նրանց հաջորդում են ԱՊՀ և արաբական երկրները, իսկ այս ցանկն եզրափակում է Աֆրիկան:

Ֆիքսված լայնաշերտ բաժանորդագրությունների թվաքանակը 2005-2018թթ. աստիճանաբար աճել է աշխարհի բոլոր երկրներում: Ամբողջ աշխարհում 2018թ. 100 բնակչին բաժին է ընկել 14.1 բաժանորդագրություն (ITU, Statistics):

100 բնակչի հաշվով ֆիքսված ինտերնետ բաժանորդների թվաքանակն ամենից մեծն է Եվրոպայում, այնուհետև Ամերիկայում և ԱՊՀ երկրներում: Այս երկրներին հաջորդում են Ասիան և Օվկիանիան: Արաբական երկրներում 2018թ.-ին այս ցուցանիշը կազմել է մոտ 5.1: Աֆրիկայում այն բավականին ցածր է՝ 0.6:

Չնայած, որ ֆիքսված ինտերնետ բաժանորդագրությունները նույնպես աճում են, ինչպես և շարժականը, սակայն ֆիքսված լայնաշերտ բաժանորդագրությունների թիվը մոտ հինգ անգամ ավելի պակաս է, որը պայմանավորված է շարժական ինտերնետի ավելի հարմարավետ լինելու հետ: Ի վերջո այն լինելով շարժական՝ հնարավորություն է տալիս միանալու համացանցին ցանկացած վայրից, ինչը անհնար է ֆիքսվածի դեպքում:

2018թ. տվյալներով աշխարհի տնային տնտեսությունների 48.3%-ը ունի համակարգիչ: Զարգացող երկրներում այդ ցուցանիշը բավականին ցածր է՝ 36.3%, թույլ զարգացած երկրներում՝ 8.5%: Զարգացած երկրներում 2018թ. դրությամբ տնային տնտեսությունների 83.2%-ը ունի համակարգիչ:

Եվրոպայում տնային տնտեսությունների գրեթե 80%-ը ունի համակարգիչ, և այս ցուցանիշով Եվրոպան բացարձակ առաջատար է: Նրան հաջորդում են ԱՊՀ երկրները (70.1% 2018թ.) և Ամերիկան (64.5% 2018թ.): Բավականին ցածր ցուցանիշ է առկա Աֆրիկայում՝ 9.2% (ITU, Statistics):

Ամբողջ աշխարհի տնային տնտեսությունների 57.8%-ը ունի ինտերնետ հասանելիություն 2018թ. դրությամբ: Զարգացած երկրներում այդ ցուցանիշը հավասար է 85.3 %, իսկ զարգացող երկրներում՝ 48.3%:

Եվրոպայում 2018թ.-ին տնային տնտեսությունների 82% ուներ ինտերնետին միանալու հնարավորություն, ԱՊՀ երկրներում՝ 75.9%, Ամերիկայում՝ 70.9%, Ասիայում և Օվկիանիայում ու արաբական երկրներում՝ 50 %-ից մի փոքր ավել, իսկ Աֆրիկայում՝ ընդամենը 22%-ը:

Ամբողջ աշխարհում 2018թ. համացանցից օգտվողների քանակը կազմել է 3896 միլիոն, ընդ որում զարգացող երկրների օգտվողների քանակը ավել է զարգացած երկրների օգտվողներից 1 միլիարդ 840 միլիոնով: Թույլ զարգացած երկրներում համացանցից օգտվում է ընդամենը 200 միլիոն մարդ:

Չնայած, որ զարգացող երկրները ինտերնետից օգտվողների քանակով գերազանցում են զարգացած երկրներին, այնուամենայնիվ 100 բնակչի հաշվով առաջատար են զարգացած երկրները (80.9 2018թ.), իսկ զարգացող երկրները հետ են մնում 35.6-ով (ITU, Statistics):

Հեռահաղորդակցության շուկայի գլոբալ հասույթն ըստ տարածաշրջանների 2012-2019թթ. հիմնականում արձանագրել է աճ: Եվրոպայում 2019թ. այն կազմել է 277 մլրդ եվրո (292 մլրդ եվրո 2012թ.), Ասիայում և Օվկիանիայում՝ 404 մլրդ եվրո (334 մլրդ եվրո 2012թ.), Հյուսիսային Ամերիկայում՝ 294 մլրդ եվրո (261 մլրդ եվրո 2012թ.), Լատինական Ամերիկայում՝ 111 մլրդ եվրո (102 մլրդ եվրո 2012թ.), Աֆրիկայում և Միջին Արևելքում՝ 109 մլրդ եվրո (85 մլրդ եվրո 2012թ.) (Telecommunications services industry revenue by region 2012-2019):

Հեռահաղորդակցության առաջատար ընկերությունների հասույթը կազմել է. AT&T՝ 160 546 մլն դոլար, Verizon՝ 126 034 մլն դոլար, China Mobile Communications Corporation՝ 109 788 մլն դոլար, Deutsche Telekom՝ 85 816 մլն դոլար, Xfinity՝ 84 526 մլն դոլար, Telefonica Telecom՝ 59 588 մլն դոլար, Vodafone՝ 54 573 մլն դոլար, China Telecom՝ 54 297 մլն դոլար, America Movil՝ 51 632 մլն դոլար, Orange SA՝ 47 090 մլն դոլար (Top 10 Telecom Companies of the World 2018):

Հեռահաղորդակցության համաշխարհային շուկայի ծավալը, ներառյալ վճարովի հեռուստատեսությունը, 2019թ. հասել էր 1.63 մլրդ դոլարի՝ 2018թ. համեմատությամբ աճելով 0.8%-ով: Շուկայի կեսից ավելին զբաղեցնում էր բջջային կապը: Ֆիքսված կապի հատվածը 2019թ. կազմում էր հեռահաղորդակցության ծախսերի 21.7%-ը՝ գերարագ համացանցային ծառայությունների մեծ պահանջարկի պատճառով: 2015-2020թթ. անլար կապի ծառայությունների հատվածում ծախսերն աստիճանաբար աճել են՝ 820 մլրդ դոլարից հասնելով 917.8 մլրդ դոլարի: Կանխատեսվում է, որ 2020-2025թթ. ծախսերի աճը կհասնի մոտ 1020 մլրդ դոլարի:

Բացի այդ, համաշխարհային շուկայում ավելացել են նաև բջջային կապի գովազդի ծախսերը: Գովազդային ծախսերի աճ գրանցվել է 2015թ. սկսած. 2020թ. ծախսերը կազմել են 221214 մլն դոլար, և կանխատեսվում է, որ մինչև 2021թ. վերջը դրանք կհասնեն 250550 մլն դոլարի: Համաշխարհային շուկայում բջջային կապի գովազդի ծախսերի աճին զուգահեռ ավելանում է նաև բջջային հեռախոսների վաճառքը: 2007-2020թթ. վաճառքի ծավալներն անընդհատ աճել են՝ 2020թ. հասնելով 1571.22 միլիոն հատի և, ըստ կանխատեսման, 2021թ. կհասնեն 1589.2 միլիոն հատի (Ստեփանյան 2021:119-121):

« տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (S<S) ոլորտի ընդհանուր շրջանառությունը 2019թ. կազմել էր շուրջ 309,9 մլրդ. « դրամ, ակտիվ գործող ընկերությունների թիվը՝ 800, ընկերություններում ներգրավված աշխատակիցները՝ շուրջ 16.000 մասնագետ: 2020թ. SS ոլորտի աճը 2019թ. համեմատ կազմել է 2,8%: 2019թ. շուրջ 810 ընկերություն և անհատ ձեռնարկատերեր իրենց հաշվետվությունները ներկայացրել են էլեկտրոնային եղանակով՝ SS ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկատվական համակարգում:

